



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1892

Ա Պ Ր Ի Լ

1892 № 4

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

երես

1 ԱՐԱՄԽԱՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻՔ.	511	Վերջին խօսք
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՌՆ	515	Տիգրանուհի (գրամա):
3 ՄՈԶԽՈՒՐԱՐԻԶԷ, ԱԼ.	552	Էլիաս (վէպ):
4 ՄԻԹԱՐԵԱՆՑ, ԱՐՇԱԼՈՅՍ	566	Գաջ հովիւ (բանաստեղծութիւն):
5 ՍԵՆԿԵՐԻԶ, ՀԵՆՐԻԿ	567	Առանց զաւանանքի (վէպ):
6 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	593	Ախթամար (բանաստեղծութիւն):
7 ԲԱԼԱԳԵԱՆՑ, ՍԱՄՈՒԷԼ	597	Հրարուղիները:
8 ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ, ՏԻԳՐԱՆ	604	Գէորդ Բրանդէո:
9 ՍԱՐԳՍԵԱՆՑ, ՍԱՐԳԻՍ	619	«Նաղուբեանի բառարանը»:
10 Մ. Տ.-Ա.	634	«Պաւլոս Գաֆտանի քիմիան»:
11 ԼՈՒՍԻՆԻ.	638	Թեմակ, պատկ. ընտր. Թիֆլիսում:
12 Ֆ*.	643	Արտասահմանեան քրտնիկ:
13 ԵՍԵՄԵԱՆ	651	Օրէ ցօր:
14 ԽՄԲ.	657	Խմբագրութեան կողմից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1892

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1892

Ա Պ Ր Ի Լ

1892 № 4

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

1892

89400

ГОРЬКОЕ СЛОВО

ЧЕЛОВЕЧЬИ

В. М. РИЗ

1892

М. Д. РИЗ

Дозволено цензурою. Тифлисъ, 15 Апрѣля 1892 г.

Типографія М. Д. Ротиніанца. На Гол. просп. соб. домъ № 41.

ГОРЬКОЕ СЛОВО

2547

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այսօր վերջին անգամն է որ մենք առիթ ունենք կաթողիկոսական թեկնածուների առիթով խօսելու: Եւ զրուժ ենք այս տողերը միայն այն յոյսով, որ զեռ. ևս ժամանակը չէ անցել թեմերի հոգեւոր և աշխարհական պատգամաւորներին, որպէս նաեւ սինոդի և միաբանութեան ներկայացուցիչներին մեր վերջին խօսքը ասել կաթողիկոսական թեկնածուների մասին:

Բայց նախ ամիտփենք մեր մինչ այժմ ասածները այդ խնդրի վերաբերմամբ:

Ղեռ. ևս այն ժամանակ, երբ թեկնածուների խնդիրը միայն սաղմային զրութեան մէջ էր, երբ զեռ. ևս ոչ մի զիրք չէր որոշւած այլ և այլ թերթերի կողմից, մենք վստահացանք առաջին խօսքը արտասանել այդ խնդրի նկատմամբ, պարզ և որոշ յայտարարելով, որ, մեր կարծիքով, կաթողիկոսութեան համար՝ զրութեան բարձրութեան վերայ կանդնած մենք ճանաչում ենք միայն մի անձն՝ անգղուզական Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեանին («Մուրճ» 1891 թ. № 9):

Եօթ ամիս առաջ արտայայտած այդ կարծիքը ժամանակով ոչ միայն չը խախտուեց, այլ միայն աւելի ու աւելի ամրացաւ: Մեր այդ կարծիքը կատարեալ համոզմունքի ոյժ ստացաւ, և մենք այդ արտայայտեցինք սրանից չորս ամիս առաջ՝ առաջ բերելով նաեւ մեր հիմնական պատճառաբանութիւնները («Մուրճ» 1892 թ. № 1):

Նոյն այդ ժամանակ, երբ արքեպիսկոպոս Խրիմեանին կաթողիկոսական դահլի վերայ բազմած տեսնելու անհրաժեշտութիւնը մեր ընթերցողների համար արդէն բաւականաչափ շեշտւած էր, մենք մեզ թոյլ տուցինք այն անուշներին անցնել, որոնք ամենից առաջ մեր ուշադրութիւնն էին դրաւում՝ երկրորդ թեկնածու լինելու և քառանուն ցանկում տեղ. զրուելու նկատմամբ:

Այն անուշները, որ մենք կարծում էինք թէ ընտրողների ուշադրութեան համար ամենից շատ արժանիքներն են ներկայացնում, սոքա

էին՝ սրբ. Երեմիա եպ. Գալստեան, Արիստակէս եպ. Սեդրակեան, Մատթէոս եպ. Իզմիրլեան և Գրիգորիս եպ. Ալէաթճեան:

Այդ անունները տալուց յետ մենք դեռ ևս անցեալ յունւարին զրաժ մեր այդ յօդւածը վերջացրինք հետեւեալ տողերով՝

«Բայց վճռուել յօգուտ մէկի կամ միւսի, որպէս երկրորդ կաթողիկոսացուի, մենք այժմեայ ըոպէում չենք կարող: Գորա համար մեզ հարկաւոր են աւելի լիակատար տեղեկութիւններ, քան ունենք, մանաւանդ տաճկահայ եպիսկոպոսների նկատմամբ: Մի բան միայն աւելի հաստատ կարող ենք վկայել, որ ռուսահայ եպիսկոպոսներից նա, որը, համապատասխանելով մեր ծրագրի տեսակետին (Նրիմեանական ուղղութեան), ամենից շատ ժողովրդի կողմից պաշտպանութեան վերայ յոյս դնել կարող է, Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանն է»:

Այսպիսով չորս ամիս առաջ մենք մեր այն ժամանակ ճանաչած եպիսկոպոսների մէջ, որպէս երկրորդ կաթողիկոսացու, ծրագրում էինք Արիստակէս եպիսկ. Սեդրակեանի անունը, առանց սակայն որ խնդիրը մեզ համար այնքան պարզած համարէինք, որ վստահանալինք մեր այն ժամանակ լաւագոյն համարածին՝ որպէս անպայման երկրորդ կաթողիկոսացու տաջարկել:

Խնդրի ծանրութիւնը, այն պատասխանատուութիւնը որ ծանրանում է հրապարակախօսի ամեն մի խօսքի վերայ, չորս ամիս առաջ մեզ թելադրեցին այդ զգուշութիւնը բանեցնել և դրդեցին մեզ դէպի ուսումնասիրութիւնը և աւելի հիմնական կշռադատութիւնը, նախ քան վերջնական խօսք արտասանելը:

Այդ պահանջը, որ մի բարոյական մեծ պարտականութեան ծանրութեամբ մենք զգացել ենք, արդարացնելի էր. բայց, բացի դորանից, մենք զգում էինք մեզ լաւ դրութեան մէջ անաշու կերպով վերաբերւելու դէպի խնդիրը, մեզ հեռու զգալով ամեն ճշունւից և բազմիցս ապացուցած լինելով մեր ձգտումը՝ մարդկային հնարաւորութեան սահմաններում՝ օբեկտիւ կերպով վերաբերւելու դէպի առաջադրած խնդիրները, հեռու մղելով անձնական համակրութիւններով ղեկավարւելու ամեն մի կասկած:

Բայց օբեկտիւ լինելու համար անձնաւորութիւնների խնդիրներում, պէտք է ունենալ ղեկավարող միտք, որով առաջնորդւելով

միայն կարելի է այս կամ այն անձնաւորութեան գերազանցութիւն տալ:

Առանց պարզելու այդ ղեկավարող միտքը, ոչինչ նշանակութիւն չի կարող տրուել որ և է առաջարկին, եթէ այդ առաջարկը անուններից դուրս ոչինչ չի պարունակում:

Կաթողիկոսի անձնաւորութեան մէջ մենք որոնում ենք ոչ միայն սոսկ անհատական առաքինութիւնների, այլ և այն թէ ինչ զգացումներով ազդի և եկեղեցու գլուխը կապւած է իւր առաջնորդութեան յանձնւած ժողովրդի հետ: Ի նկատի ունենալով որ կաթողիկոսը լոկ անունի համար չէ, այլ դ որ ծ ու լ ն է ու լ թ ե ա ն համար է, մեզ շատ զբաղեցնում է այն խնդիրը, թէ որ անձնաւորութիւնները ամենից ընդունակն են մեր ժողովրդացին գործունէութեան գլխաւոր ոյժերի հետ սերտութիւն ունենալ, ժողովրդացին, հասարակական մոլորների և զգացումների արտայայտութիւնները ճիշդ չափերով ըմբռնել, հասկանալ, մարտել և վերարտադրել, և բաւականաչափ ինքնուրոյնութիւն ունենալ՝ նոցա հեղինակաւոր արտայայտիչը հանդիսանալու համար:

Կաթողիկոսը ըստ ամենայնի մի գործիչ է, առաջնակարգ գործիչ, և տարբերում է շատ ուրիշ ասպարէզներում գործողներից նրանով որ նա հրահանգող գործիչ է:

Եթէ այդ ճշմարիտ է—և ինչ կասկած որ այդ այդպէս է, -- հապա մեծ սխալ է կարծել թէ ամենայն հայոց կաթողիկոսը մի սոսկ աւանդապահ մարդ պէտք է լինի: Ամենայն հայոց կաթողիկոսը իրաւ որ մեծ աւանդների ունի պահպանելու, եկեղեցական կրօնական և ազգային իրաւունքների այն աւանդները՝ որ նաւաթմեայ օրէնսդրութեամբ նորա գերագոյն վերահսկողութեանն են յատկացրած: Բայց լոկ աւանդապահութիւնը չէ նորա պաշտօնը. և մենք ստորացրած կը լինենք կաթողիկոսի պատմական նշանակութիւնը, եթէ սորա շրջանալիները աւանդապահութեան սահմաններով շրջափակենք: Կաթողիկոսի գործունէութիւնը աւանդներ պահելու սահմաններից անցնում է՝ թէ մեր նախկին օրէնքներով, թէ ներկայ օրէնքներով և թէ ժողովրդի հասկացողութեամբ: Լոկ աւանդներ պահելով չէր որ հաշակեց Ներսէս V կաթողիկոսը, լոկ աւանդներ պահելու համար չէր որ ազգը 1884 թ. ընտրեց Ներսէս պատ-

րիարքին: Այդ հասկանալի է ամենքին: Ամեն անգամ, երբ կայ մի աջնալիսի անձն, որը լաւագոյն գործունէութեան զրաւականներ է տալիս, ազգը դէպի նա է ուղղում իւր հայեացքները: Աւանդապահութեան կարողութիւնը կաթողիկոսի համար յամենայն դէպս անհրաժեշտ է ունենալ, որպէս միակ միութարութիւն ի դէպս անգործութեան. բայց այն, ինչին ձգտել է միշտ ազգի լուսամիտ մասը, այդ՝ լուսաւոր գործունէութիւնն է այն իրաւունքների սահմաններում, որ յատկացրած են կաթողիկոսութեան:

Եւ ահա հէնց դորա համար է կարևոր կաթողիկոսի անձնաւորութեան համար որ նա իւր մէջ անձնաւորացնէ դէպի գործունէութիւնը մղող ուղղութիւն, և դորա համար է որ նա իւր անցեալով պէտք է երևան հանած լինի ընդունակութիւն՝ աւօրէական հոգսերից աւելի բարձր ի դէպսներ ըմբռնելու և ի դէպսական նպատակներով զեկաւարելու նոյն իսկ գործնական աւօրեայ խնդիրներում:

Ահա այս տեսակէտից է որ Խրիմեանի թեկնածութիւնը ինքնաբերաբար առաջարկում է ազգի քէնին, և, հէնց այդ տեսակէտիցն է, որ պէտք է զերազանցութիւն տալ՝ իբր երկրորդ թեկնածուի՝ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին:

Մինչ վերջնական օրը մենք մեզ ազատ էինք պահել երկրորդ թեկնածուի մասին դրական առաջարկութիւն անելուց, միշտ մտածելով որ մեր տեղեկութիւնների թերութիւնը միւս թեկնածուների վերաբերմամբ բաւականաչափ չի արդարացնում մեր վստահութիւնը դրական առաջարկութիւններ անելու: Այդ պատճառով մենք միանգամայն պաղարիւն կերպով լսում էինք բոլորը, ինչ բերանացի և թէ մասնաւոր նամակներով կա՛մ տպւած խօսքով այս վերջին ամիսները մեր գիտութեանն էր հասնում բոլոր թեկնածուների մասին: Բայց, ամեն ինչ կշռելով, մենք այսօր չենք կարող չը խոստովանել, որ մեր զգոյշաւորութիւնը միմիայն մեզ աւելի համոզեցրեց՝ որ, ներկայ թեկնածուների մէջ, Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեանից յետոյ՝ Արիստակէս եպ. Սեդրակեանին քէն տալով ազգը լաւ ընտրութիւն արած կը լինի:

ԱՌԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

ՏԻՓՐԱՆՈՒՀԻ

պատմական դրամա հինգ արարւածով

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

(Շարունակութիւն և վերջ 1)

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐԻԱԾ

ԵՐԵՒՈՅԹ I

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ, ՄԱՐԴՊԵՏ

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ (մանեւոր)

Ողջնոյն, սիրելիս: Ո՛ւր է Թագաւորը:

ՄԱՐԴՊԵՏ

Բարև՛, յարգելի:

Դուք հիւանդ էիք, չէիք երևում:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Ո՛չ, հիւանդ չէի: Ո՛ւր է Թագաւորը:

1) Տե՛ս «Մուրճ» N 1, 2, 3.

ՄԱՐԴՊԵՏ

Խընճոյքումն է նա:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Խընճոյքումն է նա:

ՄԱՐԴՊԵՏ

Խընճոյքումն, այո:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Ի՞մ վերադարձըս

Հաղորդիր նոցա:

ՄԱՐԴՊԵՏ

Զոյգ աչքիս վերայ: (Գնում է):

ԵՐԵՒՈՅԹ II

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ (մտնելով)

Երանի հիւանդ պառկած լինէի
 Ես այն չար ժամին, որ այնքան դժուար
 Յանձնարարութիւնն ինձ վերայ չընկներ:
 Ի՞նչ երեսով այժմ նայեմ նոցա երեսին:
 Մեր ծերերըն էլ ջահելացել են,
 Էլ չեն համբերել, միամտաբար
 Իրանց տւել են խըրախճանների
 Եւ հանգիսաւոր օրը դեռ չ'եկած,
 Վաղօրօք ահա
 Կատարում են մեծ տօնախմբութիւն.
 Արդէն լիայոյս են նոքա, շուտով
 Նոցա առաջին խորհրդակիցը,
 Ինչպէս զօրապետ մի քաջամարտիկ,
 Կը վերադառնայ խընդադէմ, պայծառ,
 Յաղթութեան դրօշն ծածաննելով...
 Ահա գալիս են...

Երանի այդպէս զուք հանդիպէիք
Մեր յաղթանակին, բայց ոչ թէ անարգ
Այս օրհասական մեր սև աղէտին...

(Մտնում է Աթաշակը խորհրդակիցների հետ. թագաւորը մօտենում է 1-ին Խորհրդակցին, որ չէ համարձակւում գլուխը բարձրացնել. Աթաշակը երկար և լուռ նայում է նորա վերայ, և նորա պաշտառ դէմքը հետզհետէ մռայլ և լուրջ կերպարանք է ստանում. Բոլորեքեան նախազգում են աղէտը. Երկիւղալից խորին լռութիւն):

ԵՐԵՒՈՅԹ III

ԱԺԴԱՀԱԿ, ԽՈՐՀՐԴԱԿԻՅՆԵՐ

ԱԺԴԱՀԱԿ

Դէ խօսի՛ր տեսնեմ:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Կարո՞ղ թագաւոր...

ԱԺԴԱՀԱԿ

Աչքերիս նայիր: Ինչպէս տեսնում եմ,
Դատարկ ու բոշ ես դու վերադարձել,
Որ համարձակւում էլ չես պարզ աչքով
Երեսիս նայել:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Կարո՞ղ թագաւոր...

ԱԺԴԱՀԱԿ

Ըսպասի՛ր մի քիչ: (Գահը բարձրանալով). Ամբողջ մարմինըս
Դու դող գըձեցիր, անխիղճ ալեւոր.
Իմ հոգու ուրախ տըրամադրութիւնը
Դու լեղի դարձրիր: Նախաըզգում եմ
Ի՞նչ պիտի գուժես: Որքանն անբախտ եմ,
Որ քեզպէս անպէտք ծերունիներ են
Մերձաւորներըս... Դէ կըռռան, տեսնեմ,
Ինչպէս ընդունեց քեզ ան տտելին:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Կըծու քըրքիջով և դառն հեգնութեամբ
Եկան իմ առաջ, կարող թագաւոր:

ԱՃԴԱՀԱԿ

Կարող թագաւորըն աչքըդ հանէ,
Անիրան ծերուկ. դու այդ ի՛նչ արիր:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Իմ բարի արքայ, մազի չափ անգամ
Էլ մեղապարտ էք թո խոնարհ ծառան.
Բոլորըն արդէն յայտնի էր նոցա...

ԱՃԴԱՀԱԿ

Անիծեալ լինիս: Ինքըդ ես անշուշտ
Մառնել ինձ և քեզ և մեզ ամենիս,
Երկչոտ նապաստակ: Գոնէ այդ այծի
Երկայն մօրութիցդ էլ ամաչէիր:
Ամեն մի խօսքըն արտասանելիս՝
Դուցէ հինգ անգամ կակազել ես դու
Եւ դողդողացել, վախկոտ ծերունի:
Դու իմ հաւատը ոտնակոխ արիր,
Ապերախտ, անբան: Իմ շընորհներն
Դու գետին տւիր: Բոլորից աւել
Քեզ էի սիրում, յարգում, մեծարում,
Քեզ եղբօր նըման փայփայում էի:
Դու իմ առաջին բարձակիցըն էիր
Խըրախճաններում... և անցեալ անգամ,
Երբ յաջողութեամբ դու կատարեցիր
Իմ պատւերները, դու լոռացել ես
Ի՛նչ ի՛նչ ընծաներ քեզ պարգևեցի...
Քեզ լիակատար իրաւունք տւի
Նըստել ու պառկել իմ ներկայութեամբ,
Թոյլատրեցի ծերունուդ վերան

Կըրել ըսպիտակ այդ ժապաւէնը,
 Թագաւորիդ հետ հաւասարապէս,
 Եւ առաջինը համբուրել իմ այս
 Հողաթափներըս... Եւ այս ամենը
 Քեզ հերկք չեղան, երախտամոռաց,
 Խելակորոյս մարդ... էլ այսուհետեւ
 Աչքիս չերեւաս այդ ժապաւէնով:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Սպանիր ինձ, տէր:

Այդ ոտներիդ տակ ինձ մատաղ արան,
 Միայն լըսիր իմ ասելիքըս:
 Թո՛ղ գետին մըսնեմ, մի հատիկ օրում
 Թո՛ղ զըրկեմ բոլոր իմ ծաղկահասակ
 Զաւակներիցը, եթէ մեղսակից
 Լինեմ այդ գործին: Ես մեղաւոր չեմ:
 Ո՛հ, ամենեւին ես մեղաւոր չեմ:

ԱԺԴԱՀԱԿ

Ապա այս բան էր, որ գըլխիս եկաւ...
 Հիմա ինչ անեմ:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Առաջին խօսքը,

Որ ես լըսեցի նոցա բերանից,
 Այդ սովորական «ողջոյնը» չէր. ո՛չ —
 Այլ «բարեւ եկար անմիտ խըրաւիլակ», —
 Ահա թէ ինչպէս ինձ ընդունեցին:
 Հէնց այդ րոպէից կասկածանք ընկաւ
 Իմ սըրտում, արքայ. ես բոլորովին
 Շըշմած մընացի: Այնքան երկզիմի,
 Խորհրդաւոր էր Տիգրանի ասած
 Ամեն մի խօսքը, որ եթէ մի ելք,
 Մի հընար լինէր, ես իսկոյն և եթ
 Եւ կը դառնայի՝ առանց յայտնելու

Մեր հըրաւէրը: Մեր տեսակցութեան
 Ամբողջ միջոցին կասկածանքներըս
 Կամ աճում էին ու զըլխիս զարկում,—
 Ասես կատաղած ծովի ալիքներ
 Լինէին նոքա, —կամ էլի հանդարտ
 Անդըրադառնում: Կարող թագաւոր,
 Ով լինէր իմ տեղ, որ այդ բոպէին
 Չը կորցընէր իրան, և կէս չը լինէր
 Նորա խեղճ հողին: Միայն ես էի,
 Որ կարողացայ ձեռնալ անդէտ,
 Առ ոչինչ զընել նոցա յանդուգըն
 Վիրաւորանքը և մինչև վերջը
 Անյողգողդ մընայ...

ԱԺԳԱՀԱԿ

Այդ թող, այլ պատմի՛ր
 Յետոյ ի՞նչ եղաւ: Անէծք հայուհուն...

ՀԱՐՊԱԳ (առանձին)

Չարածըճի սիրտ, ի՞նչ ես թըռչկոտում
 Ուրախութիւնից. պարելու միջոց
 Դու զեռ շատ ունիս:

1-ին ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Հաղորդելիքս... պէտք է տեսնէիք
 Թէ ինչեր արին: Անէծք, յիշոցներ,
 Նըզով, հայհոյանք զըլխիս թափւեցին...
 Երդում եմ, արքայ,
 Իմ թագաւորիս հըզօր անունով,
 Մեր այն դարանի ելեւջները
 Ամենաչընչին մանրամասնութեամբ
 Վաղօրօք արդէն գիտէին նոքա:
 Բաց ի՞նչ հրաշքով է այդ իմացել
 Դա խորհուրդըս է, տէր, որի մասին

Ես առժամանակ դեռ չեմ յանդիմանիլ
Բերանքս բանալ:

ԱԺԴԱՀԱԿ

Այդ իմ բանքս է՝
Մատնիչ թագուհուն հրապարակ հանել
Եւ պատժել նորան: Դու շարունակիր...
Քոյր ու եղբայրը երկու խընձոր են
Եւ երկուքն էլ մի ծառից կըտրած,
Միթէ չէ՞ յայտնի: Ինձ համբերութիւն,
Ինձ համբերութիւն... Ատելի կընոջ
Ես պիտի ձեւեմ... Դու շարունակիր:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Երբ ես իմացայ, որ աննրպասա ծուռ
Է հանգամանքը, իսկոյն կամեցայ
Ես վերադառնալ: Տեսնում եմ յանկարծ
Ինձ թոյլ չեն տալիս. «քեզ հարկաւոր է
Մի օր ըստասել. յանձնարարական
Պէտք է մի նամակ տանես արքայիդ»:
Ես էլ ի՞նչ անեմ — հակաճառելըն
Անհնարին էր: Եւ այսպէս ահա
Ես ճարահատեալ՝ գըլուխս քաշ արած
Հըպատակեցի նոցա հըրամանին:
Ես մտայ բանորը, ուր հրաւիրեցին
Ձեր ալևորին...

ԱԺԴԱՀԱԿ

Գըլխովին կորչեն
Հողի երեսից բոլոր հայերը...

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Հետեւեալ օրը ինչ դժուարութեամբ
ձանապարհ ընկանք: Բայց ամենևին
Անպատմելի է ինչեր կըրեցինք,

Մինչև դուրս դալինք անիրաւ տեղից,
 Փողոցների մէջ, գրեթէ ամեն
 Մեր քայլափոխում, հանդիպում էին
 Լըկաի խմբակներ, ծաղրածու խուժան,
 Լակոտներ անգամ—մի խօսքով,
 Բոլոր սըրիկաները և շան զարմերը,
 Որոնցով լեցուն է Արմաւիրը,
 Նոքա, ընկներով մեր ետեւիցը,
 Ճիշտ կապիկային խեղկատակութեամբ
 Սուր սուլումներով, չարածիժաղ, պիղծ
 Գողում-գոչումով մեզ քշում էին
 Մինչև ոստանի արւարձանները:
 Ամբողջ քաղաքը թընդում էր ուրախ
 Նւազածութեամբ և գուսանների
 Բամբռան ձայնով, և լըսում էին
 Բարձր «կեցցէ»-ներ—ողջ Արմաւիրը
 Կարծես տօնում էր ինչ և փառաւոր
 Տօնախմբութիւն: Բոլորի բերանին
 Պըտըսում էին «կեցցէ մեր Տիգրան,
 Կեցցէ անձնագորհ մեր Տիգրանուհին»:

ԱԺԳԱՀԱԿ

Տիգրանուհուն շուտ այստեղ կոչեցէք:
 Քո պատմութիւնը ահա պընդում է
 Իմ կասկածանքը: Դու շարունակիր:

1-ին ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Այս կերպ հազիւ հազ մենք ազատեցինք
 Այն աղմկալից մայրաքաղաքից:
 Բայց հազիւ թէ մենք շըրջապարիսպը
 Մեր ետեւ թողինք,—մեր առջև դարձեալ
 Բացւում է ահա մի նոր արհաւիրք:
 Արաքսի բոլոր շամբուտ ավերը,
 Մասիսի արձակ և լայնածաւալ

Բոլոր զաշտերը սեւացած էին
 Նորաժողով, թարմ զօրագընդերով
 Խըրոխտ համերգի ներդաշնակութեամբ՝
 Նոքա թըմբուկներն էին դափում
 Եւ ածում փողերը... Կարող թագաւոր,
 Անխուսափելի է պատերազմը...
 Երբ արագ արագ՝ մըրրկի նըման
 Սըլանում էինք մենք նոցա մօտով,
 Յըրտագին սառսուռ էր անցնում բոլոր
 Իմ ոսկորներին միջով —

ԱԺԴԱՀԱԿ

Ըսպասիր:

Ի՞նչ եղաւ կինը: Կոչեցէք շուտով:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Կարող թագաւոր, այժմ ընդունիր
 Այս գըրութիւնը: Սա կը վըկայէ
 Իմ հաղորդածըս:

ԱԺԴԱՀԱԿ

Կարդացէք, տեսնեմ:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՅ (Կարդում է)

«Անարժան փեսայիս, անարգ բարեկամիս եւ ուխտադրուծ
 զաշտակցիս...»:

ԱԺԴԱՀԱԿ

Երկինք ու զետինը վըկայ — այստեղ
 Արիւնհեղութիւն ես պիտի անեմ:
 Խըլացել էք դուք: Ի՞նչ անդունդ մըտաւ
 Այն անըզգամը: Կոչեցէք նորան:
 Այժմ եմ միացն ես զըլուխ գալիս՝
 Ինչ խորհուրդ ունէր այն հորիզոնը,
 Ուր բեւռում էր նա իւր աչքերը

Արևածագից մինչև երեկոյ:
 Այժմ հասկացայ, թէ ինչու էր նա
 Տառանդում այնքան պարզորոշ ասել
 Թէ մեզնից ում է առաւել սիրում—
 Իւր եղբօր թէ ինձ: Մենք ամենեքեան
 Կուրացած էինք մինչև այս րոպէն,
 Որ չը մերկացըրինք նորա կեղծիքը.
 Ո՞վ կը յանդրգնէր այս բանըն անել
 Բացի այն գոռոզ օտարուհուցը,
 Որ չէի ազգից և կախարչներից
 Է ծընունդ առած...

(Մտնում է Տիգրանուհին):

ԵՐԵՒՈՅԹ IV

ԱԺԴԱՀԱԿ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԽՈՐՀՐԴԱԿԻՅՆԵՐ

ԱԺԴԱՀԱԿ

Համեցիր այստեղ:

Մի աչքիս նայիր: Դէ հիմա լրսիր.
 Սա պիտի կարդայ սիրելի եղբօրդ
 Սիրելի նամակն: Ուշադրութիւն:
 Դու շարունակիր քո ընթերցումը:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՅ (կարդում է)

«Ոչինչ խորամանկութեան և խարդախութեան չը դիմես այլ
 ևս, Աժդահակ, վերադ անմեղութեան լոյս ձգելու համար. մեր
 նախկին կապերն այժմ կտրւած են, մեր բարեկամութեան հուրն
 հանգած մոխիր է դառած...»:

ԱԺԴԱՀԱԿ

Լըսում ես:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Այո:

ԱԺԴԱՀԱԿ

Լաւ լըսիր ուրեմն:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ (կարդում է)

«Աժդահակ, ոչինչ այլ ևս քեզ մնում չէ անելու, բացի մի բանից. ժողովրդ Գորգեր և շտապիր ինձ հանդիպելու, եթէ չես ուղղում, որ քո պալատի մէջ յանկարծուսու գլխիդ կանգնեմ: Մնաս բարով, մինչև մեր օրհասական ճակատամարտի օրը: Տիգրան, թագաւոր Հայոց»:

ԱԺԴԱՀԱԿ

Լըսեցիր դու, կին:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Լըսեցի, այո:

ԱԺԴԱՀԱԿ

Եւ լաւ լըսեցիր:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Շատ լաւ լըսեցի:

ԱԺԴԱՀԱԿ

Անառակ դու կին, այս քո բանը չէ:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Անառակ... Արքայ, արդեօք ինչ գործով

Այդ գրծուծ կոչման ես արժանացայ:

Ինձ կըշտամբելուց առաջ, թագաւոր,

Ձեր բարկութիւնը պիտի զըսպէիք:

Այժմ ես մի խօսք անգամ չեմ ասիլ

Այդ բանի մասին:

ԱԺԴԱՀԱԿ

Տեսնում էք սորան,

Այս երկայնահեր փուճ անզղամիւս...

Այս գայիսոնով, արեւը վըկայ,
 Ես կը ջախջախեմ սորա գըլուխը:
 Արիւն է կաթում իմ սըրտից, ո՞վ կին,
 Սարսիր ինձանից և որոշակի
 Ինձ պատասխանիր: (Առութիւն)

ՀԱՐՊԱԳ (առանձին)

Բզգոյշ եղիր, կին,
 Մազից է կախած քո զոյութիւնը:

ԱԺԴԱՀԱԿ

Ի՛նձ համբերութիւն, ի՛նձ համբերութիւն...
 Խոստովանւիր, կին, եթէ քո կեանքը
 Թանկ է քեզ համար: Մենք բոլորեքեան
 Կասկածում ենք քեզ, քեզ ամբաստանում:
 Դու ես քո եղբօր մեր զաղտնին յայտնել:
 Ծերունիներըս ամենեքեան էլ
 Ատելով ատում են անիրաւին.
 Սոքա չեն անիլ, չեն համարձակւիլ:
 Միմիայն դու ես, որ նորան այնքան
 Երկըրպագում ես, կարծես երկնային
 Ասուածըդ լինէր: Խոստովանւիր, կին,
 Հրամայում եմ քեզ թաղաւորական
 Իմ կարող խօսքով:

ՏԻՒՐԱՆՈՒՀԻ

Երբէք թաղաւոր:

Մինչդեռ քեզ համար պիտանի էի,
 Վերին եթերում էիք տեղ տալիս
 Եւ ինձ ովսաննա էիք դուք անում,
 Դեռ մի ժամ առաջ իմ ոտի տակն էր
 Ամբողջ Մարաստան. իսկ այժմ... այժմ,
 Մոռացման տալով և իմ ծագումը
 Եւ իմ պատիւը վիրաւորելով,
 Իմ բարձրութիւնից զահալիթեցիք

Դուք ինձ ճանճացին զարշելի տիղմը:
Ինձանից երբէք ոչինչ չէք լրսիլ
Այդ բանի մասին: Այդ բանի համար
Համր է լեզուս: Ոչինչ չը գիտեմ:

ԱԺԴԱՀԱԿ

Այս կամակորին
Ձեռքը քիչ է, երկինքը վրկայ:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Խօսիր, թագուհի...

ԱԺԴԱՀԱԿ

Լըռիր, ալեհօր,
Այսուհետեւ դա ձեր թագուհին չէ:
Այդ արտախոյրըդ գըլխիցդ հանիր,
Դու պիղծ արարած:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ (հանելով դնոմ է զահլ պատւանդանի վերայ)

Համեցէք, արքայ:

ԱԺԴԱՀԱԿ

Դու, դու կըրկնել տաս իմ հրամանը:—
Վերցըրէք սորան: Դուք կը բանտարկէք
Սորան զետնափոր մեր խաւար բանտում:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Օ'հ, մայր — Անահիտ:

ԱԺԴԱՀԱԿ

Եւ շըղթացակապ
Կը ձըգէք այնտեղ այս անիծեալին:
Թառամի'ր այնտեղ, տուպտի'ր այնտեղ,
Գոռո՞ղ արարած: Յամառութեամբըդ
Ահա ի՜նչ վիճակ դու վաստակեցիր.
Դու պիտի նեխուես, պիտի քայքայուես

Բորբոսնած հեղձիկ մըթնոլորդի մէջ:
 Յաւիտեան կարօտ դու պիտի մընաս
 Մի լոյս — արեւի, մի հանգիստ ժամի:
 Ընկերակիցներըդ կը լինեն միայն
 Զըզւելի որդներ՝ նազուք մարմնիդ մէջ
 Բազմութեամբ սերւած... Մի տեսնեմ ինչպէս
 Ես անգիտանում իշխանութիւնըս
 Աներկիւղ, հըպարտ կամակորութեամբ:
 Վերցըրէք սորան:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Կարող թագաւոր...

ԱԺԴԱՀԱԿ

Խոստովանւիր, կին, այլապէս փըրկանք
 Էլ չիք քեզ համար: Անողորբելի
 Է Աժդահակը:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Աւելի յամառ

Է Տիգրանուհին: Տարէք ուր կ'ուզէք:

ԱԺԴԱՀԱԿ

Տարէք ուր հարկն է (Տիգրանուհուն տանում են):

ԵՐԵՒՈՅԹ՝ Վ

ԱԺԴԱՀԱԿ, ԽՈՐՀՐԴԱԿԻՑՆԵՐ

ԱԺԴԱՀԱԿ

Անիծւես դու, կին.

Ինձ բոլորովին ուժաստատ արիւր:
 Բայց անըզգամը ինչ թալիսմանով
 Է իմաց արել, որ չենք իմացել —
 Ահա հանելուկը, ահա զարմանքը:

2-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Նա հաւատարիմ մարդիկ կ'ունենար
 Ծառաների մէջ, մեծափառ արքայ,
 Եւ կարծում եմ ես, որ հարկաւոր է
 Հարց ու փորձ անել:

ԱԺԳԱՀԱԿ

Միթէ՞ մի այլ անձ
 Կարող էր գըտնել իմ ապարանքում,
 Որ այդ յանդըգնէր... (Երևում է 6-րդ Խորհրդակիցը):
 Այս ո՞վ է. ահա — սա էլ մոլորած
 Քայլով է գալիս: Իմ մեծ ասուածներ,
 Այս ի՞նչ կըրակ էք իմ գըլխին թափում:

ԵՐԵՒՈՅԹ VI

ՆՈՔԱ Է 6-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

ԱԺԳԱՀԱԿ

Ո՛ւր է մեր լակոտը:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Ձեր այն լակոտի
 Առաջնորդութեամբ, կարող թագաւոր,
 Ամբողջ Պարսկաստան ոտի է կանգնել:

ԱԺԳԱՀԱԿ

Ոտի է կանգնել... Ամբողջ Պարսկաստան:
 Ախ, Հարպսդ, Հարպագ: Անի՛ճ եւ՛լ լինիք,
 Երազաբաններ...

6-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Երբ հաղորդեցի
 Ձեր ցանկութիւնը, թէ կամենում էք
 Տեսնել ձեր թուան, որին իբր շատ
 Կարօտել էք զուք, նա պատասխանեց՝

«Ես էլ եմ նոցնպէս սաստիկ կարօտել
Սիրելի պապիս և յուսով եմ ես,
Որ կ'արժանանամ շուտով ցանկալի
Նորա տեսութեան. և ահա ինչու
Ըշտապում եմ ես դէպի Եկբատան...»։

ԱԺԴԱՀԱԿ

Խօլամիտ, տըխնար երազաբաններ...
Իմ տէրութիւնը քար ու քանդ արին
Իրանց անիմատ մեկնութիւններով։
Յիմար լինիմ ես թէ այսուհետեւ
Հաւատ ընծայեմ նոցա խօսքերին.
Մեր աղէտալի այս պատահարին
Բընիկ պատճառը միայն նոքա են,
Միմիայն նոքա և ուրիշ ոչ ոք։
Ի՞նչ սարսափելի այն տեսիլները
Իբազործւում են ահա ճըշտօրէն,
Ամենաչընչին մանրամասնութեամբ։
Այսուհետեւ այլ ևս թող չը շըռայլեն
Իրանց կեղծ, շինծու իմաստութիւնը
Խորհրդաւոր, պերճ աչքակապութեամբ.
Ի՞նչ աչքից ընկան. նոքա իմ աչքում
Խաբեբաներ են և ուրիշ ոչինչ։
Եթէ չը տանեմ ես մեր վերջնական
Ճակատամարտը, երգում եմ, բոլոր
Իմաստալիներըս անցադադ, առանց
Այլեւայլութեան ցըցերի վերայ
Պիտի սեպանան։ Փնէ անիրաւներ,
Եթէ չարգալից ձեր գըլուխները
Բան չեն ըմբռնում, ապա ինչմէ էք
Մեկնում առարկած իմ երազները...
Սակայն ինչ անեմ, ճակատիս զուցէ
Այսպէս էր դըրած։

1-ին ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Սաղ կենաց արքաս: Միք յուսահատուիլ.
Մեզ նըման կըտրի՞ճ զինւորներ ունիք,
Ուրե՛քն ինչո՞ւ պիտի վըհատէք:

ԱԺԳԱՀԱԿ

Էլ մի՛ք դանդաղիլ, սիրելիներըս,
Գընացէք շուտով և ժողովեցէք
Բազմաթիւ զօրքեր, արքայի անւամբ
Քաջալերեցէք զինւորներին:
Էգուց առաւօտ կամ երեկոյեան
Պատրաստի արէք մի քանի զընդեր,
Որ կարողանանք մեզանից առաջ
Սահմանների մօտ նոցա ուղարկել.
Եւ ձեր բոլորի հըրամանատարը
Ես նըշանակում եմ այս իմ սիրելի,
Իմ քաջ Հարպազին: Դուք ամենեքեան
Հըլու հընազանդ կը լինէք սորան:
Այժմ զընացէք. Հարպազը մընաց:

1-ին ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Կարող թաղաւոր, կարծեմ աւելորդ
Ձեր լինիլ բընաւ ասուածներին էլ
Այսպիսի դէպքում օգնութեան կոչել:

ԱԺԳԱՀԱԿ

Այդ լաւ ասացիր: Այսօր չեմ կարող —
Ինձ վատ եմ ըզգում: Էգուց անպատճառ
Ես իմ պալատի տանիքի վերայ
Ձոհ պիտի բերեմ մեր առուածներին.
Քո քըրմերի հետ ներկայ կը լինես
Արարողութեան: Հիմա ազատ էք:

(Թաղաւորի ծիրանին համարելով բոլորեքեան հեռա-
նում են բացի Հարպազից):

ԵՐԵՒՈՅԹ VII

ԱԺԴԱՀԱԿ, ՀԱՐՊԱԳ

ԱԺԴԱՀԱԿ

Նըստիր, սիրելիս:

ՀԱՐՊԱԳ

Շընորհակալ եմ:

Այսպէս առաւել ես պարզ կը լըսեմ
Ինչ որ իմ տէրըն ինձ հըրամայէ:

ԱԺԴԱՀԱԿ

Սիրելի Հարպագ, պարտական մընաս
Թէ թագաւորիդ քինսպահ կարծես.
Ինչոր անախորժ եղած է մեր մէջ,
Բոլորըն այսօր մեծահոգութեամբ
Մուացման տըլի: Սիրելի Հարպագ,
Քեզ համար էլ լաւ ակնյայտնի է՝
Ի՛նչ օրհասական վիճակի մէջ է
Քո թագաւորը և հայրենիքը:
Այժըմ իմ յոյսը միմիայն դու ես:
Թէպէտ ինձ նըման դու էլ վըշտահար
Եւ ծերացած ես, և վեհ ճակատիդ
Ծաւլել են հաստ-հաստ խոշոր կընճիւղներ,
Սակայն ոչ տարիք, թէ ցաւ, թէ հոգսեր
Անգոր են եղել երկաթէ կուրծքըդ
Յաղթահարելու և քո յաղթանդամ
Թիկնաւէտ մէջքը կըռացընելու:
Ես հաւատտի եմ—
Մինչև այժըմ էլ քո մէջ կենում է
Առիւծային նոցն անվեհեր սիրտը,
Ինչպէս և առաջ, քո երիտասարդ
Բուռըն հասակում, և այդ խոր ընկած
Կրակոտ աչքերից առաջւայ նըման

Կայծեր են ցայտում, ասես խաւարում
Քարայրի միջից վազրի լոյս-աչքեր
Են փայլատակում: Թըշնամու ոյժը
Դու պիտի փըշրես, սիրելի Հարպազ:
Այսպէս չէ, ասան... Մօրուքըդ յետոյ
Կ'ողորես, Հարպանգ, աչժը՛ քնձ լըսիր:

ՀԱՐՊԱԳ (սթափեւում)

Ներքի քնձ, արքայ, ամենախոնարհ
Ներողութիւն է Ձեր ծաւան խընդրում
Արեգակնափայլ Ձեր Մեծութիւնից.
Մինչև աչժըմ էլ շարած եմ ես
Ծանըր, տըխրալի տըպաւորութեան տակ:
Մողորւած միտքըս մի բանի վերայ
Վաղար չէ անում, այլ նա անհամբեր
Թիթեռի նըման թըռչկոտում է միշտ
Մի առարկայից դէպի ուրիշը:
Ես անուշադիր էի մանաւանդ
Ձեր վերջին խօսքին, կարող թագաւոր:

ԱԺԳԱՀԱԿ

Ես ասում էի, որ դու կը փշրես
Թըշնամու ոյժը: Այնպէս չէ, Հարպանգ:

ՀԱՐՊԱԳ ԷՍ

Մեր աստուածների օգնութեամբ,
Այո, թագաւոր:

ԱԺԳԱՀԱԿ

Քո մի խոստումով,
Սիրելի Հարպանգ, սիրտըս շահեցիր:
Այսուհետև դու երկրորդ անձըն ես
Ինձանից յետոյ, դու իմ առաջին
Խորհրդակցանը, դու նախամեծար
Իմ բարձակիցը: Հի՛նա գըղջում եմ,

Որ այն անբանին քեզանից բարձր
 եմ գերադասել. այն փառքին, պատւին
 Արժանի չէր նա: Ըստպէս աշտուղ՝—
 Քեզ համար, Հարպագ, մի ընծայ բերեմ,
 Մի անգին ընծայ: Երկասցրի շըքեզ
 Մի սուր ես ունեմ. քեզ է պատկանում
 Նա աշտահետե: Ես շուտով կը գամ: (Գնում է)

ԵՐԵՒՈՅԹ VIII

ՀԱՐՊԱԳԷՍ (մենակ)

Գալարւիր դու, Օձ, ոտներըս լիղիր,
 Շըւնցա բըռնակալ: Բանըդ պըրծած է:
 Թէ զաւակիս էլ կենդանացընես—
 Ես չեմ փափկանալ, սիրտս չի կակղիլ.
 Իմ սիրտըն արդէն բիրդ քար է դառած.
 Նորան ընծաներ եւ արտասուքներ
 Զեն հալեցընիլ. միթէ՛ անձրեկից
 Կամ թէ սառ ձիւնից ժայռը կը հալի (մտնում է Աժդահակը)

ԵՐԵՒՈՅԹ IX

ԱԺԴԱՀԱԿ, ՀԱՐՊԱԳԷՍ

ԱԺԴԱՀԱԿ

Տեսնում ես, Հարպագ, ինչ հըրաշալի
 Մի սուսեր է սա: Ահա երախը.
 Ինչպէս փայլում է, քո պատկերըն էլ
 Ահա վերան է. հիացիր, Հարպագ.
 Պատեանին նայիր: Այս բոլորըն էլ
 Անգին քարեր են. տեսնում ես դու այս
 Երախակալը, տես՝ մի բիծ կամ գիծ
 Կարող ես գըտնել փըղոսկրի վերան:
 Ըսքանչելի՛ է... Առ սուրըդ, Հարպագ,
 Առ եւ հըրաշքներ զործիր սորանով:

ՀԱՐՊԱԴԷՍ (առնում է սուրբ)

Ո՛հ, անասելի քաղցր է ինձ համար
Այսպիսի անգին հետք ըստանալ —
Այն էլ արքայից: Հըրաշալի՛ սուր է,
ձիշտ որ հըրաշքներ սա պիտի գործէ:

ԱԺԴԱՀԱԿ

Շընորհակալ եմ,
Սիրելի Հարպազ: Այժմ՝ ըշտապիր
Դու պատրաստուելու: Իսկ ես... ես այնպէս
Յոգնած եմ արդէն և տըկարացած,
Որ իսկոյն և եթ կ'երթամ պառկելու (գնում է)

ԵՐԵՒՈՅԹ X

ՀԱՐՊԱԴԷՍ (մենակ)

Ո՛հ, ո՛չ, Աժդահակ, դու ընծաներով
Ինձ չես կախարդել, արդէն վըրէժըն
Ինձ կախարդել է: Ալեոր Հարպազն
Քեզանից պատուի — երբէք յաւիտեան:
Այսօր սիրում ես, որ էգուց դարձեալ
Անիծես դու ինձ: Շան բաղդըն այստեղ
Առաւել հաստատ և ապահով է,
Քան մեր վիճակը: Ճանաչում եմ քեզ.
Տէրութեան հիմքըն արդէն մաշեցիր.
Նա պիտի փըլլի, պիտի կործանւի,
Պիտ աւեր դառնայ և այնուհետև
Փըլատակների վերայ վերատին
Նոր, թարմ պետութիւն պիտի բարձրանայ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐԻԱԾ

Տեսարան Ա.

Հայոց զօրքի բանակը. ձիւնախառն հողմ. առաւօտ:

ԵՐԵՒՈՅԹ 1

ԵՐԿՈՒ ՊԱՀԱԿ ԶԻՆԻՈՐՆԵՐ

2-րդ ՊԱՀԱԿ

Հը', այս ցըրտերի հետ ինչպէս ես, տղայ:

1-ին ՊԱՀԱԿ

Ել մի' ասիլ, որ բաններս շատ վատ է: Եսպէս էլ բան կը լինի, աղբեր, որ մեր գլխին են գալիս, հսքան էլ նստել, սպասել կը լինի, որ մեզ են սպասել տալիս: Անտէր ձմեռն էլ եկաւ վրայ հասաւ, բուք ու բորան էլ վեր կացաւ... դրուստ մեզ ձիւնաթաղ անելու միտք ունեն, ասուած է վկայ: Ել թուփ ու ցախ չը թողինք դաշտերում, անտառում էլ ծառ չը մնաց որ չը կոտորէինք, բերէինք կրակ տալինք, մացառուտ տեղերը այս ափիս նման դժաց-րինք. վերջումն էլի մի բան չընկաւ մեր ձեռքը: Ջարդուելու ենք, աղբեր՝ մի անդամից ջարդուենք, շանսատակ լինենք. ջարդուելու չենք՝ շուտ թողնենք ու մեր բանին. գործին երթանք. մենք էլ ցաւ ու դարդ ունինք, մեր գլխի ճարը տեսնենք: Թէ չէ սա ինչ է, հսօր սպասեցէք, հզուց սպասեցէք. հսօր հզուց ղցելով հինգ ամիսն էլ կերանք, ցրտերն էլ եկան վրայ հասան, մեր ձեռն էլ հէչ մի բան չընկաւ:

2-րդ ՊԱՀԱԿ

Սրան մտիկ արէք, սրան: Մի հարցնող լինի—խեղճդ բանի հասնում է, ա մարդ, որ զլսիցդ մեծ մեծ բաներ ես դուրս տալիս: Մեր թագաւորիցն էլ շատ բան չը հասկանաս. երեւի հանգամանքները ծուռ են գնում, կամ մի ուրիշ պատճառ կայ, որ բանը զլուխ չի գալիս, չէ՞ Պահ, ինչ փշում է. էս վրանները տակն ու վրայ չ'անի, լաւ է:

1-ին ՊԱՀԱԿ

Ե', դեռ շատ ես ջանէլ:

2-րդ ՊԱՀԱԿ

Լեզուդ քեզ քաշիր, ասում եմ, թէ չէ կ'ասեմ, որ մեծիդ դէմ հակառակ բաներ ես խօսում:

1-ին ՊԱՀԱԿ

Մեծի դէմ ո՞վ է հակառակ բաներ խօսում, որ ասում ես. այ տղայ, երազումդ ես, ինչ է: Մենք ինչ իրաւունք ունինք մեծաւորի դէմ հակառակ բաներ խօսել. փառք Աստուծոյ, խելքներս զլինեցումն է, ես ջանիցս հօ ձեռ չեմ վեր առել: Իմ թագաւորը սաղ կենայ. ես ո՞վ եմ, որ նորա դէմ վատ կամ հակառակ բաներ խօսեմ. նրա եղնգի կեդսն էլ չեմ դառնալ: Ես մենակ էն էի ասում, որ մեր նստել սպասելուց օդուտ չը կայ և չի էլ լինելու. էս է իմ ասածս, թէ չէ...

2-րդ ՊԱՀԱԿ

Բաս մեր Տիգրանուհին, էն որ մութ բանտում ընկած էս հինգ ամիս է տանջւում հալ ու մաշ է լինում, էդ ոչինչ քեզ համար հա: Սրան մտիկ արէք: Անիծած երկրից բաս նա չը պիտի ազատուի: Նա, որ մեծ թագաւորական ցեղից է, էն տեսակ զրկանքներ, չարչարանք է քաշում, էլ մեզ եկածն ինչ, քեզ եմ հարցնում: Ախար էս էլ մի միտք արա է: Թող առաջ նա մի դայ, թագաւորն էլ միամուխ, մենք էլ միամուկնք, որ յետոյ մի ուրախ սրտով մենք էլ դուրս գանք ու ջարդ տանք անիրաւներին է: Պատերազմը դու հանաք բան ես իմանում, ինչ է. սա քո տեսած

աքլորակուիւր չէ, բարեկամ: Աչքերդ մի անգամ դեռ բաց ու խուփ
չարած, մին էլ տեսնում ես՝ տոթալով նետը սրտումդ ցցւեց, դու
էլ գետնին թաւալ-թաւալ ես գալիս: Նետն էլ հօ մեծի, պատկի
մտիկ չի անում: Թագաւորին էլ է վեր գցում, զինւորին էլ:

1-ին ՊԱՀԱԿ

Է՛հ, ի՞նչ ասեմ քեզ: Լաւ է կրակ անենք, տաքանանք:

2-րդ ՊԱՀԱԿ

Ես էստեղ բան եմ ասում, դու էլի քո էշն ես քշում: Մի
հասկացիր էլի, ախար դու էլ մարդ ես, մարդու որդի ես... Երւանդ
զօրավարը գալիս է, տեսնում ես:

(Մտնում են Երւանդ և մի քանի զօրավարներ):

ԵՐԵՒՈՅԹ II

ԵՐԻԱՆԴ, ԶՕՐԱՎԱՐՆԵՐ, ՊԱՀԱԿՆԵՐ

ԵՐԻԱՆԴ

Թագաւորը դեռ չէ արթնացել:

1-ին ՊԱՀԱԿ

Ինչպէս չէ: Նորին Մեծութիւնը արեւածաղին արթնացաւ և
մէնակ, առանց թիկնապահների, սոսնետ կողմը գնաց:

ԵՐՈՒԱՆԴ

Այս վառ եղանակի՞ն... Նորին Մեծութիւնը մնայլ, տխուր էր:

1-ին ՊԱՀԱԿ

Այո, մեր թագաւորը չափազանց մնայլ էր և անհանգիստ:
Նորին Մեծութիւնը մեզ վերայ մտիկ էլ չ'արաւ, ինչպէս սովորա-
բար նայում էր և ողջունում, այլ լուռ ու մունջ գլուխը քաշ
արած անցաւ մեր մօտով:

ԵՐԻԱՆԴ

Բայց դու հրտեղից գիտես, որ Նորին Մեծութիւնը սոսնետ
մօտ գնաց ճեմելու:

1-ին ՊԱՀԱԿ

Թագաւորը երբ շատ տխուր է լինում, միշտ այնտեղ է գնում:

ԵՐԻԱՆԴ

Այս օրւայ եղանակը բոլորիս էլ խրանեցրել է: Նորին Մեծութեան երևի նոյն բանն է տանջում, ինչի համար մենք այստեղ եկանք խորհրդակցելու:

ՄԻ ԶՕՐԱՎԱՐ

Այսպէս խմբով հէնց երթանք Թագաւորի մօտ:

ԵՐԻԱՆԴ

Ո՛չ, սպասէ՛ք, մինչև նա գայ: Պէտք է խանգարել... Ահա նա ինքը. ճիշդ, որ մռայլ է և քայլերը մոլորւած: Երևի մի որոշ եզրակացութեան գեռ է եկած Նորին Մեծութիւնը: Իսկ և իսկ այնպէս է քայլում, ինչպէս մի շաբաթ առաջ, երբ նա նոյնպէս վերադառնում էր սոսեսու մօտից, և մենք այնտեղ սպասում էինք նորան: (Մանում է Տիգրանը):

ԵՐԵՒՈՅԹ III

ՏԻԳՐԱՆ, ԵՐԻԱՆԴ, ԶՕՐԱՎԱՐՆԵՐ, ՊԱՀԱԿՆԵՐ

ՏԻԳՐԱՆ

Ողջո՛յն ձեզ:

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Ողջո՛յն:

ԵՐԻԱՆԴ

Զերըդ Մեծութիւն,

ես զարմանում եմ, որ անտանելի

Այս եղանակին գեռ զբօսնելու

Ախորժակ ունիք:

ՏԻԳՐԱՆ

Ես բոլորովին

Տարակուսած եմ, սիրելիներէ՛ր:

Զը գիտեմ ինքըս ինչ անեմ լաւ է,
 Իմ քոյրը չը կայ, տեղեկութիւն էլ
 Զը կայ նորանից: Բանդապետի տեղ
 Կարծես ահռելի վիշապ է հըսկում
 Մեր Տիգրանուհուն, որ ոչ մի ընծայ
 Կարողանում է կաշտել նորան...
 Իսկ ձմերային այս հողմերն էլ
 Ինձ ամենևին մոլորեցրին:

ՆՐԻԱՆԴ

Մտնենք տաղաւար, ողորմած արքայ,
 Եւ այնտեղ խօսենք: Դուք շատ դադրած էք:

ՏԻԳՐԱՆ

Ես կարծում էի, որ Տիգրանուհին
 Կ'ազատուի մի օր և այստեղ կը գայ,
 Եւ այնուհետեւ մենք էլ սիրտ առած
 Թէ շնամիների առաջը կ'ենենք:
 Իսկ այսօր յոյսըս ամպերում ծածկւած
 Արեգակի պէս աղօտացել է...

ՆՐԻԱՆԴ

Ողորմած արքայ,
 Նոյն խորհուրդըն է մեզ այստեղ բերել:
 Աղաչում ենք մենք—հըրամայեցէք
 Շուտով ըսկսել ճակատամարտը:
 Յետաձգելու էլ հընար չկայ.
 Կատաղի ցըրաւերն էլ ահա եկան
 Եւ դաշտերն էլ շուտով կը ծածկւեն
 Զիւնով. այնուհետեւ պատերազմական
 Անյարմարութիւն է առաջ գալիս:
 Ինչպէս պատմում են, անտանելի է
 Այստեղ ձմեռը. սառնամանիքը,
 Բուք ու բորաններ անսպակաս են միշտ
 Այս միջոցներին: Պաշարեղէնը

Մասակարարում են միշտ անկանոն,
Հանդերձեղէնի մեծ քանակութեան
Պահանջ կայ նոյնպէս: Ամենայն բանի
Կարիք և կարիք: Եւ այս բոլորի
Հետեանքները շատ բնական են:
Զօրքի արտունջը և զանգատները
Արդէն բացայայտ արտայայտում են՝
Բռնակից ըստէ սասականալով:
Իսկ Կուրուշն էլ վազուց է արդէն
Մեզ մօտիկացել և մեզ է մընում:
Շուտով նորանից
Պատգամաւորներ պիտի զան այստեղ
Ներկայանալու Ձերդ Մեծութեան
Մեր առաջիկայ գործերի համար:
Նրբի նըման պատճառներըն են
Ըստիպել նորան ճակատամարտը
Փութացնելու. մեր պարսիկները,
Ինչպէս յայտնի է, այնքան սովորւն չեն,
Որ կարողանան խիստ զըրկանքների
Երկար դիմանալ: Կարօղ թագաւոր,
Այս բընութիւնը հանգամանքի հետ
Համաձայնութեան դաշըն է կապել:
Այս մըւընչիւնը կարծես բասրելով
Նախատում է մեզ մեր այս քընէած
Եւ աններելի դրութեան համար:
Բոլորի զէմքին որոշ կարգում եմ
Միմիայն մի բան. «ըսկսենք շուտով
Ճակատամարտը». ամենայն կողմից
Մի ձայն է միայն ականջիս հասնում:
«Ըսկսենք շուտով ճակատամարտը»:

ՄԻԻՍ ԶՕՐԱՎԱՐՆԵՐԸ

Ըսկսենք, արքայ, քանի ուշ է զեւ:

ՏԻԳՐԱՆ

Բայց քոյրըս, քոյրըս... Մի՞թէ մենք նորան
Պիտի մոռանանք և բախտի բերման
Խըղճուկին յանձնենք: Բայց եթէ յանկարծ
Այն Աժդահակը ճակատամարտը
Թողնելով փախչի, Նկբատան գընաց,
Մի՞թէ կենդանի կը թողնէ նա դեռ
Մեր Տիգրանուհուն. նա պատառ պատառ
Կ'անէ իմ քըրոջ, իւր քէն ու մաղձը
Թըշառի զըլիսին միացն կը թափէ,
Ինչպէս կէս եղած ռխակալ մի օձ:
Ո՞ր մեղքի համար այս անասելի
Տառապանքները նա պիտի կրէ...

ՆՐԻԱՆԴ

Ձերդ Մեծութիւն, Ձեր մի սրխալը
Թող չը կաշկանդէ բիւրաւոր մարդկանց
Կորովի ձեռքերն, ու առաջիկայ
Մեր անելիքը թող չը տարտամի:
Միք թողնիլ այդպէս եռանդուն զործը
Դանդաղի նորից և հիւանդանայ.
Իմացի՛ր, արքայ, որ այս փափազը
Մեր այս քանիսի քըմահաճութիւն,
Կամքը չէ միացն, այլ իմ բերանով
Այժմ խօսում է անդիմադրելի
Անհրաժեշտութիւնը: Մի՞թէ, հընդամենաց
Մեր զըրկանքները մեր մի յանցանքը
Դեռ չը քաւեցին: Գովելի է, տէր,
Երբ յօժարկամ զօհաբերութիւն
Են անում անթիւ-անհամար մարդիկ
Մի անձի համար. բայց երբ չափազանց
Ծանրը են դառնում տառապանքները
Եւ զըրկանքները ըստխողովան, —
Այն ժամանակ, տէր,

Անդիմադրելի օրհասի առջև

Համր է լեզուն և ջանքն անգոր:

(Հեռից լսում են աղմուկ և ձայներ—«Լեյցե՛ Տիգրանուհի»): Տիգրանը և մերձաւորները զարմացած նայում են հեռու:—Վերջապէս երևում է Տիգրանուհին՝ ուրախ, բայց նիհար և մաշւած: Տիգրանը և Տիգրանուհին զրկախառնւում են:

ԵՐԵՒՈՅԹ IV

ՏԻԳՐԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԵՐԻԱՆԴ, ԶՕՐԱՊԵՏՆԵՐ

ՏԻԳՐԱՆ

Իմ անգլին քոյրիկ... այս ի՞նչ ես դառել.
 Ի՞նչ չար թալիսման քեզ կարողացաւ
 Այսքան փոփոխել: Ո՛ւր են քո աչքերն,
 Որ փայլում էին ինչպէս զոյգ աստղեր
 Երկնակամարում— օ՛ այժմ նոքա
 Խոր փոս են ընկել, աղօտացել է
 Եւ նոցա լոյսը: Դու աչքան առողջ
 Ամրակազմ էիր, իսկ այժմ հրքան
 Դու նիհար և թոյլ... Անգլին իմ քոյրիկ,
 Քո այդ ժլպիտը թէ իմանայիր
 Ո՛րքան ցընծութեամբ է լըցնում հողիս:
 Օ՛ երանի թէ պապանձէր լեզուս,
 Որ ճարտարախօս իմաստակութեամբ
 Քեզ չը յորդորէր զնալ և ընկնել
 Իմ արիւնհարբու թըշնամու գիրկը:
 Ասան, սիրելիս, պատմի՛ր, իմ հոգեակս
 Բոլոր տանջանքներն, որ դու կըրեցիր
 Քո եղբօր մեղքով...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Թանկագլին եղբայր,

Ինչո՞ւ վըշտացնե՛մ ես ձեր սրբօքը
 Անցած տանջանքի պատճառ թիւններով:

ՏԻԳՐԱՆ

Ո՛չ, ո՛չ աղաչում եմ ես, սիրելիս.
Պատմի՛ր և հոգին վրէժխընդրութեան
Կըրակով վառի՛ր, որ, ինչպէս կայծակ,
Ես Աժդահակի չար գըլխին ճայթեմ:
Ասո՛ւ — այն բանտը, ուր փակւած էիր
Խոնամ էր արդեօք, կամ թէ լոյս-արև.
Արդեօք թափանցում էր նորա ներսը.
Դէ խօսի՛ր, հոգեանկ, ես ըստասում եմ:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Խոնաւ, բորբոսնած ցուրտ էր այն բանտը,
Ուր փակւած էի: Հինգ ամբողջ ամիս
Կարօտ մընացի արեգակի ջերմ մի ճառագայթի,
Իմ կերակուրը — մի կտոր հաց էր,
Եւ իմ խըմիչքն էր մի բաժակ ջուր:

ՏԻԳՐԱՆ

Անէծք, բիւր անէծք Աժդահակի տան:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Անտանելի էր իմ բանտարկութեան
Սռաջին ամիսն: Ես կարծում էի
Թէ շուտով մահը վերջապէս կը գայ
Ինձ հանգիստ տալու: Բայց հետզհետեւ
Ես սովորեցի իմ մըթին բանտին:
Բայց իմ սև բանտը միայն մի հատ լոյս
էր լուսաւորում — դա իմ յոյսըն էր:
Եւ ես կենդանի էի միմիայն
Այդ սրացած յուսով:
Ինձ թըւում էր թէ պիտի գայ մի օր,
Երբ ես բանտից պիտի ազատեմ:
Եւ այն օրն եկաւ — շքնորհակալ եմ —
Ձեզանից, բարի, կարո՛ղ աստուծներ:

ՏԻՊԱՆ

Եւ մի՞թէ ամբողջ ձեր ապարանքում
Մի հատ սըրտացաւ, մշտերիւմ մի անձ
Չը կար քեզ հաճար:

ՏԻՊԱՆՈՒՀԻ

Ի՞նչպէս չէ, եղբայր.

Թագուհիների նախկին թագուհին,
Բարի Անոյշը, այնքան սըրտացաւ
Եւ զըթասիրտ էր, որ ամենայն օր
Բանտըն էր դալիս ինձ այցելելու:
Սիրելի եղբայր, դու չես հաւատալ
Թէ ո՞րքան անխիղճ և զաղանի սիրտ
Կարող է լինել կընոջ կըրծքի տակ.
Երբ արթուն եմ ես, յանկարծ տեսնում եմ—
Դուռը բաց եղաւ, և նա ներս մըտաւ.
Նա քըրքջում է, նա ծափ է տալիս .
Եւ չար ծիծաղում վիճակիս վերան:
«Հը, ասան տեսնեմ,—նա ծաղրում էր ինձ,
«Նախկին զմհրդ էր աւելի փափուկ
«Թէ այդ գեախնը...» Բայց լուռ էի ես.
Լուռ հըպարտութեամբ կամենում էի
Նա յաղթել նորան—բայց ունդ—ունայն:
Հաղիւ թէ ինձնից նա հեռանում էր,
Եւ զըռան փակը ձըղում էր ետից—
Իմ աչքերիցըս արտասուքները
Հեղեղի նըման դուրս էին թափւում:
Այնժամ յուսահատ կարտում էի
Նա իմ ձեռքերը և մանկան նըման
Հեկեկում, լալիս...

ՏԻՊԱՆ

Լըսեցէք սորան,
Բարի ասուածներ: Նա աղաւում եմ

Զեզնից մի հասա բան—ինձ միջոց տրւէք
 Աժդահակի չար, անըզգայ սիրտը
 Արիւնաթաթաւ ես ցցեմ իմ սուր
 Նիղակի ծալրից. և թող իմ քըրոջ
 Ա՛հն մի կաթիլ արցունքի համար
 Հարիւր Մեղացի լուռ գետին փռւեմ:
 Միմիայն այդժամ գուցէ հովանայ
 Իմ այրւած սիրտը:
 Սիրելիներդ՝ս, այսօր կը լինի
 Անվրէպ վախճան և ձեր անախորժ
 Խըստակեցութեան և իմ չարատանջ
 Երկար վարանման: Այսօր կը մաքրենք
 Բանակատեղին մեր վըրաններից.
 Իմ ժիր զինուորներ, կը ջանաք շուտով
 Պուք զինավառել հեծելազօրը
 Եւ հետևակը գընդերի բաժնել:
 Եւ կը հըրամայէք պատերազմական
 Փողերը հընչեն, թըմբուկները զարնեն:
 Բշտապիր, գնա մեր դաշնակցի մօտ
 Եւ յայտնիր նորան իմ այս վըճիռը:

Երւանդը գնում է: Լուում է փողերի հնչիւնը: Տիգրանը և Տիգրա-
 նուհին կամաց-կամաց հեռանում են:

Տեսարան Բ.

Բլուր. Աժդահակի և մերձաւորների տաղաւարները.
հեռւից աղմուկ:

ԵՐԵՒՈՅԹ V

ԱԺԳԱՀԱԿԻ ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐԸ

1-ին ԹԻԿՆԱՊԱՀ

Կանչիր Աժդահակին. էլ քնելու ժամանակ չէ:

2-րդ ԹԻԿՆԱՊԱՀ

Կարող թաղաւոր...

3-րդ ԹԻԿՆԱՊԱՀ

Գու՛՛՛՛՛, ա՛յ տղայ, պի՛նդ կանչիր, ձայնդ փոքր է ընկել, ի՛նչէ՛:
Շուտ արա՛:

2-րդ ԹԻԿՆԱՊԱՀ

Կարող թաղաւոր, արթնացէ՛ք, թըշնամիները յարձակել են...

1-ին ԹԻԿՆԱՊԱՀ

Այստեղ եկէ՛ք, տղերք. տեսէ՛ք Հարպաղը ի՛նչ է անում. Կու-
րուշի կողմն անցաւ, մատենիկ զունդը հետեւեց նորան...

(2-րդ Թիկնապահը մտնում է տաղաւարը):

ԱԺԳԱՀԱԿԻ ԶԱՅՆԸ (տաղաւարից)

Սաղաւարտս այստեղ տուր... նիզակս... այնտեղ է, շուտ զրահս
բեր, շուտ արա՛:

3-րդ ԹԻԿՆԱՊԱՀ

Մեր տունը քանդուեց, տղերք... Այս ի՛նչպէս են կոտորում:

(Մտնում է Աժդահակը):

ԵՐԵՒՈՅԹ VI

ԱԺԳԱՀԱԿ, ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐ

ԱՅ ԳԱՀԱԿ

Ինչո՞ւ շուտ չարթնացրիք:

1-ին ԹԻԿՆԱՊԱՀ

Մենք կանչում էինք, թաղաւոր, դուռը էինք, բայց...

ԱԺԳԱՀԱԿ

Պատմեցէք, տեսե՛մ այս լինպէս եղաւ, որ այսպէս յանկարծ,
այսքան անսկընկալ...

1-ին ԹԻԿՆԱՊԱՀ

Այստեղ կրակի մօտ կանգնած տաքանում էինք, յանկարծ լսում
ենք մի խուլ աղմուկ բարձրացաւ, յետոյ քանի դնաց նա աւելի և
աւելի սաստկացաւ. սկսեցին լսել լաց, կոծ, լարերի ճալթիւն,
վահանների կոփկոփիւն... նայում ենք—կոտորածը սկսել է, մե-
րոնց ջարդում են: Մերոնք էլ անհող, անդուման իրանց համար
ընկած էին վրաններում, դեռ բոլորովին անպատրաստ:

ԱԺԳԱՀԱԿ

Զօրքերս կէս եղան... անիծեմ չարպագ...
Ի՛նչ եկար գըլխիս, իմ պետութիւնըԴու կործանեցիր, անօրէ՛ն չարպագ...
Անթիւ գընդերը ջարդ ու փշուր արիք,Նըղոված Կուրուշ, ատելի Տիգրան...
Դեռ կենդանի՞ր են երազարաններս.Յըցերի վերայ նըստեցրէք նոցա,
Եւ խկոյն և եթ: Իմ Մարաստանը
Նոքա քանդեցին, աւերակ դարձրին...Կարո՞ղ ասուածներ, Ահուրա-Մանգա,
Օգնութեան հասէք, իմ Մարաստանը
Զեռքից դուրս եկաւ. մըտերիմներըս
Դաւաճանեցին, իմ հարազատըն
Իմ զիմաց ելաւ, ինձ բոլորեքեան

Մի՞թէ կարծում ես, որ ազատւելու
 Մի հընար ունիս. այլ ես երբէք
 Քեզ փըրկանք չը կայ: Ձարնըւիր տեսնենք,
 Թէ արքունական խիզախութիւնըդ
 Քեզ դեռ չէ թողել Հարպաղի նըման: (Ձարնում են):
 Ել մի՛ հեռանալ, կամենում էիր
 Արիւնըս թափել, արի՛ ու թափիր —
 Ահա այստեղ եմ: Աղէսի նըման
 Ի՞նչ ես կըծկեւի. զարնիր... այդպէս...
 (Տիգրանի հարածից Աժդահակը գետին է ընկնում):
 Թաւալւիր այդպէս, սողո՛ւ, ուխտադրուժ...
 (Հեռւից լսում են չաղթանակի ձայներ):
 Այստեղ բարձրացրէք, մեր Աժդահակը
 Վեր վեր է թըռչում և սլար է գալիս
 Ուրախութիւնից:
 Կեցցէ Հարպաղ, կեցցէ Կուրուշ, կեցցէ
 Մեզ զօրք... (Գալիս են Հարպաղը, Կուրուշը և զօրքերը)

ԲՈԼՈՐԵՔԱՆ

Կեցցէ Տիգրանուհի:

ԵՐԵՒՈՅԹ VIII

ՏԻԳՐԱՆ. ՀԱՐՊԱԳ. ԿՈՒՐՈՒՇ, ԶՕՐՔԵՐ:

ԿՈՒՐՈՒՇ

Մի՞թէ խեղճի մօտ մի հաւատարիմ
 Թիկնապահ անգամ չը մընաց այստեղ,
 Որ պաշտպանէր հէզ իւր թաղաւորին...
 Թըշանու ծերունի:

ՏԻԳՐԱՆ

Իսկ դու, իմ Հարպաղ.
 Դու ինչո՞ւ այդպէս տըխրեցիր յանկարծ,
 Կուրուշն ասենք մեղքանում է դեռ

Այլևոր պապին, որ անօգնական
Եւ լըքեալ մեռաւ: Դու հւմ ես խըղճում:

ՀԱՐՊԱԳԷՍ

Ինձ եմ ես խըղճում, որ պիտի մեռնեմ՝
Վրէժը սրբաւորուց. նա այսուհետեւ
Լեղի կը դառնայ, ինձ ներքուստ կ'ուտէ,
Ես տասը տարի սորան իմ որսըն
Էի համարում:

ՏԻԳՐԱՆ

Սիրելիներես

Ես ըշտապում եմ դառնալ Արմաւիր.
Մեղացիներից տասը հազարը
Պայմանաւորւած աւարս կառնեմ՝
Արաքսի ափում, Գողթան սահմանում
Բռնակեցընելու: Դուք մընայք բարով:
Ցանկանում եմ ես, որ Մարաստանի
Փըլատակներից բարձրանայ մի ճոխ
Կարող պետութիւն,
Այսուհետեւ ծաղկի և հարըստանայ
Գալիք բարգաւաճ օրերի համար:
Այս զոյգ մատանիս ձեզ ընծայ լինի,
Իբրեւ յիշատակ այս յաղթանակին
Եւ իբրեւ նըշան իմ խորին, անկեղծ
Շնորհակալութեան:
Ձեռքդ տնւր այստեղ, իմ Տիգրանուհի:
Սիրելի Երւանդ, մեզ առաջնորդի՛ր
Դէպի Արմաւիր:
(Տիգրանը զօրքի հետ գնում է, նւաղածութիւն.)

(ՎԱՐԱԳՈՅՐԸ ԻՋՆՈՒՄ Է)

Է Լ Ի Ս Օ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՁԵՁԵՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Ֆեդինսկուծին

ԱՄ. ՄՈՁԽՈՒԲԱՐԻՁԷԻ (ԿԱԶԲԵԳ)

Վրացերէնից թարգմ. Մկրտիչ Նաւասարդեան:

(Շարունակութիւն և վերջ ¹)

III

Այսպիսի միմունջով և սուգով մթնեցրին և նոյն միմունջ և սուգով զիմաւորեցին առաւօտեան արշալոյսին այն տանջւածները:

Վաժիան, ծնւած օրից, իւր կեանքում շատ նեղութիւններ կրած՝ սովոր էր համբերութեան, բայց այն գիշերը նա մի անասելի յուզւած և վրդովւած սրտով էր սպասում արեւի ծագելուն, որ կարողանար այն սարսափելի տեսարանից հեռանալ: Եւ ով կը լինէր այնպէս քարասիրտ, որ չը վշտակցէր այս ընդհանրական տագնապին, բացի այն զինւորներից, որ կարգւած էին գաղթողներին զսպած և անվրդով զրութեան մէջ պահելու համար:

Միմիայն նրանք էին զւարճանում, ծիծաղում և հանաքներ անում այս ժողովրդի անխօս նեղութեան վրա: Սովոր լինելով թա-

¹) Տես «Մուրճ» № 3:

փառելուն, հեռացած սեփական ծննդավայրից, տանից տեղից, բն-
տանիքից, սիրաները կոշտացած դէպի օտարների տագնապը, չէին
զգում և հասկանում թէ ինչի են իրանց զուխը մահու տալիս
այս պատճառն և ամեն տեսակ լաւութիւնով օժտած հայրենիքի
զաւակները: Սովոր լինելով քաշ զալուն և թափառելուն մի տեղից
միւս տեղ, զուրկ սեփական հաճոյքից ու կամքից և ուժի ազդե-
ցութեամբ ստրկացած, միշտ ուրիշների կամքի և ցանկութեան հա-
մեմատ ապրելու սովորածները կարծում էին թէ միւսներն էլ
իրանց պէտք է լինէին. և անընդունակ էին երևակայելու, որ ուրիշի
ցանկութեան և հրամանի համեմատ ապրելը ամենքի համար տա-
նելի չէ:

Արեւը դուխը բարձրացրեց և մօտակաջ անտառից լսում էր
բազմազան թռչունների դալլալիւիւ:

Զարթեց բնութիւնը և բոլոր շնչաւորները զովաբանում էին
նրա զօրութիւնը: Նոյն խկ ցօղը, որ ծածկել էր զմրուխտագոյն
դաշտը զարդարւած բազմուսանգ ծաղիկներով, խաղում էր արևիճա-
ռագայթների հետ և հազար տեսակ գոյն ընդունում:

Որքան էլ հրաշալի էին այս վայրերը, որքան էլ կարողանար
այս անարատ կենսալից պատկերը զարճացնել մարդուս սիրտը, այն-
քան աւելի էր թախիծով լցնում այս դաղթականներին և առաւել
զգալի դարձնում նրանց անբախտութիւնը:

Զարթեցին, ով որ կարողացել էր քնել, ելան տեղերից ամենքը
և դանդաղ քայլերով դիմեցին իրանց սայլերին և եղն ու զոմէշին,
որոնք այնտեղ և եթ մօտիկ արածում էին փոքր սղանների հսկո-
ղութեան տակ:

Նրանց մտածելու ընդունակութիւնը այն աստիճան թմրել,
թուլացել էր, որ ամեն մի քայլափոխին մոռանում էին թէ ուր
են դնում կամ ինչ էին կամենում անել: Հազար անգամ զուխը
շշմած որոնում էին սամին կամ սայլի մի այլ գործի այն ժամա-
նակ, երբ այն գործին ձեռին ունէին բռնած: Կամ թէ, բանի գնա-
լիս, մի անյայտ ոյժ կանգնեցնում էր, ընկղմում խորը մոռածման
մէջ և խողնում այնպէս տխրած մինչև այն ժամանակ, երբ որ և
է բարեսիրտ զրացու կամ հրամայող զինւորի ձայնը չէր հանի
նրանց ինքնամոռացումից:

—Անգոր, հիմա արդէն կը գնամ «Ջաուկ», ասեց Վաթիան լուսադէմին:

—Լաւ:

—Մինչև դու կը գաս այնտեղ, ես ամեն բան կը պատրաստեմ խնդրում եմ:

—Լաւ:

—Արդեօք չը տեսնէի Ելիսօին... ասեց նա անհամարձակ:

—Ելիսօն հազիւ քնեց սալլում, մի՛ զարթեցնի, մեղք է: Վաթիան այլ ևս չը պատասխանեց, ծանր ձի քաշեց և քայլերը ուղղեց դէպի Վլադիկաւկազ, որտեղ զիմեց ուղղակի կառավարին:

Բաւական երկար սպասելուց յետոյ «մեծ պարոն» կառավարիչը հազիւ արժանացրեց իւր տեսութեանը և սենեակից՝ դուրս գալուն պէս հարցրեց Վաթիային, որ գղակը հանել էր.

—Դուն ո՞վ ես:

—Ես մոխեցի իմ, ցաւդ առնեմ:

—Ի՞նչ է ասում, հարցրեց այն տեղ մօտիկ կանգնած թարգմանին: Սա էլ մոխեցու խօսքերը թարգմանեց:

—Ի՞նչ է ուզում... Անպատճառ գողութեան համար են ձեռքակալել այս աւազակին... Ա՛խ, Աստուած, երբ կը լինի, որ հեռացնենք մեղանից այս անհանգիստներին:

—Ես էլ հօ լեռնեցի եմ, գողութեան մասին ինձ չեն կարող բռնել... պատասխանեց հպարտաբար Վաթիան, որ քիչ ու միչ հասկանում էր ռուսերէն:—Ես գործի համար եմ եկել:

—Ի՞նչ գործ ունես, ասա շուտով. ժամանակ չունեմ:

Մի ծերունի չեչէն էլ չի կամենում գաղթել և նրա փոխանակ խնդրում եմ, որ թողնէք նրան:

—Վորի՞ր այստեղից, գոչեց կառավարիչը, լսելով Վաթիայի գալու պատճառը:

—Ի՞նչի էք ինձանից նեղանում. բացի մի աղջկանից ուրիշ տէր-տիրական չունի և...

—Եթէ ես կարողանայի, բոլորիդ էլ, հասկանում ես, բոլորիդ էլ կը գաղթեցնէի, զլիւիցս կը հեռացնէի. իսկ դու խնդրում ես, որ, որոնք նշանակւած են, նրանց էլ ազատ կացուցանեմ... Գնա՛, գնա՛, հեռացի՛ր գլխիցս:

— Յաւդ առնեմ, պարոն...

— Հեռացիր, ասում եմ քեզ... քեզ համար ժամանակ չունիմ:

— Հապա մօրի համար ունիս ժամանակ. պատասխանեց Վաթիան սրանեղւած: — Գործը ես ունիմ և դու ինձ համար ժամանակ չունիս. Հնա:

— Է՛յ, կազակներ, գոչեց կառավարիչը, մատնացոյց անելով Վաթիայի վրա:

— Սրան լաւ լաւ մորակներ:

Վաթիան սպրանեց ամբողջովին և յետ ցատկեց:

— Ձեզ մեղքի մէջ մի՛ք խառնի ինձ, գոռաց նա կազակներին, ուսից հրացանը հանելով:

Կազակներն, որոնք Վաթիայի վրա վազեցին, յանկարծ յետ ընկրկեցան, այն ինչ լեղապատառ կառավարիչը գոռալով ներս ընկաւ իւր սենեակը: Կազակներն էլ, որ սկզբում այնպէս վախեցան Վաթիային մօտենալու, նոր նորից ուշաբերւելով ամաչած մնացին, որ միայն մի մարդուց այնպէս վախեցան:

— Բռնեցէք, բռնեցէք, գոչեցին նրանք յարձակւելով Վաթիայի վրա, որը հրացանի չախմախը բարձրացրած սպասում էր նրանց:

— Հեռացէք ինձանից, ի՛նչ ունէք հետս բաժանելու, գոռաց նա:

— Զինաթափւիր, անձնատուր եղիր, կանչում էին կազակները:

Վայ տա՛մ ձեր զլուխը, որ դուք կարողանաք կենդան գլխով Վաթիային զինաթափ անել:

— Հրացաններ բերէք, հրացաններ, գոչեցին կազակները, և մի քանիսը վազեցին բերելու:

Որովհետեւ այս գէպքը պատշգամբի վրա էր պատահում և Վաթիան այնպէս էր շրջապատւած, որ սանդուղքը կազակներն էին բռնել, զլխի ընկաւ որ այնտեղից ողջ չէր դուրս գնայ. այդ պատճառով կամեցաւ նրանց իւր կեանքը թանկ նստացնել:

— Այ դուք, լածիրակներ... քսան հոգով էք մի մարդու վրա կործութիւն անում... Սբա եթէ տղամարդիկ էք, մէկ-մէկ եկէք և այն ժամանակ կը տեսնեք թէ որի մայրը լաց կը լինի...

Վաթիան չէր ցանկանում մարդու արիւնի մէջ խառնուել. բաց նրանք չէին հանդատացնում և նա էլ սպտորասուեց թանդ ծախել իւր ջահիլութիւնը:

Այս միջոցում յետ նայեց և տեսաւ որ փողոցին նայող պատուհանը բաց էր. մի ականթարթում բարձրացաւ պատուհանի վրա և աջտեղից ցած թռաւ: Վարը մի կազակ ձիեր էր մանածում, որոնց պարաստել էին կառավարչի համար, որովհետեւ դաշտ պէտք է գնար չեչեններին դիտելու:

Վաժիան վրա ընկաւ կազակին, որին երեխայի պէս բարձրացնելով ծափովը տւեց, խլեց ամենալաւ ձին, հեծաւ վրան մի ականթարթում և կրնկեց դէպի անտառը:

Շփոթւած կազակները վրա թափւեցին պատուհանին, բայց ոչ մէկը նրանցից սիրտ չարաւ վար ցատկէլու: Այս միջոցում հրացաններ բերին. բայց հազիւ նրանք կարողացան մի երկու անգամ արձակել, երբ Վաժիան արդէն անհետացաւ պատի ետեւը: Միւս կազակները շտապով վար իջնելով հեծան ձիերը և ընկան Վաժիայի յետևից, որ դուրս էր գնացել դաշտը և քշում էր դէպի անտառը: Նրանք նախ խումբ-խումբ էին վազում և հրացան արձակում. քանի մի ձի առաջ ընկան, որոնցից երկու ձի առաջ գնացին. իսկ վերջը միայն մի ձին առաջ կտրեց ամենքին:

Հրացանաձգութիւնը դադարեց, որովհետեւ յետամնացները վախենում էին իրանց ընկերներին վիրաւորել. այն ինչ ամենից առաջ վազողը մոռացել էր հետը հրացան վերցնել: Սակայն սրա արիւննարբու աչքերը ականյայտի ցոյց էին տալիս, որ, եթէ հասնելու լինէր Վաժիային, չէր խնայիլ նրան իբրեւ մի չնչին արարածի:

Վաժիան քշելով իւր ձին, երբեմն-երբեմն գոռալով յետ էր նայում, օդում ճոճելով իւր գլուխը. բայց հանդիստ ապրած և զերացած ձին շնչասպառ լինելով, շուտով պակասեցրեց քայլերի արագութիւնը, այն ինչ միևնոյն արագութեամբ շարունակում էր կազակի ձին վազել, որը քրտնքի մէջ կորած՝ կուշտերը մէջքին էին կտել:

Կազակի ձին հետզհետէ մօտենում էր Վաժիային, և այս վերջինը նկատեց, որ անտառ մոնելուն չէր հասնիլ: Կազակի յետամնաց ընկերները, որոնք հարաջ տալով խրախուսում էին իրանց ընկերին, շատ էին հեռու մնացել:

Վաժիան շրջւեց թամբի վրա և առանց առջևը նայելու տեսաւ, որ կազակը, մերկացած թուրը ձեռին, յոյս ունէր շուտով հաս-

նեղ նրան: Վաժիան հանեց ուսից հրացանը և շեշտեց կազակին, որը հէնց այն վայրկեանում յետ պառկեց իւր ձիու մէջքի վրա, երբ հրացանը ճայթեց և գնդակը միայն ծակեց նրա գդակի մի կողմը: Նա նորից ուղղւելով գոչեց Վաժիային: Մոխեցին, այլ ևս ժամանակ չունենալով դարձեալ լցնելու, գցեց ուսի վրա հրացանը ինչպէս մի անպէտք զէնք և պատեանից հանեց թուրը...

Դարձեալ մի րոպէ և ահա ձիու վրա կանգնած և թուրը բարձրացրած կազակը հասաւ. Վաժիան հէնց այս վայրկեանում մի փոքր քովի դարձրեց իւր ձիուն, երբ կազակը թուրը վրա բերեց: Կազակի ձին փոքր ինչ հեռացաւ Վաժիայի ձիուց, բայց այն միջոցում շողաց և Մոխեցու թուրը:

Այս ամենը այնպէս շուտ և արագ պատահեց, որ մարդ չէր կարող աչք հասցնել: Կազակի ձին առաջ անցաւ, Վաժիան պատրաստեց: Երեւի երկուսն էլ մահից ազատուցին... Քանի մի րոպէից յետոյ կազակի ձին ծառս ելաւ, երեւի հեծնողը խիստ ուժով ձգեց սանձը, կազակը օրօրւեց, ձկւեց դէպի յետ. մի րոպէ ևս և ահա կախւեց նա ձիուց, վերջը ասպանդակից ոտը զուրս պրծնելով թաւալեց գետնի վրա: Վաժիան թրով նրա գլուխը միջից էր կիսել:

Ձին, ազատւելով իրան չը հանգստացնող բեռից, կանգ առաւ և սկսեց ընդմիջաբար փռնչալով արօտ սրկոտել: Վաժիան, նրա հետ հաշիւը վերջացնելով, կռացաւ դէպի միւս ձիու սանձը, որից բռնելով րոպէաբար թռաւ իւր ձիուց նրա վրա:

Քանի մի հրացանաձգութեան ձայն լսելով, որ կազակները ուղղում էին դէպի նա, Վաժիան քշեց իւր ձին դէպի անտառը, ուր անհետացաւ. կազակները նրան բաւական որոնելուց յետոյ վերադարձան դատարկաձեռն և այս դէպքի պատճառով կառավարիչն բացականչեց.

— Ձեզ ասի, որ սրանք ամենն էլ Աստծու կրակ ու պատիժ են... Որքան և ինչ բանով էլ կարելի է, անհրաժեշտ է գրանց այնտեղից շուտով զաղթեցնել:

— Ճշմարիտն էք հրամայում, ճշմարիտ. գլուխ տալով համաձայնութիւն էին յայտնում, կամ թէ ձեռացնում էին այնպէս այնտեղ ներկայ գտնւողները, որոնք չէին ներքին զաղթեցնելով այնքան սղեորւել էին, որ մոտադրում էին նոյնն անել և վրացիներին:

IV

Զեչէնները մօտեցան Վլադիկաւկազին: Միմեանց յետեից ճռճուացող սալերը առաջանում էին դանդաղաբար և մարդու սիրտ էին մաշում:

Սալերին հետևում էին փոքր աղաներ ոտաբոբիկ, որոնք կիզիչ արևի ազդեցութիւնից սեւացել, ոտերը աւազի մէջ խառն խիճերից հազար տեղից ճաքճաքել և այն ճեղքերում թողը նստել մեռել էր մէջը:

Կասկած չը կայ, անտանելի ցաւ էր զգում նրանց մորթը. որովհետև շարունակ կաղում էին, բարձրացնում էին ոտը. եթէ չէին էլ լալիս, զոնէ անքում էին դառնապէս և սարսափելի կերպով ծամաճռում դէմքերը: Նրանք անցան «Ձառւղի» մօտով, որտեղ ժողովուրդը զխմաւորելով կանգնեց սրտատուչոր և ցաւակցաբար նայելով նրանց, այն հաւատացեալ չեչէններին, ով գիտէ որի պատճառով. բայց ինչ կար խեղճ ժողովրդի ձեռին, ինչով էր կարող նրանց դառն վիշտը թեթեւացնել: Ելիսօն տանջւում էր այս տեսարանին նայելով և Վաթիային սպասելով, որ տակաւին ոչ մի տեղ չէր երևում. կարծես թէ մոխեցին մոռացել էր իւր սիրունուն, որի համար երէկ քիչ մնաց իւր անձը զոհէր:

Անզորն էլ չը գիտենալով նրա գլխին եկածը, զարմանում էր, որ մոխեցին չը հանդիպեց նրանց քաղաքի ծայրում և չը տարաւ մեծաւորի մօտ, սկզբում արած պայմանադրութեան համեմատ:

Աղջիկն ու հայրը մեռածների նման էին, և խուսափում էին միմեանց նայելուց. վախենալով չը լինի թէ անտեղի հարցմունքով, հակառակ իրանց ցանկութեան, աւելի վատ հետևանքի չը հասնէին: Եւ ինչ հարկ կար այս մասին խօսելու, երբ արդէն իրողութիւնը այնպէս աշխարհ պարզ էր:

Վաթիան նրանց պէտք է հանդիպէր «Ձառւղի» ծայրում. բայց ահա նրանք անցան և միւս ծայր, և տակաւին մոխեցին ոչ մի տեղ չէր երևում... Հասան նաև այն կէտին, որտեղ պէտքէ զիշերէին, և սալերը կանգ առան, որոնցից դարձեալ շրջան կազմելով՝ զինուորներին և կազակներին հրամայեցին շրջապատել և հսկել նրանց վրա:

Արեւը դեռ ևս չէր մայր մտել, երբ այնտեղերի կառավարիչը

շնորհ բերեց իւր թարգմաններով և կազակներով, դուր: կանչեց քանի մի հոգի նրանցից և ասեց.

— Դուք ինքներդ ցանկացաք կամոյին Տաճկաստան գաղթել, և մենք էլ թող տւինք ձեզ: Հիմա ես լսում եմ, որ ձեզանից քանի մի հոգի ցանկութիւն են յայտնել դարձեալ այստեղ մնալու... Յայտնում եմ ձեզ, որ ովքեր արդէն նշանակւած են գաղթողների ցուցակում, անկարելի է բոլորովին նրանց այստեղ մնալը: Հետեւիս, թող ձեզանից ոչ ոք չը համարձակւի փախչել. այս պատճառով ձեզ վրա հսկողների թիւը կրկնապատկեցի և... լաւ իմացէք, ով որ այս հրամանը քանդի ուզի, նրան անողորմաբար կը սպանեն... Այսպէս է նրանց հրահրւած:

Այս խօսքերը ասելուց յետոյ շրջեց իւր եօրդայ ձին և հպարտաբար քշեց դէպի Ալադիկաւկազ:

Ժողովուրդը քանի մի ժամանակ մնաց այնպէս անխօս, սառած և չեաոյ կամաց կամաց ցրեց զանազան կողմեր:

Եւ ինչ պէտք է ասելին... Որին կարելի էր բան հասկացնել:

Ամենքն սկսեցին իրանց տեղերը պատրաստել:

Գիշերւոյ ժամի իննը կը լինէր երբ Տաճկաստան գաղթողների բինէն դարձեալ նախկին պատկերն էր ներկայացնում: Գէս ու գէն կրակներ վառւած և նրանց մէջ տեղում ուրւականների նման այր և կին մարդիկ անդամալուծի պէս էին շարժւում: Չանազանութիւնը միայն նրանում էր կայանում, որ ժողովուրդը աւելի էր նեղացած... ճիւղնուրի ձայնը էլ չէր լսում...

Չէր վերջացել միայն անախորժ մրմունջը, անխօս անքոցը, վշտացած սրտի անձայն թախիժն ու սուղը... Սրանք դիտում էին իրանց պաշտերը, իրանց սարերը, որոնք գիշերային մթութեան մէջ պատկերանում էին երկնակամարի վրա: Այստեղից զրկւում էին իրանց վերջին վշտայից բարեւները, իսկ մնացածը արտապատում էր դարձեալ սուգով և լացով:

Յանկարծ ստորափելի թող բարձրացաւ մի տեղից այնպէս, որ կարծես թէ քամին մի աւազուտ տեղ փչեց: Յայտնեց ծխի նման մի փոքր մշուշ և շուտով անհետացաւ:

Յայտնեց մի այլ տեղ և նորից հանդաւ... Սրանից յետոյ քանի մի տեղում դարձեալ միաժամանակ մշուշներ երեւցին, որոնք կար-

Ժես թէ հողիցն էին դուրս գալիս, զնալով-գնալով աւելի մեծանում և ուռչում էին: Օդը տակն ու վրա եղաւ, մթաղնեց և սգաւորի նման մնալ կերպարանք ստացաւ:

Փոթորիկը փչում էր սաստկաբար և միանում ժողովուրդի հեծեծանքին՝ միակ զաւակը կորցրած անմխիթար ծնողի նման: Քանի մի վայրկեանից յետոյ երկինքը կապարագոյն կտրւեց, յայտնի երևում էր, որ եղանակը վատանալու վրա էր, կարծես թէ նոյն իսկ բնութիւնն էլ սղաձեւել էր ժողովուրդի աննկարագրելի տանջանքից և աջնեղի երկինքը չէր կամենում իւր զաւակներից առանց արտասուքի հրաժեշտ տալ:

Դաւարեց քամին և օդը տաքացաւ: Ամեն բան անդորր կերպարանք առաւ: Օդը ծանրացաւ, որից և շնչառութիւնը դժւար էր լինում... Ընկաւ մի կաթիլ, հետեւեց երկրորդը, գոռգոռաց երկինքը յանկարծ և անձրեւը մանր կաթիլներով բացց անընդհատ գալիս էր: Մի տկնթարթում ամբողջ կանաչ դաշտը ջրով ծածկւեց, որի ստեղծ կարճ արօտները գլուխը դուրս հանելով շարժւում էին մեղմօրէն:

Ջուրը զբանում էր դար ու փոսերում, որովհետեւ երկիրը կըշտանալով էլ չէր կարողանում աւելորդ ներս ծծել: Նորից փչում էր քամին ընդմիջաբար և մռնչելով սառեցնում ամեն բան, որի հետ միանում էին երբեմնակի գոռգոռոցը և փայլատակումն մռնչելով:

Երեխաները ահից և ցրտից լալիս էին: Մենդաբեր մայրերը սգալով անէծք էին կարդում իրանց այն զրութեանը հասցնողին և աչքպէս անիծելով, հողիներն աւանդում:

Տղամարդիք դէմքերը տխրամած, ձեռք խանչալի վրա դրած կանգնել էին անմուռնջ և դիտում էին իրանց սև օրը, կարծես արդարադատութեան էին սպասում, բացց ումնից:

Մի տեղ պառկել էր մի հիւանդոտ սլառաւ և սարսափելի դողացնում ցրտից: Պատառոտուն ցնցոտիները, որոնց բացւածքներից երևում էր նրա կարմիր կապտած միսը, հաստատում էին, որ անտէր և աղքատ էր նա: Ողորմելին ծուխի (ցեխոտ ջուր) մէջ տարածւած մաքառում էր մահի դէմ և աչքպէս հողեվարք կացութեան մէջ էլ հանգիստ չէր գտնում: Իսկ անձրեւը անդադար հոսում էր վրայից:

Անգորը նկատելով այս՝ ծածկեց նրան իւր մորթու վերարկուով և երեխաները վրա թափւելով նստեցին նրա շուրջը զոզոզողալով պահապան հրեշտակների նման, որոնք աղօթք էին անում կարծես նրա հոգու համար... Ձը քաշեց քանի մի րոպէ, պառաւը նստեց իւր տեղը, խորդաց և հոգին աւանդեց: Միթէ Ամենաբարձրեալը չէր լսի, չէր այցելի սրանց... Սաստիկ մթնեց, կրակները հանգան անձրևից բոլորովին, միայն լուսթիւնը խանդարւում էր աղմկած օդի գոռգոռոցից և Ձէչէնների անընդհատ անքոցից և Արարչի անունը յաճախակի յիշելուց:

Աը լինէր արդէն գիշերւայ տասերորդ ժամը, երբ ճանփորդների կայանի կողմը, խոտերում պառկած, մի մարդ կամաց և զգուշաբար փորսողում էր: Նա ամեն մի րոպէ բարձրացնում էր գլուխը խոտերից և լաւ դիտում իւր շուրջը, և երբ հաստատ համոզւում էր, որ ինքը աննկատելի էր, իսկոյն և եթ տարածւելով գետնի վրա նորից շարունակում էր փորսողել: Երբ անծանօթը հասաւ այն կետին, որտեղ պահապանները ծիր էին քաշել, նա նորից գլուխը բարձրացրեց և գիշերային մութին սովոր աչքերով շուտով որոշեց, որ խիստ էր մօտեցել մի զինւորին և որ այս պահապանից առանց նկատուելու դժար էր յետ դառնալ:

Եւ իրօք, զինւորը որ անձրևից կուչ եկած և աչքերը խփած սպասում էր իւր փոխւելուն՝ շարժւեց յանկարծ, բացեց աչքերը և յետ ու յետ զնաց: Երևում էր, որ իրան մօտեցած մարդուն նկատեց և բերանը բանալով ուզեց աղաղակել. բայց Վաժիան արագութեամբ իրեց խանչալը նրա կոկորդը և ձայնը կարեցրեց. ոռւսը այնտեղ և եթ ընկաւ և սկսեց թուպրտալ:

Հանեց կամաց Վաժիան խանչալը, մաքրեց թաց արօտի վրա քսելով և կրկին փորսողելով դիմեց դէպի Ձէչէնների կողմը:

Երբ սալլերին մօտեցաւ,—տեղից կանգնելով աներկիւզ մտաւ Ձէչէնների մօտ, այնտեղ հարցնե ով շուտ դտաւ Անգորի սալլը, որում էլիսօն պատասպարւել էր:

Նրա հայրը գլխաբաց և մազերը զզգզած կարծես չէր զգում եղանակի խստութիւնը և գլխովին ընկղմւել էր մտածմունքի և վշտի մէջ:

Այժմ երբ իւր աղջկայ և Վաժիայի այս կերպ անձնէր սիրա-

հարութիւնը հասկացաւ, երբ համոզւեց, որ նրանց միմեանցից ան-
ջատելը մահի հաւասար է, հոգով սրտով ցանկացաւ մնալ աշխտեղ
և իւր մտադրութիւնը իրականացնելու համար էլ չէր խնայում
ինքն իրան:

Ե՛յ, է՛յ. կանչեց ծերունին, մօտեցող մարդուն նկատելով:—Ո՞վ ես:

—Անգոր, ցած ձայնով և կամաց հարցրեց մօտեցողը:

—Վաժիա. գոչեց ուրախացած ծերունին և դիմաւորեց նրան:

—Այլ ևս ուշանալ չի կարելի, պէտք է փախչենք:

—Հապա վարի պահապանները... հըր կարող ենք նրանցից
փախչել. ուղղակի սկսեց Ձէչէնը, որովհետեւ կեանքը սովորեցրեց
նրան, որ իզուր հարցեր անելուց ոչ մի օգուտ չէր սպասել:

—Այստեղ և եթ, մի դադունի տեղում ձիեր ունեմ. միայն
շտապել պէտք է:

—Եթէ Անգորը միայնակ լինէր, այն հանդամանքում առանց
երկար մտածելու կը հետեւէր Վաժիային. բայց այժմ հետն ունէր
իւր վերջին յոյս ու ապստէնը, որին վառագելուց մահն աւելի
կը նախադասէր իւր համար:

—Աղջկանս ինչպէս տանենք, հապա. վա՛յ թէ...

—Ես պատրաստ եմ, ընդմիջեց Ելիսօն, սայլից վայր իջնելով:—
Ես ամեն բան լսեցի, գնանք:

—Ելիսօ. կոչեց Վաժիան յափշտակած և ամուր սեղմեց իւր
կրծքին:

Անգորը արտասուալից աչքերով նայում էր այս պատկերին և
երկնչում էր խօսք ասելուց, որով կարող էր նրանց բախտաւորու-
թիւնը խորոտակել:

—Ասուած է միայնում, մարդ չի բաժանիլ ձեզ, վերջապէս
ասեց զգուշաբար ծերունին, որի համար ամեն մի րոպէ թանգ ար-
ժէր:—Եթէ այդպէս է, ուրեմն շտապեցէք: Այս խօսքերը դուրս
հանեցին երկու սիրահարներին ինքնամոռացութիւնից և մտաբե-
րեցին եղելութեան ճշգրիտ դառնութիւնը: Ճշմարիտ ես ասում,
ուշանալ պէտք չէ, պատասխանեց մոխեցին, թոթափեց ամբողջովին
և գլխով հանելով աւելացրեց.

—Զորի սուրբեր և հրեշտակներ, դուք օգնեցէք, դուք աջողե-
ցէք մեզ:

Նրանք գնացին Վաժիայի առաջնորդութեամբ այն ճանփով, որով ջահել մոխեցին եկել էր, և սալերից հեռանալուն պէս Վաժիան շշնջեց Անդորի ականջում ցած ձայնով:

Այստեղից փորսողելով պէտք է անցնենք:

Նրկու աղամարդիք տեղն ու տեղը դեանատարած պառկեցին, մէջ տեղում առան աղջկան և այնպէս փորսողելով անցան պահապանների ծրից:

Քէրէքի ափի մօտ նրանք զտան երեք ձի, որոնց վրա հեծնելով կրնկեցին դէպի լեռները:

V

Նրանք քշում էին ձիերին և աշխատում էին, որքան կարելի է, շուտով անցնել Լարսից և Դարիսից, աւելի վտանգաւոր տեղերից, որտեղ լեռները պատառտուել և կարծես զիտմամբ վայր են սրւել, որ նեղն ընկած մարդուն խոչ ու խութ ներկայանալով՝ զրկեն նրան ամեն միջոցից աղատօրէն շրջադաշտում:

Այն ժամանակներում այս տեղերով ճանփորդելը նրանով աւելի էր դժւարանում, որ ամբողջ ճանփան, աւելի պարզն ասենք, որ գիշերներով ուռս պահապաններ էին նշանակւում խաչմերուկ կերպով, և թույլատրւում էր ամեն տեսակ ապօրինութիւններ անելու, որովհետև նրանց արարքը գիշերով և անվկայ էր պատահում. ուրեմն օտար աչք չէր տեսնում, չէր որոշում նրանց վարմունքը և ոչ ոք էլ չէր դատապարտուիլ:

Կը լինէր մօտաւորապէս գիշերւայ տասներկու ժամը, երբ Վաժիան իւր ուղեկիցներով մօտեցաւ Լարսի վտանգաւոր տեղը. Վաժիան որ միշտ ընդառաջում էր, կանգնեցրեց ձիուն և արագաբար վայր թռաւ: Անդորն և Ելիսօն էլ կանգնեցրին իրանց ձիերին:

— Ի՞նչ կայ, հարցրեց ծերունին:

— Վայր իջէք ձիերից, կարճ կտրեց մոխեցին և օգնեց Ելիսօին ձիուց իջնելու:

Անդորը բռնելով ձիերի սանձերը՝ այլ ևս չը կրկնեց իւր հարցմունքը, որովհետև մոխեցու զգուշաւոր խօսակցութիւնը, կարճ խօսքերը և հրամայական ձևը հաստատում էին, որ իրանք վտան-

զալից կացութեան մէջ էին և աւելորդ հարցմունքները աւելորդ ժամանակ կորցնել էին նշանակում:

Վաժիան քակեց թամբից իւր ետինջին, հանեց դանակը և սկսեց փոքր կտորների կտրատել: Յետոյ հանեց փոքր խուրջինից (հաբգից) բարակ թուկեր և ետինջու կտորներով ձիերի սմբակները փաթաթելով ամուր կապեց: Անգորը, իբրև դաշտում սնած և մեծացած, չէր հասկանում այս զգուշութիւնը և զարմանքով էր դիտում մոխեցու վարմունքը:

— Ի՞նչ ես անում. չը համբերեց ծերունու սիրտը և հարցրեց մոխեցուն:

— Այստեղ պահապաններ կան և ճանփան էլ քարոտ է: Այս խօսքերով Անգորը հասկացաւ, որ ձիերի սմբակները ետինջով էին փաթաթւած և աղմուկ հանելու չէին և, իբրև նախկին պատերազմող, զօրքերի առաջնորդ, չափազանց հաւանեց այս հնարագիտութիւնը:

— Դուն հնարագէտ ես եղել: Ափսոս, որ Շամիլը բռնեց, նրա մօտ շուտով կը հուշակէր անունդ:

— Հեծէք, կոչեց Վաժիան և մի վայրկեանից յետոյ յառաջ ընթացան նոյն կարգով:

Եւ ուղիղ մինչև այժմ ձիերի սմբակները այնպիսի աղմուկ էին հանում խիճով և աւագով ծածկւած ճանփի վրա, որ մեռածներն անգամ կ'արթնանային, այն ինչ հիմաջ ոչ մի ձայն չէր լսում նրանց քայլածքից:

Վաժիան համոզւած էր, որ կը խաբէր հսկող պահապաններին նա մանաւանդ այն պատճառով, որ եղանակը չէր պարզւում և թանձր մառախուղը աւելի էլ սաստկացնում էր զիշերային մթութիւնը, այնպէս որ մարդ չէր կարող իւր աչքին մօտեցրած մատը նկատել:

Մինչև այժմ արագ ընթացքը մոխեցին փոխարկեց յամր գնացքին. շարունակ զգոյշ, ականջները սրած, կարծես ամբողջովին լսողութիւն էր դարձել, որպէս զի ոչ մի շշուկ չը թողնի առանց լսելու: Վաժիան քանի մի անգամ անորոշ ձայներ լսեց, շատ անգամ ձիուն կանգնեցրեց և նրա վզի երկարութեամբ պառկելով երկար ժամանակ ականջ էր դնում. բաց համոզւելով, որ երկիւղալի

բան չը կար, նորից շարունակում էր իւր ճանփան: Նրանք մօտեցան այն թումբին, որի մօտ հոսող առևակի վրա ջրադացի չարի էր պտըտւում, ձին յանկարծ փռնչաց, խրտնեց և յետ քաշւեց: Վաժիան ջգրւեց ձիու վրա և կամացուկ մարակելով քշեց դէպի թումբը: Բայց ձին մերձենալուն պէս դարձեալ յետ դատկեց:

— Անտէ՛ր, ի՛նչ տեսար, հազիւ արտասանեց այս խօսքերը, երբ լեզուների նման ինչ որ ցոլացին և հրացանների ճալթիւններ լււեցին:

— Օ՛խ, շներ, շներ, որոտաց նա և ձիուն քշեց դէպի այն կողմը, որտեղ փայլալը լուսաւորեց տասնեակ կամ աւելի բազմաթիւ հրացանակիր սաներ: Մի բուպէում մերկացրեց իւր թուրը մոխեցին և առաջին յարձակման միջոցում մէկին այնպէս զարկեց, որ մէկ ուսից մինչև միւսը վայր բերեց թրի հարւածով: Բայց իսկոյն և եթ զգաց պաղ ծայրը, որ իւր սրտի միջով անցաւ մինչ կռնակը: Նա տրորւեց և դետին դլորւեց:

— Անասաւանճներ, անօրէններ, անհաւանտներ... էլի... էլիսօ, և էլ չը կարողացաւ խօսքը վերջացնել:

Անգորը և նրա աղջիկը փոքր ինչ յետ էին մնացել և գնդակներով բոլորովին ծակծակւել: Բայց ծերունին դարձեալ յաջողել էր միանգամ ևս զարկ տալ իւր աղջկայ կրծքին և այնպէս հոգին աւանդել:

Այս դէպքից յետոյ, երրորդ օրը, նոյն իսկ այն տեղով, որտեղ սպանւածները տակաւին ճանփի ափին թափւած էին և ոչ ոք չէր մտածում նրանց մարմինները հողին աւանդել, անցան Անգորի ընկերները: Նրանք առաջւանից աւելի էին նեղացել... Դարձեալ լսում էր նոյն լացը, դարձեալ նոյն սիրտ տոչորող սուգի ձայնը, դարձեալ միևնոյն ողբն ու կոծը, որը զուրս էր թռչում սրտի խորքից և տարածւում օդում...

Այս թշուառները ճանապարհ ընկան դէպի Տաճկաստան. բայց շատերը արդեօք հասան նշանակւած տեղը...

ՔԱՋ ՀՈՎԻԻ

Հովիւ քաջ, հովիւ բարի եւ առաքինական...

ԱՐՇԱՆՈՅՍ ՄԻԻԹԱՐԵԱՆԻ

Երբ սուտ հովիւներ՝ մոռացած երգումն,
Մոռացած կոչումն եւ պարտքն հովւական,
Որոնում էին վայելք աշխարհում,
Ո՛վ անսուտ հովիւ, դո՛ւ էիր միայն
Քո անձըդ գլնում հօտիդ փըրկութեան,
Դո՛ւ էիր նորան եւ տէր եւ պաշտպան:

Երբ արծաթասէր, անարգ հովիւներ
Կեղեքում էին հօտը սեպհական,
Երբ ծածուկ, յայտնի, իբր աւազակներ,
Աւարում էին անխընայ նորան՝
Ով անկեղծ հովիւ, տառապեալ հօտիդ
Դու տալիս էիր քո սիրտդ ու հոգիդ:

Թող չար հովիւներ աշխատեն խըլել
Հիմա քեզանից քո ցուպն հովւական,
Թող նոքա ջանան որոգայթ փորել
Քո ոտների տակ, ո՛վ հալածական—
Հօտըդ ճանաչեց նոցա սեւ հոգին
Ճանաչեց եւ իւր պաշտելի հովւին:

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(Շարունակութիւն 1)

6 մարտի. Հռոմ. Casa Osoria.

Երեկանից Հռոմում եմ: Հայրս այնքան էլ հիւանդ չէ, որ քան վախենում էի: Ձախ ձեռքը ու մարմնի ձախ կողմը կիսով չափ թուլացել են, բայց բժիշկները հանգստացնում են ինձ, թէ սրտին վտանգ չի սպառնում և թէ այդ դրութեամբ կարելի էր տարիներով ապրել:

7 մարտի.

Այդպէս ուրեմն Անեղկան մնաց անորոշ, սպասող ու վրդոված դրութեան մէջ: Բայց ուրիշ տեսակ վարւել չէի կարող: Սնեատինսկիների Պրոշով զաւուհեակալ օրը, այն օրը, երբ վճուել էի առաջարկութիւն անել Անեղկային ու նրա մօրը, Հռոմից նամակ ստացայ, որով հայրս յայտնում էր, թէ ինքը հիւանդացել է. «Շուա-

1) Տես «Մուրճ» №№ 1, 2, 3:

պիր, սիրելի որդեակ, գրում էր հայրս, ուզում եմ մէկ էլ զրկել քեզ մահիցս առաջ. զգում եմ որ եկել է օրհասս: Ի հարկէ այդպիսի նամակ ստանալուց յետոյ երկաթուղու առաջին գնացքով ճանապարհ ընկացւելու համար հասնելը ոչ մի տեղ հանգիստ չ'առաջ: Ճանապարհ ընկնելուս ընկնելին ինձ թւում էր թէ հօրս շնչին չեմ հասնիլ: Զուր էր հօրաքոյրս աշխատում հանդստացնել ինձ ասելով, թէ, եթէ վստանգը այդքան մօտալուտ լինէր, հայրս նամակի տեղ հեռագիր կ'ուղարկէր կամ կը պատւիրէր ուղարկել: Ես գիտէի որ հայրս մի քանի տարօրինակ կողմեր ունի, որոնցից մէկն է եղել միշտ նրա հակակրօնութիւնը դէպի հեռագիրը: Ասենք հօրաքոյրս էլ միայն ձեռացնում էր թէ հանդիստ է, իսկ իրօք նրան էլ նամակը շատ էր վախեցրել:

Այդ աճապարանքի մէջ, այդպէս սարսափահար եղած ու հօրս մեռնելու ահ ու դողը սրտումս, ես չէի կարող և չէի ուզում հարսնախօսութիւն անել: Իմ կողմից բնութեան հակառակ ու ցինիկական բան կը լինէր սիրոյ խօսքեր շշնջել, չ'իմանալով թէ արդեօք հէնց այդ ընկնելին հայրս հոգին չի տալիս: Այդ հասկանում էին բոլորը, ևս առաւել Անեկան: Ճանապարհ ընկնելիս ես նրան ասացի՝ «Հռովից կը գրեմ քեզ». նա պատասխանեց՝ «Նախ և առաջ տայ Աստուած քեզ հոգու անդորրութիւն»: Նա ինձ վրայ կատարելապէս վստահ է: Արդարացի թէ անարդար՝ ես կանանց վերաբերմամբ թեթեամիտ մարդու համբաւ ունեմ և անկարելի է որ այդ հասած չը լինի Անեկայի ականջին. բայց դուցէ հէնց այդ է պատճառը, որ այդ սիրելի էակը ինձ աւելի ևս վստահութիւն է ցոյց տալիս: Գուշակում ու հասկանում եմ թէ նա ինչ է մտածում ու զգում: Համարեա լսում եմ, թէ ինչպէս նրա մաքուր հոգին ասում է ինձ՝ «Անարդար են վերաբերում քեզ. դու թեթեամիտ չես, իսկ նրանք, որոնք մեղադրում են քեզ, թէ այդպէս ես, նրա համար են այդ անում, որ չեն կարողացել քեզ սիրել այնպիսի խոր ու մաքուր սիրով, որով ես եմ քեզ սիրում: Եւ Անեկայի կարծիքը իրաւացի է: Գուցէ և մի քիչ թեթեւ բնաւորութիւն ունիմ, բայց որ այդ թեթեւութեան զարգանալու վրայ ազդել է ինձ հանդիպած զգացմունքների թեթեւութիւնը, զատարկութիւնը ու չորութիւնը — այդ անկասկածելի է: Այդ կարող էր բոլորովին խեղաթիւրել ու ցամաքաց-

նեւ իմ սիրտը և եթէ այդպէս եղած լինէր, Անելիան պէտք է ուրիշների յանցանքը քաւէր: Սակայն կարծում եմ, որ դեռ փրկութիւն կայ և որ օրհնւած բժիշկը ուշ չի եկել ինձ բժշկելու: Ասենք՝ ով զիտի, արդեօք պատահում է երբէք, որ ուշ լինի, և կանացի մաքուր ու աղնիւ սիրտը չունի արդեօք միշտ մեռելներին յարութիւն տալու շնորհք:

Գուցէ և միւս կողմից տղամարդու սիրտը աւելի ընդունակ է վերակենդանանալու: Մի աւանդութիւն կայ Երիքոնի վարդի թուփի մասին, որ, եթէ բոլորովին չորացած էլ լինի, հէնց որ մի կաթիլ անձրև տեսնի, խփոյն կեանք կը ստանայ ու նոր բողբոջներ կը տալ: Նս նկատել եմ, որ տղամարդու բնութեան մէջ շատ աւելի առաձգականութիւն կայ քան կանացիի մէջ: Տղամարդը երբեմն այնպիսի զարշէլի անառակութեան մէջ է թաթալւում, որ այդ թոյնի կէսը բաւական կը լինէր ընդ միշտ մահացու բորով համակելու կինարմատին, մինչդեռ Ագամայ որդին ոչ միայն կարողանում է թոթափել իւր վրայից ախտը և հեշտութեամբ նորից ձեռք է բերում ոչ միայն կորցրած բարոյական առողջութիւնն ու թարմութիւնը, այլ և նոյն իսկ սրտի կուսութիւնը: Նոյնն է և զգացմունքների նկատմամբ: Նս այն աստիճան չորացած սրտով կանայք եմ տեսել, որոնք բոլորովին կորցրել են որ և իցէ մարդու կամ որ և է բան սիրելու և մինչև անգամ յարգելու ընդունակութիւնը: Այդպիսի տղամարդիկ ես չեմ տեսել: Սէրը միանգամայն վերադարձնում է մեզ մեր կուսութիւնը:

Այսպիսի խօսքեր կարող են զարմանալի թւալ սկեպտիկի գրչի տակ, բայց նախ՝ ես իմ կասկածներիս աւելի հաւատով չեմ վերաբերւում քան այն բոլոր կանոններին, աքսիոմաներին ու հայեացքներին, որոնք ընդհանրապէս մարդկանց համար ծառայում են իբրև կենսական յենարաններ: Նս ամեն րոպէ պատրաստ եմ համաձայնել, որ իմ կասկածներս էլ կարող են նոյնքան հեռու լինել ճշմարտութիւնից որքան այդ աքսիոմաները: Երկրորդ՝ այժմեան գրածս գրում եմ Անելիայի սիրոյ ազդեցութեան տակ, որ ինքը գուցէ չը զիտի թէ ինչ խելօք ճանապարհ է ընտրել այդպէս անսահման վստահութեամբ վերաբերւելով ինձ, և ինչպէս դրանով զրաւում է սիրոս ու դերի դարձնում իրան: Վերջապէս սիրոյ մասին եմ խօսում թէ մի ուրիշ կենսական գործոնի մասին, միշտ այն եմ ասում

ու գրում, ինչ որ այսօր ինձ թւում է: Ինչ կարծիք կ'ունենամ վաղը՝ չը գիտեմ: Ա՛խ, եթէ իմանայի թէ իմ որ և է հայեացքը, որ և է համոզմունքը, որ և է սկզբունքը կը դիմանայ սկեպտիկականութեան հղուցւայ ու միւս օրւայ շնչին, երկու ձեռքով կը բռնէի նրանից, նրան ինձ համար կրօն կը դարձնէի և կը նաւէի Մսեառինս: սկո՞ւ պէս լիառազատ ու լուսագնաց, փոխանակ թափառելու խաւարի ու դատարկ տարածութեան մէջ:

Սակայն չեմ ուզում նորից վերադառնալ իմ ներքին տրագեդիային: Գալով սիրոյ զգացմունքին առհասարակ, ես՝ իբրև սկեպտիկ կեանքի ու նրա բոլոր երևոյթների վերաբերմամբ, սիրոյ մասին էլ կարող էի արտասանել Սոլոմոնի ունայնութիւն ունայնութեանցը, բայց կատարելապէս կոյր կը լինէի, եթէ չը նկատէի, որ նա կենսական բոլոր զործոններից ամենազօրեղն է և այն աստիճան ամենակարող է, որ ամեն անգամ երբ նրա մասին մոտածում եմ, ամեն անգամ երբ հայեացքով ընդգրկում եմ ընդհանուր կեանքի յաւիտենական ծովը՝ մնում եմ միանդամայն ապշած ու զմայլած այդ ամենակարողութեան վրայ: Այդ հօ նոյնքան յայտնի ու ծանօթ բաներ են որքան արևի ծագելը, որքան ովկէանի մակընթացութիւններն ու տեղառութիւնները, բայց էլի միշտ շարժում են մարդուս զարմանքը: Եմպեդոկլից յետոյ, որ դառա թէ Երոսն (սէր) է աշխարհս հանել քաօսից, մէտաֆիզիկան ոչ մի քայլ առաջ չի զնացել: Միմիայն մահն է սիրոյ սէս անպայման, բայց այդ երկու ոյժերի յաւիտենական մաքառման ժամանակ սէրը բռնում է մահւան կոկորդից և չոքում է նրա կրծքին, թակում է նրան օր ու գիշեր, թակում է նրան ամեն դարունք, քայլ առ քայլ հեռւում է նրան և նրա փորած մի փոսի մէջ նոր կեանքի սերմ է գցում: Մարդիկ զբաղւած ամենօրեայ զարծերով մոռանում են կամ չեն ուզում յիշել, որ ծառայում են միմիայն սիրոյ զգացմունքին: Մարդուս տարօրինակ կը թւի այն միաքը, թէ զինուորականը, պետական կանցլէրը, հողագործը, վաճառականը, բանկիրը իրանց բոլոր ջանքերով, որոնք ըստ երևոյթին ամենևին կապ չ'ունեն սիրոյ հետ, միմիայն այդ սկզբունքին են ծառայում, ի կատար ածում միմիայն այն բնական օրէնքը, որի զօրութեամբ տղամարդու կռները պարզւում են զէպի կինարմատը: Ի՛նչ անմիտ պարագոքս

չ'երևէր մի որ և է Բիսմարկի, եթէ մէկը նրան ասէր, թէ նրա ջանքերի վերջնական ու միակ նպատակն այն է, որ Հերմանի շըր-թունքները հանգիստ առնեն Դորոթէայի շըրթունքների վրայ: Ինձ էլ այս բոպէիս թուում է, թէ վերելք գրածս պարագոքս է, և սակայն... սակայն Բիսմարկը ջանում է զօրացնել գերմանական կեանքը, իսկ այդ կեանքը կարող է զօրանալ միմիայն Հերմանի ու Դորոթէայի միջոցով: Բիսմարկի արածն էլ ի՞նչ է լինելու եթէ ոչ քաղաքա-դիտութեան կամ սելիների միջոցով այնպիսի պայմաններ ստեղծել, որոնց մէջ Հերմանն ու Դորոթէան կարողանան հանգիստ իրար սիրել, երջանիկ կերպով կենակցել և նոր սերունդներ սնուցանել:

Դեռ համալսարանում եղած ժամանակս մի արաբական բանաստեղծութիւն եմ կարդացել, որի մէջ սիրոյ ոյժը համեմատուում էր դոփնքի ոյժի հետ: Բանաստեղծի անունը մոռացել եմ, բայց նրա յայտնած միտքը մնացել է յիշողութեանս մէջ: Եւ իրաւ՝ մարդու գլուխ պտոյտ է գալիս երբ որ մտածում է այդ զօրութեան մասին: Վերջ ի վերջոյ կեանքի բոլոր երևոյթները միմիայն տարբեր ձև են միևնոյն սկզբունքի: Այդ էլէական փիլիսոփաների «en kai pan»-ն («մի և ամեն ինչ»): Իսկապէս նա մի է, միայն նա է իշխում, միայն նա գոյութիւն ունի, միայն նա է միաւորում, պահպանում, ստեղծում:

10 մարտի.

Այսօր մի երեք-չորս նամակ գրեցի Անելկային ու չ'ուղարկած ձղեցի: Ճաշից յետոյ գնացի հօրս առանձնասենեակը որ հետը խօսեմ հօրաքրոջս դիտաւորութիւնների մասին: Նա խոշորացնող ապակիով գննում էր ղեռ ևս հողով լիքը էպիլիփսնիօններ, որ նրան ուղարկել էին Պելոպոնէսից: Ի դէպ ասած՝ նա սքանչելի էր երևում թանգարանի այդ սենեակում, որ լուսաւորւած էր մէջ ու մէջ սպիտակ ու գունաւոր ապակիներով և լիքն էր էտրուսական անօթներիով, արձանների բեկորներով ու ամեն տեսակ յունական ու հռոմէական հնութիւններով: Այդ շրջապատի մէջ նրա դէմքը ինձ բոլորովին նման էր թուում «աստուածային» Պլատոնի կամ մի ուրիշ յոյն իմաստունի դէմքի: Ես որ ներս մտայ, նա ընդհատեց զրադմունքը, հետաքրքրութեամբ լսեց ասածս ու յետոյ հարցրեց.

— Տառանդում ես:

— Ձեմ տառանդում, բայց կշռադատում եմ և ուզում եմ իմանալ թէ՛ ինչու եմ ուզում:

— Որ այդպէս է լսիր. ես աշնպիսի մարդ էի, որ քեզնից պակաս չէի սիրում զննել ու պարզել ինձ համար թէ ինձ և թէ կեանքի բոլոր երևոյթները: Բայց հէնց որ ծանօթացայ մօրդ հետ, միանգամից կորցրեցի այդ ընդունակութիւնս: Նա միայն մի բան գիտէի, աշն է՝ որ ուզում եմ որ նա իմն լինի, և էլ ուրիշ ոչ մի բան չէի ուզում իմանալ:

— Ուրեմն:

— Ուրեմն, եթէ քո սիրան էլ նոյնքան սաստիկ է ուզում, պսակիր: Ի՛նչ եմ ասում. չէ, եթէ քո սիրան էլ նոյնքան սաստիկ է ուզում, ինքդ կը պսակես առանց ուրիշների խորհուրդի ու օգնութեան և աշնպէս երջանիկ կը լինես, ինչպէս ես էի քանի որ դեռ մայրդ չէր մեռել:

Մի րոպէ մենք լուռ մնացինք: Եթէ որ ես ուզէի հօրս խօսքերը յարմարեցնել իմ բնութեանը, սիրտս չէր ուշախանալ: Անկասկած սիրում եմ Անեկային, սակայն դեռ չեմ հասել այնտեղ, որ իմ մէջ այլ ևս տեղ չ'ունենայ ոչ մի խորհրդածութիւն (բե՛կ-լեքսիա): Բայց այդ վատ նշան չէ, այլ միայն այն բանի հետեանքն է, որ աշն սերունդը, որին ես պատկանում եմ, գիտակցականութեան կողմից մի աստիճան բարձրացել է: Միշտ իմ մէջ երկու մարդ կայ՝ մէկը դերասան, միւսը՝ հանդիսատես: Շատ անգամ հանդիսատեսը զո՛հ չի լինում դերասանից, բայց այժմ ինձանում հաշտութիւն է տիրում նրանց մէջ:

Հայրս առաջինը ընդհատեց լուծութիւնը:

— Ասա ինձ, ինչ տեսակ կերպարանք ունի նա:

Նկարագրութիւնը՝ պատկերացնելու ամենաթույլ միջոցն է, ուստի գնացի բերեցի Անեկայի մեծ ու հիանալի քաշած լուսանկարը, որ հայրս սկսեց վերին աստիճանի հետաքրքրութեամբ զննել:

Ես էլ ոչ պահաս հետաքրքրութեամբ դիտում էի նրան, որովհետեւ յանկարծ նրա մէջ զարթնեց արեւոտագէտը և միւսնոյն ժամանակ կանանց վաղուցւայ նուրբ դիտալն ու սիրողը, — նախկին «Léon l'invincible»-ը: Լուսանկարը դէմ տալով կիսամեռ ձախ

ձեռքին աջովը նա բռնեց ապակին և մէկ մօտեցնելով, մէկ հեռացնելով պատկերից սկսեց խօսել.

— Եթէ մի քանի մանրամասնութիւնները չը լինէին *à la* Արի-Շէֆէր դէմք կը լինէր... Հիանալի կը լինի արտասուքը աչքերին... Կան մարդիկ, որոնք կանանց մէջ չեն սիրում հրեշտակային արտայայտութիւն, բայց իմ կարծիքով հրեշտակին՝ կին լինել սովորեցնելուց մեծ յաղթութիւն չը կայ... Շատ սիրուն է ու շատ ինքնօրինակ (օրիգինալ): „Enfin, tout ce qu'il y a de plus beau au monde—cest la femme!“ (Աշխարհիս ամենագեղեցիկ բանը կինն է):

Այդտեղ նա նորից սկսեց տանել-բերել ապակին և վերջը աւելցրեց.

— Երեսօտարքովը դատելիս, այն էլ լուսանկարովը, մարդ միշտ կարող է սխալւել, բայց ես մի քիչ հօգուտ եմ այդ բանում: Իմ կարծիքով՝ դա շատ ազնիւ տէր պէտք է լինի: Ինձ այդպէս է թւում... Այդ տիպին պատկանողները սիրահարած են լինում իրանց փետուրների մաքրութեան վրայ... Տայ Ասուած քեզ երջանկութիւն, որդեակս, քո Անեկան ինձ շատ է դուր գալիս... Ես միշտ վախենում եմ, որ օտարազգի աղջկայ վրայ պսակւես, լաւ է Անեկան լինի...

Ես մօտեցայ նրան, նա աջ ձեռքը դցեց վզովս ու ասաց.

— Ախ, մահիցս առաջ հարսիս էլ այսպէս մէկ զրկէի, էլ ոչինչ չէի ուզի:

Ես սկսեցի նրան հաւատացնել, որ այդ անպատճառ կը լինի: Յետոյ մենք խօսեցինք հօրաքրոջս, Անեկային ու նրա մօրը Հռոմ հրաւիրելու դիտաւորութեան մասին: Ես նամակով առաջարկութիւն անելուց յետոյ կարող էի պահանջել որ նրանք զային Հռոմ և նրանք, հօրս զրութիւնը ի նկատի ունենալով, ի հարկէ կը համաձայնէին զալ: Այդպիսով հարսանիքը Հռոմում կ'անէինք և շատ շուտով:

Հօրս այդ ծրագիրս սաստիկ դուր եկաւ, որովհետեւ, ծեր ու հիւանդ մարդիկ սիրում են որ իրանց շուրջը կեանք ու շարժումն լինի: Վիտէի նոյնպէս, որ Անեկան սաստիկ կ'ուրախանայ գործի այդպիսի ընթացք ստանալուց, այնպէս որ իմ մէջ էլ այդ ծրագիրը իրագործելու ցանկութիւնը հետզհետէ սաստկանում էր: Մի

շաբաթուայ մէջ կարելի էր ամեն բան վերջացնել: Ես զգում էի, որ այդպիսի եռանդ ու վճռականութիւնը հակառակ կը լինեն իմ բնութեանը, բայց այն միտքը, որ ես սիրտ կ'անեմ այդպէս եռանդուն ու վճռաբար գործել, հաճոյք էր պատճառում ինձ: Բացի այդ՝ ես իբրեւ վառ երևակայութեան տէր մարդ արդէն տեսնում էի թէ ինչպէս ես ման եմ ածում Անեկային Հռոմում ու ցոյց տալիս նրան քաղաքը: Միայն Հռոմի մշտական բնակիչները կը հասկանան թէ ինչ տեսակ զարճութիւն է մարդու համար ցոյց տալ ուրիշներին և մանաւանդ սիրած կնկան այստեղի հնութիւնները:

Մեր խօսակցութիւնը ընդհատեցին պարոն ու տիկին Ղևիսները՝ դալով հօրս տեսութեան: Նրանք ամեն օր այցելում են հօրս: Մարդը ծագումով անգլիական հրէայ է, իսկ կինը իտալական ազնական ատմից է և հարստութեան համար է պսակել մարդու հետ: Ինքը Ղևիսը մի ճկերք մարդ է, քթիցը որ բռնես՝ հոգին կը տայ: Նա իւր ի բնէ թոյլ ոյժերի ներածից կրկնապատիկ աւելի վայելք է քաշել կեանքից: Այժմ նա հիւանդ է, ուղեղը կակղելու մօտ է, աշխարհումս ամեն բանի անտարբեր է վերաբերուով, մի խօսքով այնպիսի անհատներից է, որոնց կարելի է պատահել ջրաբուժական հիմնարկութիւններում: Տիկինը կերպարանքով Իւնոնային ¹⁾ է յիշեցնում. նրա յօնքերը ճակատի վրայ իրար են լսառնում և մարմնի ձևերը յունական արձանի մարմնագծերի են նման: Ես չեմ սիրում նրան, որովհետեւ Պիզայի աշտարակի նման է, միշտ թեքում է, բայց երբէք վայր չի ընկնում: Մի տարի սրանից առաջ մօտ-մօտ էի անում նրան, նա էլ սաստիկ կոկետութիւն էր անում ինձ հետ, որ սակայն երկուսիս համար էլ անհետևանք մնաց: Հայրս նրան սաստիկ հաւանում է: Ես մինչև անգամ կասկած էի տանում, թէ հայրս սիրահարւած է նրա վրայ: Յամենայն դէպս նա զմայլեցնում է հօրս իբրեւ արտիստի ու մտածողի, որովհետեւ իսկուպէս զեղեցիկ է ու սովորականից դուրս խելացի: Նրանց մէջ տեղի են ունենում անվերջանալի վէճեր, որ հայրս «Causeries romaines» (հռոմայական զրոյցներ) է անւանում: Այդ վէճերը հօրս միշտ հա-

¹⁾ Հին հռոմայեցիների գլխաւոր աւաւածուհին, Իւպիտէրի կինը:
Ծանօթ. թարգմ.

ճուրճիւն են պատճառում գուցէ և այն պատճառով, որ գեղեցիկ կնոջ հետ կենսական հարցերի մասին այդպէս դատողութիւն տալը նրան թւում է վերածնութեան ժամանակին արժանի, իսկ խաւական ու բանաստեղծական բան: Շատ քիչ է պատահում, որ ես մասնակցեմ նրանց զրոյցներին, որովհետեւ չեմ հաւատում տիկին Ղեւիսի անկեղծութեանը: Ինձ թւում է, թէ նրա յիշատի արտասովոր իմացականութիւնը ուղեղի զօրութիւն է և ոչ հոգու, և թէ իսկապէս նրա հոգը չէ ոչ մի բան բացի սեփական գեղեցկութիւնից ու անձնական յարմարութիւններից: Այստեղ ես շատ կանանց եմ պատահել, որոնք ձեւացնում են թէ լի են բարձր ձգտումներով և որոնք իսկապէս կրօնի, փիլիսոփայութեան, գեղարւեստի ու գրականութեան վրայ նայում են իբրեւ զգեստի պարադաների վրայ: Նրանք երբեմն-երբեմն զարդարւում են այդ բաներով, որովհետեւ կարծում են թէ այդ իրանց սազ է դալիս: Ես ենթադրում եմ, որ տիկին Ղեւիսը իսկ և իսկ այդպէս զարդարւում է երբեմն կենսական հարցերով, երբեմն հինաւուրց ֆունստանով ու Հռոմով, երբեմն վերածնութեան դարով, տաճարներով, Բորգեզէների կամ Կոլոնների պատկերադարաններով և ուրիշ այդպիսի բաներով: Ես հասկանում եմ, որ հզօր հոգիները կարող են դառնալ աշխարհիս կենտրոն, բայց այնպիսի կանանց մէջ, որոնք զբաղւած են չնչին բաներով, այդ՝ ծիծաղելի ու դատարկ եսականութիւն է:

Ես ինձ հարց առաջարկեցի, ինչիցն է յառաջանում արդեօք տիկին Ղեւիսի բարեկամութիւնը, աւելին կ'ասեմ՝ գորովը գէպի հայրս, և ինձ թւում է թէ հարցիս պատասխանը գտալ: Հայրս իւր՝ XVII-րդ դարը յիշեցնող մանէրներով նրա համար մի տեսակ «objet d'art» (գեղարւեստի առարկայ) է և որ աւելին է՝ հիւանալի ու բանական հայելի է, որի մէջ նայելով տիկին Ղեւիսը կարող է սրտի ուզածի չափ զնայել իւր խելքով ու գեղեցկութեամբ: Միւս կողմից նա շնորհակալ է հօրիցս նրա համար, որ նա իրա վրայ առանց կրիտիկայի է նայում և սաստիկ սիրում է իրան: Գուցէ այդ հողի վրայ նրա սրտումն էլ մի քիչ սէր է յառաջացել գէպի հայրս կամ զոնէ հայրս դարձել է նրա պահանջներից մէկը: Բացի այդ, տիկին Ղեւիսը կոկետ կնոջ հուշակ ունի, իսկ ամեն օր հօրս այցելելով նա հէնց զրանով պատասխանում է բոլորին՝ «Ձեր

կարծիքը սխալ է, այ տեսէք այդ ծերունին եօթանասուն տարեկան է, ոչ ոք չի կարող կասկած տանել թէ ես ուզում եմ գրաւել նրա սիրտը և սակայն ես նրան աւելի համակրութեամբ եմ վերաբերում քան ում և իցէ»։ Վերջապէս թէև նա իտալական հին տոհմի զարմ է, բայց պարոն Ղևիսը սոսկ պարոն Ղևիս է, այնպէս որ հօրս բարեկամութիւնը ամրացնում է նրանց զիրքը մեծ աշխարհում։

Մի ժամանակ ես ինքս ինձ հարցնում էի, թէ արդեօք նրա ամենօրեայ այցելութիւնների պատճառը զոնէ մասամբ ես չեմ— և ով գիտի, զուցէ և այդպէս է։ Յամենայն դէպս նրան գրաւողը իմ արժանաւորութիւնները չեն, ևս պակաս նրա համակրութիւնը զէպի ինձ։ Բայց նա զգում է, որ ես նրա վրայ սկեպտիկաբար եմ նայում և այդ նրան տանջում է։ Գուցէ ինձ ատում էլ է, բայց ուրախ կը լինի եթէ որ նրա առաջին ծունկ չոքեմ։ Ասեմք ես այդ կ'անէի, որովհետև նա մարդկային սեռի հրաշալի օրինակ (էկզէմպլար) է, կ'անէի թէկուզ նրա իրար խառնուած յոնքերի ու Իւնոնային արժանի ուսերի համար, բայց այնպիսի գնով, որին նա չի ուզում համաձայնել։

Ղևիսների զաւուն պէս հայրս ինչ որ փիլիսոփայական խօսակցութիւն սկսեց, որ հարցից—հարց անցնելով վերջացաւ մարդկային զղացմունքների անալիզով։ Տիկին Ղևիսը մի քանի չափից դուրս սուր դիտողութիւններ արեց։ Թանգարանի սենեակից անցանք ներքին պատշգամբը, որ պարտէզի կողմն է։ Մարտի տասն է դեռ, բայց այստեղ արդէն կատարեալ գարուն է։ Այս տարի ամեն բան վաղաժամանակ է լինում։ Յերեկը շոք է անում. մագնոլիաները այնպէս են ծաղկազարդւել, կարծես ձիւնով ծածկւած լինեն. զիշերը այնպէս տաք է լինում, կարծես յուլիս ամիսը լինի։ Սա էլ է երկիր, մեր Պլոշոյն է՛լ։ Լիակուրձք օդ եմ ծծում։ Տիկին Ղևիսը այդ պատշգամբում, լրացած լուսնի լոյսով այնպէս գեղեցիկ էր ինչպէս մի յունական երազ։ Տեսնում էի, որ նա այդ աննկարագրելի հոմական զիշերի տպաւորութեան տակ է։ Զայնը սովորականից աւելի քաղցրացել ու մեղմացել էր։—Վարելի է սակայն, որ նա, ինչպէս միշտ, այդ ժամանակն էլ միմիայն իւր մասին էր մտածում և զիշերւան գեղեցկութիւնը անմիջապէս իւր անձից անկախ չէր զգում։

գուցէ նա զարդարուամ էր լուսնի լոյսով, զիշերւան խաղաղութեամբ ու մագնովիաների բուրմունքով, ինչպէս զարդարուամ է գլխարկով, շալով և այլն: Բայց այդ զգեստը չափից դուրս սազում էր նրան: Եթէ որ սիրտս զրաւած չը լինէր Անելկայով, այդ պատկերը սաստիկ տպաւորութիւն կը գործէր ինձ վրայ: Այն էլ պէտք է աւելացնել, որ նա այնպիսի բաներ էր ասում, որոնք ամեն տղամարդու մտքովը չեն անցնիր:

Ամեն անգամ երբ տեղի են ունենում այդ «Causerie romaines»-ները ինձ միշտ թւում է, թէ հայրս, ես, այդ տիկին Դևիսը, մի խօսքով մենք ամենքս, հասարակական որոշ շրջանի պատկանող մարդիկս, իսկպէս իրական կեանքով չենք ապրում: Մեր տակին ինչ որ կատարում է, ինչ որ յառաջանում է, կռիւ է մղում գոյութեան համար, կտոր հացի համար. կայ իրական կեանք լի մրջիւնային աշխատանքով, անասնական պահանջներով, ախորժակներով, կրքերով, ամենօրեայ ջանքերով, — շատ շոշափելի, ազմկալից կեանք, որ ծովի պէս մռնչում է ու ալեկոծւում, իսկ մենք միշտ նստած մեզ համար այս կամ այն պատշգամբում, խօսում ենք զեղարւեստի ու գրականութեան մասին, սիրոյ ու կանանց մասին, օտար այդ կեանքին, հեռու այդ կեանքից, ջնջելով շաբաթւայ եօթ օրից վեց լի օրերը: Մենք առանց իմանալու միմիայն տօն օրւայ պէտքական տենչանքներ, ջղեր ու հոգի ունենք: Ընկղմած քաղցր դիլլետանտութեան մէջ ինչպէս գոլ լողարանի մէջ մենք ապրում ենք կիսաքուն՝ կեսարթուն: Քիչ-քիչ վատնելով մեր ժառանգական կայքերը և մկաննային ու ջղային ոյժերի ժառանգաբար ստացած պաշարը մենք հեռո՛հեռո՛է կորցնում ենք մեր ուսների տակի հողը: Մենք քամու թուրած աղուամազի նման մի բան ենք: Հէնց որ մի տեղ դադար ենք առնում, իրական կեանքը փչում տեղահան է անում մեզ և մենք տեղի ենք տալիս, որովհետև դիմադրելու ոյժ չենք զգում մէջներս:

Երբ որ այդ բանի մասին մտածում եմ, ապշած մնում եմ մեր մէջ նկատուող հազար ու մի հակասութիւններից: Օրինակ մենք մեզ համարում ենք քաղաքակրթութեան ծաղիկը, վերջին աստիճանը և միևնույն ժամանակ կորցրել ենք հաւատը դէպի մեզ: Մեզնից միայն ամենայիմարներն են գեռ. ևս հաւատում մեր raison

d'être-ին: Կեանքի մէջ մենք բնազդօրէն տօնային կողմեր, վայելքներ ու բախտաւորութիւն ենք փնտռում, բայց բախտաւորութեանն էլ չենք հաւատում: Ճիշտ է մեր պեսամիզմը¹⁾ մեր հաւանեան սիգարների ծխի պէս թեթեւ ու նոսր է, սակայն այնու ամենայնիւ սքողում է մեզնից հեռաւոր հորիզոնները: Այդ քողերի, այդ ծխի մէջ մենք ստեղծում ենք առանձին աշխարհ՝ կորած ընդհանուր կեանքի ամբողջութիւնից, փակւած ինքն իւր մէջ, մի քիչ ունայն ու քնէած:

Եթէ որ այդ այսպէս անւանւած տոհմական կամ դրամական արխտոկրատիայի վերաբերմամբ լինէր, այնքան էլ շատ կարեւոր երևոյթ չէր լինիլ: Բայց քիչ թէ շատ կորած աշխարհին են պատկանում բարձր կուլտուրա ունեցող բոլոր մարդիկ, մասամբ այդ աշխարհին են պատկանում գիտութիւնը, գրականութիւնը և գեղարւեստը: Մի այնպիսի բան է կատարել, որ այդ բոլորը բուն չի գնում կեանքի միջուկի մէջ, այլ առանձնանում է նրանից, կորում է նրանից ու կազմում է առանձին շրջաններ, ուստի և համ ինքը թառամում է հսկել չի ազդում մեր տակին վիտացող միլլիօնաւոր մարդկանց զազազութիւնն ամոքելու համար:

Ես չբրե վերանորոգիչ չեմ խօսում այդ հարցի մասին, որովհետեւ այդ իմ ուժիցս վեր է: Վերջապէս ինձ ինչ որ այդպէս է: Կը լինի այնպէս ինչպէս լինելու է: Սակայն երբեմն-երբեմն մի կիտորոշ զղացմունք է ծագում սրտումս, թէ ամբողջ կուլտուրային ինչ որ սարսափելի վտանդ է սպառնում: Այն ալիքը, որ մեզ սրբելու է երկրիս երեսից, աւելի բան կը տանի հետը, քան այն ալիքը²⁾, որ ողողեց տարաւ սրբորոտած պարիկների ու ժաբոների աշխարհը: Ճիշտ է, այն ժամանակաց մարդկանց էլ, երբ որ նրանք կորչում էին, թւում էր, թէ իրանց հետ միասին կորչում է ամբողջ քաղաքակրթութիւնը...

Այնուամենայնիւ որքան քաղցր է երբեմն՝ տաք ու լուսնեակ գիշերով նստել պատշգամբում ու մեղմացած ձայնով խօսել գեղարւեստի, գրականութեան, սիրոյ ու կանանց մասին, և միևնոյն ժա-

1) Թերահաւատ կամ կասկածոտ վերաբերմունքը դէպի ամեն բան, ինչ որ հաւատ է ենթադրում: Ծան. Խմբ.

2) Ֆրանսիական մեծ փղափոխութիւնը 1789 թ., Ծ. Թ.

մանակ նայել տիկին Գեփաի նման կնոջ՝ արժաթափայլ լոյսով լուսաւորեալ պրոֆիլի վրայ:

10 մարտի.

Սարերը, ժայռերն ու աշտարակները, քանի մարդս նրանցից հեռանում է, սքողում են կապուտակ մշուշով: Ես նկատել եմ որ կայ մի տեսակ հոգեկան մշուշ, որ իսկ այդպէս սքողում է մեզնից հեռաւոր անձանց: Մահը ոչ այլ ինչ է եթէ ոչ հեռացումն, բայց այնքան անսահման հեռաւորութեամբ, որ ամենասիրելի էակներն անգամ, այդ հեռաւորութեան մէջ ընկղմելով, հեռզհեռէ կորցնում են իրանց իրականութիւնը, կապուտականում են ու դառնում են միմիայն սիրելի սուերներ: Այդ հասկացել է յունական հանճարը, որ Ելիսեան դաշտերը լցրել է խուերներով: Սակայն չեմ ուզում ի չարը զործ դնել այդ օխտը համեմատութիւնները, մտադիր եմ շուտով գրել Անեկայի մասին: Բոլորովին հաւատացած եմ, որ սէրս դէպի նա չի պակասել և սակայն նա էլ ինձ համար մի տեսակ կապոյտին է տալիս ու այնքան իրական չէ, որքան Պլոշովումս էր: Ես նրան զգայարաններովս անմիջապէս չեմ զգում: Համեմատելով այն զգացմունքի հետ, որ ես տածում էի դէպի նա Պլոշովում, նա այժմ ինձ համար դարձել է մի քիչ աւելի սիրելի հոգի և մի քիչ պակաս տենչալի կին: Աւելի լաւ է այդ թէ՛ վատ: Որոշ տեսակէտից՝ լաւ, որովհետեւ տենչալի կին ինձ համար կարող է լինել մինչև անգամ տիկին Գեփաի, իսկ միւս կողմից՝ ով գիտի, այդ չէ՛ արդեօք պատճառներից մէկը, որ մինչև այժմ նամակ չեմ գրել Անեկային: Անկասկած տիկին Գեփաի այն պրոֆիլը, որ աչքի առաջիցս սկի չի հեռանում, ժամանակաւոր տպաւորութիւն է և մեծ նշանակութիւն չունի: Ընդհակառակը, երբ որ համեմատում եմ այդ երկու կանանց, իմ դէպի Անեկայն զգացած համակրութեանս վրայ աւելանում է մի տեսակ խանդաղատանք, և սակայն նրան թողել եմ անորոշ և անախորժ սպասող դրութեան մէջ: Այսօր հայրս նամակ գրեց հօրաբրոջս ապահովացնելու իւր առողջութեան մասին, ես էլ մի քանի խօսք իմ կողմից աւելցրի և հազիւ հազ կարողացայ բարե յիշել Անեկային ու մօրը: Յաւելւածում ի հօրկէ չէի կարող շատ էլ երկար բան գրել, բայց հօ

կարող էի գրել, որ շուտով առանձին ու մեծ նամակ կը գրեմ: Այդ խոստումը սպեղանի կը լինէր Անելկայի ու սլառաւների համար: Այդ էլ չ'արեցի, որովհետեւ չէի կարող անել: Այսօր ինձ համար դարձեալ տեղատուութեան օր է: Ապրելու փափագը և հաւատը դէպի ապագան քաշել զնացել են հեռու, շատ հեռու, այնքան հեռու, որ չեն երևում և աչքս տեսնում է միմիայն ցամաք ու աւազոտ յատակը: Չեմ կարողանում յաղթել այն մտքին, թէ ես կարող եմ Անելկայի հետ պսակել միայն այն դէպքում, եթէ բարեխիղճ կերպով համոզւած լինեմ, որ մեր ամուսնութիւնը երկուսիս էլ բախտաւորութիւն կը բերի: Անելկային եթէ գրելու լինեմ, պէտք է անպատճառ այդ տեսակ նկարագրեմ մեր ապագայ ամուսնութիւնը, մինչդեռ եթէ այդպէս նկարագրեմ՝ ստած կը լինեմ, խաբած կը լինեմ նրան պսակելուց առաջ, որովհետեւ իմ մէջս չը կայ այդ հաւատը, այլ նրա փոխարէն կայ կասկածոտութիւն կեանքի վերաբերմամբ առհասարակ և զգանք կեանքից:

Վատ է նրա սպասող և անորոշ դրութիւնը, բայց իմն աւելի վատ է և այնքան աւելի, որքան որ խոր սիրով եմ սիրում նրան:

11 մարտի.

Տիկին Նելսը, որին այն լուսնեակ գիշերւայ «Causerie»-ի ժամանակ ասացի սիրոյ ամենակարողութեան մասին մօտաւորապէս նոյնը, ինչ որ առաջ գրել էի յիշատակարանիս մէջ, ինձ Անակրէոն¹⁾ անւանեց, խորհուրդ տւեց, որ վայրի խաղողի պսակով զարդարեմ գլուխս և յետոյ լուրջ կերպով հարցրեց.

— Եթէ այդպէս է, էլ ինչո՞ւ էք պեսսիմիստի դեր խաղում: Այդպիսի աստծու հաւատալը մարդուս պէտք է բախտաւոր դարձնի: Ինչո՞ւ:

Նրան չը պատասխանեցի, բայց ես ինքս լաւ գիտեմ թէ ինչու: Սէրը յաղթում է մինչև անգամ մահին, բայց մահից սահպանում է միայն տեսակը և ոչ անհատին: Իսկ ինձ ինչ որ տեսակը

¹⁾ Հուշակաւոր չոյն քնարերգակ, որ իւր բանաստեղծութիւնների մէջ դովաբանում էր սէրը և գինին (վեցերորդ դարում Քրիստոսից առաջ):
Մանօթ. թարգմ.

կը պահպանէի, երբ որ Էս, այսինքն այն անհատը, որ զգում է սէրը, դատաւարուած եմ անողոք ու անխուսափելի կորուստի: Նուրբ դաժանութիւն չէ արդեօք այդ կարգը, որի շնորհիւ այն զգացմունքը, որ միմիայն անհատները կարող են զգալ, ծառայում է ու մի բանի պէտք է դալիս միմիայն տեսակի համար: Զգալ մէջը անմահ ոյժի երերանք ու դատաւարուած լինել մեռնելու, դրանից էլ աւելի ինչ անբախտութիւն կարող է լինել: Իրականութեան մէջ կան միայն անհատներ, իսկ տեսակը ընդհանուր զաղափար է և առանձին միաւորի վերաբերմամբ կատարեալ Նիրւանա է: Ես հասկանում եմ սէրը դէպի զաւակը, դէպի թոռը, դէպի ծոռը, այսինքն դէպի որոշ անհատներ, բայց արգասիքական զգացմունք դէպի իւր տեսակը կարող է տաճել միմիայն կամ սաստիկ կեղծող կամ սաստիկ յիմար դոկարինեօրը: Այժմ հասկանալի է ինձ համար, որ Էմպեդոկլից յետոյ շատ դարեր անցած՝ աշխարհ եկան Շոպենհաուէրն ու Հարոմանը:

Ուղեղս այնպէս է վատտակաբեկ, եղել ինչպէս կարող է վատտակաբեկ լինել ուժիցը վեր բեռ կրող մշակի մէջքը: Բայց մշակը աշխատելով զոնէ հաց ու հանգստութիւն է վատտակում իւր համար:

Անդադար չիշում եմ Սեռափնակու խօսքերը՝ «Տես, նրան էլ փիլիսոփայութիւն անելով ձեռքիցդ բաց չը թողնես, չը կորցնես, ինչպէս զուր կորցրել ես ընդունակութիւններդ ու երեսուն ու հինգ տարեաց կեանքդ»: Գիտեմ որ այդ ոչ մի հեռանքի չի հասցնիլ, որ այդ վատ բան է, բայց ես այնպիսի մարդ եմ, որ չեմ կարող չը մտածել:

13 մարտի.

Հայրս մեռաւ այսօր առաւօտեան դէմ: Հիւանդութիւնը մի քանի ժամից աւելի չը տևեց...

22 Մարտի: Պէլի Լաուրա ամարանոց:

Մահը այնպիսի անդունդ է, որ թէև զիտենք որ բոլորս էլ զլորւելու ենք մէջը, բայց էլի ամեն անգամ երբ մեր մտերիմներէց ու սիրելիներէց մէկը զլորւում է ներքեւ, մեր՝ վերելում մնացածներին սիրտը կտրատւում է վրդովմունքից, վշտից ու յուսահատու-

Թիւնից: Բոլոր դատողութիւնները ընդհատուում են այդ գահաւանդի վրայ և մարդ ուզում է միայն օգնութիւն կանչել որ ոչ մի տեղից չի կարող հասնել: Միակ օգնութիւն, միակ միութարութիւն կարող է լինել հաւատը, բայց ով որ զուրկ է այդ ջանից՝ կարող է միանգամայն ցնորւել մտածելով այդ յախտեանական զիշերի մասին: Օրը տասն անգամ ինձ թւում է, թէ անկարելի է որ այդպէս լինի, թէ այդ՝ տնհաւատալի բան է, թէ չափազանց սարսափելի բան կը լինէր եթէ մահը ամեն բանի վերջ զնեկիս լինէր, և օրը տասն անգամ սիրտս վկայում է, որ այդպէս է:

23 մարտի.

Պնդովից որ եկաց, հայրս այնպէս լաւ էր, որ մոքովս էլ չէր անցնում, թէ այդքան շուտով է վախճանւելու: Ի՞նչ զարմանալի խորշեր կան մարդու սրտումը: Վկայ է Աստուած, հօրս համարեա առողջ տեսնելով անկեղծ սրտով ուրախացայ, բայց որովհետեւ ճանապարհին գլուխս մոցրել էի թէ նա անշուշտ մեռած կը լինի և արդէն երեւակայում էի նրան մոմերով շրջապատած, ինձ էլ ծունկ չօքած նրա դագաղի մօտ, ուստի մի տեսակ հիասթափութիւն զկացի՝ կարծես թէ ամիստում էի որ զուր տեղը դարդ եմ արել: Այսօր այդ յիշողութիւնը դառնացնում է սիրտս և տանջում է ինձ իբրեւ խղճի խայթոց:

Ո՛րքան խոր է այն մարդու թշառութիւնը, որի սիրտն ու հոգին կորցրել են իրանց պարզութիւնը: Նոյնքան դառն, նոյնքան խղճի խայթոցի նման է և այն յիշողութիւնս, որ հօրս վախճանւելու ժամանակ իմ մէջ երկու մարդ կային, մէկը՝ մի զաւակ, որ անկեղծ սրտով տանջւում էր ու հեկեկանքը խեղդելու համար կըրծում էր մասնները, միւսը՝ մի իմաստակ, որ զննում էր մահւան հոգեբանութիւնը: Անասելի անբախտ եմ, որովհետեւ իմ բնութիւնը թշառ բնութիւն է:

Հայրս մեռնելիս իրան ամենեւին չը կորցրեց: Շաբաթ երեկոյեան մի քիչ աւելի վառ էր զգում իրան: Ուղարկեցի բժիշկ կանչեցի, որ յամենայն դէպս տանը լինի: Նա ինչ որ դեղ գրեց, որի առիթով հայրս իսկոյն սկսեց նրա հետ կուլել, ապացուցանելով որ այդ դեղը կարող է հարւածը արագացնել: Բժիշկը հանգստացրեց ինձ

ասելով, որ թէև մի անգամ արդէն անդամալուծութեան հարւածի ենթարկւած հիւանդի վերաբերմամբ երբէք չի կարելի հաւատացած լինել թէ կրկին հարւած չի լինիլ, սակայն ինքը չի կարծում, թէ վտանգը մօտալուտ է, և ենթադրում է, որ հայրս մինչև անգամ մի քանի տարի էլ կարող է ապրել: Այդ մի քանի տարւայ մասին նա հօրս էլ ասաց, որ ձեռքը թափ տւեց ու պատասխանեց՝ «կը տեսնենք»: Բայց որովհետև նա իւր կեանքում միշտ սովորութիւն ունէր կուել բժիշկների հետ ու ապացուցանել բժշկութեան անգորութիւնը, ես մեծ նշանակութիւն չը տւեցի այդ բանին: Սակայն ժամի տասի մօտ, թէյ խմելու ժամին, նա յանկարծ տեղից բարձրացաւ ու գողաց.

—Լէօն, շուտ արա հասիր ինձ...

Տասնըհինգ րոպէ անցած նա արդէն պառկած էր անկողնում, իսկ մի ժամից յետոյ սկսեց հոգեվարքը:

24 մարտի.

Ես համոզեցի, որ մարդ մինչև վերջին շունչը պահպանում է իւր բնաւորութեան բոլոր յատկանիշները և մինչև անգամ տարօրինակութիւնները: Այդպէս հայրս, չը նայելով մաքի այն հանդիսաւոր լրջութեանը, որ մարդուս ներշնչում է իւր մահւան րոպէի մօտենալը, կարծես մի տեսակ ինքնասիրական ուրախութիւն էր զգում, որ բժիշկն է սխալւել և ոչ թէ ինքը, և որ իւր անհաւատութիւնը դէպի բժշկութիւնը հիմնաւոր է եղել: Ասում էի այն, ինչ որ ասում էր նա իւր կեանքի վերջին ժամերին և բացի այդ կարգում էի նրա մոռածմունքները նրա դէմքի վրայ: Երևում էր որ նա զգացւած է րոպէի խորհրդաւորութեամբ, երևում էր հետաքրքրութիւն թէ արդեօք ինչ տեսակ է հանդերձեալ կեանքը, բայց և ոչ մի նշոյլ կասկածի, թէ այդ կեանքը կարող է գոյութիւն չ'ունենալ, այլ մի քիչ անհանգստութիւն, թէ արդեօք նրան այնտեղ լաւ կ'ընդունեն, և մի տեսակ անզիտակցական, աւելին կ'ասեմ, միամիտ հաւատարմութիւն, որ այնուամենայնիւ նրան այնպէս չեն ընդունիլ ինչպէս ամեն մի սովորական մարդու են ընդունում: Ես այդպէս չեմ մեռնիլ, որովհետև չունեմ կենսական այնպիսի յենարաններ, որոնք ոյժ ունենան դիմանալու մինչև անգամ մահւանս

ժամերին: Հայրս հոգին աւանդում էր արդար քրիստոնէացի խորին հաւատով ու ապաշխարութեամբ: Սրբութիւն առնելու ընդէին նա այն աստիճան սրտկառելի ու, մինչև անգամ կարելի է ասել, սուրբ էր, որ նրա պատկերը ընդմիշտ կը մնայ իմ յիշողութեանս մէջ:

Որքան փուճ, որքան ողորմելի է թուում ինձ իմ սկեսրտիկակա-
նութիւնը համեմատած հաւատի այդ անհոգիին ոյժի հետ, որ աւելի
սաստիկ է կարողանում յաղթել մահւան քան մինչև անգամ սէրը և
այն էլ հէնց այն բոպէին, երբ մահը հանգցնում է կեանքը: Հաղոր-
դութիւն առնելուց ու վերջին օծումից ¹⁾ յետոյ հայրս սաստիկ
խանդաղատեց: Ուժով գրեթէ ջղաձգաբար նա բռնեց ձեռքս ու
բաց չէր թողնում, կարծես ուզում էր կախ ընկնել կեանքից: Բայց
այդ նա էրկիւղիցը չէր անում, ոչ էլ յուսահատութիւնից, — նա
ոչնչից չէր վախենում: Մի քիչ յետոյ նկատեցի, որ նրա՝ շարունակ
ինձ վրայ յառած աչքերը անշարժանում ու պղտորանում են, իսկ
ճակատը ծածկւում է կարծես ցօղով. դէմքը աւելի ու աւելի սպի-
տականում էր. նա մի քանի անգամ բաց ու խուփ արեց բերանը,
կարծես աշխատելով օդ ներս առնել շնչելու համար, և վերջին ան-
գամ խորը հոգոց քաշելով շունչը փչեց:

Հօրս մարմինը զմռսելիս ներկայ չէի, այդ իմ ուժիցը վեր էր.
բայց զմռսելուց յետոյ ոչ մի բոպէ չէի հեռանում դիակից, որով-
հետև չէի ուզում, որ սրտանք կապելիս հօրս հետ վարւեն իբրև
մի իրի հետ: Ինչ սարսափելի բան է թաղման ծէսը սկզբից մինչև
վերջը — դագաղակիր բեմերը, մոմե՛րը, կնգուղները երեսներին քա-
շած աբեղաները, երգեցողութիւնը: Մինչև այժմ՝ դեռ ականջումս
հնչում է «Anima ejus» ու «Requiem aeternam»-ը: Այդ ծէսից
իսկ մահւան մնաց ու զարհուրելի շունչն է փչում: Դիակը դուրս
բերեցինք Սանտա Մարիա Մաջիօրէ եկեղեցուց: Այնտեղ ես վերջին
անգամ նայեցի հօրս սիրելի ու վեհ դէմքին: Campo Santo գե-
րեզմանատունը արդէն նմանում է Դաւարագեղ կղզու: Այս տարի
գարունը շատ շուտ է եկել: Ծառերը ծաղկում են, իսկ շիրիմների
սպիտակ մարմարները շողշողում են արևից: Որքան սարսափելի
դառն է՝ համեմատել այդ յարութիւն առնող կեանքը, այդ դաւարը,

¹⁾ Կաթոլիկ եկեղեցու ծէսի համաձայն:

արևն ու թռչունների ճըլճըլոցը թաղման հետ: Ահագին բազմութիւն էր գնում հանգստարան, որովհետեւ հայրս նոյնքան յայտնի էր Հռոմում իբրեւ բարեգործ, որքան հօրաքոյրս Վարչաւայում: Սակայն ինձ զայրացնում էր այդ դատարկաշրջիկների ամբոխը, որոնց դէմքերի վրայ ցոլում էր զարնանային տրամագրութիւն ու աշխոյժ: Ամբոխը, մանաւանդ Խաղիւսում, ամեն բան տեսարան է դարձնում իւր համար. այդ անգամ էլ այդքան ամբոխ էր հաւաքւել ոչ այնքան համակրութիւնից, որքան շքեղ թաղումն տեսնելու հետաքրքրութիւնից: Մարդկային եսականութիւնը սահման չունի և ես համոզւած եմ, որ մինչև անգամ բարոյապէս ու մտաւորապէս զարգացած մարդիկ թաղման յուզարկաւորելիս յուզարկաւորում են մի տեսակ անգիտակցական զարճութեան զգացմունքով, որ մեռնողը ուրիշ մարդ է եղել և որ թաղւողը իրանք չեն:

Հօրաքոյրս եկել էր, որովհետեւ հեռագրով կանչել էի: Բայց նա իւր անյողդողդ հաւատի տեսակէտից մահը համարում է կեանքի փոփոխութիւններից ամենաերջանիկը, ուստի մեզ պատահած դժբախտութիւնը այնքան չը խռովեց նրա սրտի հանգստութիւնը, որքան իմս: Ճիշտ է՝ չը նայելով դրան նա ի սրտէ լալիս էր հօրս դազաղի վրայ, բայց այդ չէր զրկել նրան հոգու անդորրութիւնից: Յետոյ նա ինձ հետ շատ սրտանց ու քաղցր խօսեց, բայց ես նրա ասածը սկզբում թարս հասկացայ, որի համար այժմ զղջում եմ: Նա մի խօսք անգամ չ'ասաց Անիկայի մասին ու խօսում էր միմիայն իմ ապագայ միացնակութեան մասին և ուզում էր ինձ տանել Պլոշով, հաւատացնելով որ այնտեղ իմ որբութիւնս ինձ այնքան էլ ծանր չի թւալ, որովհետեւ այնտեղ կը գտնեմ սիրող սրտեր, և ամենից առաջ նրա պառաւ սիրտը, որ աշխարհումս միմիայն ինձ է սիրում: Ես նրա խօսքերում միայն հարմնախօսութիւնը առաջ տանելու ցանկութիւն էի տեսնում, որ այն ժամանակ, երբ հայրս նոր էր շունչը փչել, ինձ շատ անվայել թւաց ու սաստիկ զայրացրեց: Ի՞նչ կեանքի, նշանդէքի ու հարսանիքի վրայ մտածելու մասին ժամանակ է այժմ, երբ դեռ ինձ պատում է մահւան աուերը: Զայրոյթիցս կտրական ու մինչև անգամ մի քիչ կոպիտ կերպով բացասեցի հօրաքրոջս: Ասայի, որ կ'երթամ ճանապարհորդելու՝ երեւի Կորֆու կղզին, յետոյ երկու շաբաթով կը վերադառնամ Հռոմ և միայն այնուհետեւ կը գնամ Պլոշով:

Հօրաքոյրս այլ ևս չէր աշխատում առաջ տանել իւր խօսքը: Հասկանալով իմ վիշտը նա մինչև անգամ այդ ժամանակ աւելի քաղցր էր վարւում ինձ հետ քան երբ և ինչէ: Քաղուծից երեք օր յետոյ նա գնաց Հոռմից: Ես Կորֆու չը գնացի: Դեհսենք ինձ բերեցին Պելլի իրանց ամարանոցը, ուր ես մի քանի օր է որ հիւր եմ: Անկեղծ է թէ չէ տիկին Դեհսը՝ չը գիտեմ և չեմ էլ ուզում քննել, այն գիտեմ միայն, որ ոչ մի քոյր չէր կարող ինձ նրանից աւելի կարեկցութեամբ ու հոգատարութեամբ վերաբերել: Բնաւորութիւնս այն աստիճան թունաւորած է սկեպտիկականութեամբ, որ պատրաստ եմ միշտ և ամեն բանի մասին կասկած տանել, բայց թէ դուրս գալ, որ այս անգամ կասկածս սխալ է, ես ինձ այդ կնոջ առաջ բոլորովին մեղաւոր կը զգամ, որովհետև նրա բարութիւնը իմ վերաբերմամբ միանգամայն վեր է սովորական չափից:

27 մարտի

Իմ պատուհանները նայում են Միջերկրական ծովի աննման կապուտակ մակերևոյթին, որի եզերքները պատած են մուգ սափիրազօյն շերտով: Ամարանոցի մօտ կնճռոտ ալիքները շողշողում են հրեղէն ձկնթեփի պէս, իսկ հեռւում այնքան հարթ ու հանդարտ է, կարծես կապուտակ ծովը քաղցր նիրհի մէջ լինի: Տեղուեղ սպիտակին են տալիս ձկնորսների նաւակների լատինական առաջաստները, իսկ օրը մի անգամ գալիս անցնում է Մարսելից Ձենովա գնացող շոգենաւը, քաշ տալով յետևիցը ծուխի խիտ վարսը, որ թուխպի նման սևին է տալիս ծովի վրայ, իսկ յետոյ նօսրանում է ու ցրւում: Ուրբան հանգիստ է այստեղ: Մարդուս միաբը ցրւում է այդ ծուխի նման երկու կապուտակ մակերևոյթների արանքին և մարդս ապրում է մի տեսակ երանելի բուսական կեանքով: Երէկ սաստիկ ջարդւած էի, բայց այսօր լիակուրծք ծծում եմ ծովային գով օդը, որից շրթունքներիս վրայ նստում են աղի խոնաւ հիւլէներ: Այսպէս թէ այնպէս՝ Ռիւիէրան ¹⁾ Ասածու ստեղծադործութեան գլուխ-գործոցն է: Երևակայում եմ թէ ինչ ճնցելի կը լինի

¹⁾ Ռիւիէրա կոչւում է Ձենովայի ծոցի եզերքը:

այժմ Պլոշովում, ինչ մթնդած եղանակ, ինչ խսլը գիժ մարտի յանկարծական թռիչքներ ցրտից զէպի տաքը, մօտագնաց թուխ-պից թափուղ ձիւնից զէպի արևի կարծառու ցոլումներ: Այստեղ երկինքը պարզ ու պայծառ է. ծովի զեփիւռը, որ այս րոպէիս զովաց-նում է ճակատս, կարծես համբուրում է երեսս. յափուկների (ռեզերա) արևածաղիկների ու վարդերի զմայլեցուցիչ բուրմունքը պարտէզի ածուններից ներս է լցում բաց պատուհանով այնպէս ինչպէս բուռ-վարներից տարածւում է իննկիանուշահոտութիւնը: Կախարդանք եր-կիր «ուր կիտրոն է բուսնում», և մասամբ կախարդած պալատ, որովհետև այս ամարանոցի համար արւած է ամեն բան, որ կարող էին անել Ղևիտի միլիոնները և նրա կնոջ ընտիր ճաշակը: Ինձ շրջապատում են գեղարւեստի chef d'oeuvre-ներ, — նկարներ, ար-ձաններ, կաւագործութեան անգուղական կերտածքներ, Բենեւ-նուտոյի ոսկերչական բանւածքներ: Բնութեամբ զմայլած աչքերը յափշտակում են գեղարւեստից և մարդուս հայեացքը չի իմանում ինչի վրայ հանգիստ առնի, եթէ ոչ այդ բոլոր գանձերի տիրունի շնաշխարհիկ հեթանոսունու վրայ, որը բացի գեղեցկութիւնից՝ ոչ մի կրօն չունի:

Բայց անարդար են վարւում որ նրան հեթանոսունի են ան-ւանում, որովհետև կրկնում եմ՝ անկեղծ թէ կեղծաւորաբար նա այնուամենայնիւ կարեկցում է ինձ և աշխատում է ամոքել վիրտուս: Ամբողջ ժամերով խօսում ենք հօրս մասին և յաճախ նրա աչքերը արտասուակալում են: Նկատելով, որ երաժշտութիւնը հանգստաց-նում է քայքայւած ջղերս, նա մինչև կէս գիշերները անց ածում է: Շատ անգամ մթնում նստում եմ սենեակումս, մոքամոլոր նա-յում եմ բաց պատուհանի միջով ալէծովի ծովի արծաթափայլ մակե-րեոյթին և ականջ եմ դնում ալիքների ձայնին խառնուղ այդ նւագներին, ականջ եմ դնում մինչև ինքնամոռացութեան մէջ ընկ-նելս, մինչև որ կիսաքուն դրութիւն է տիրում ինձ և ես մոռա-նում եմ իրականութիւնն ու նրա դառնութիւնները:

29 մարտի.

Սիրտս չի ուզում մինչև անգամ ամեն օր գրել: Միասին կարդում ենք «Ասուածային կառակերգութիւնը», կամ աւելի ճիշտն

ստած միայն նրա վերջին մասը: Մի ժամանակ ինձ աւելի գրաւում էր ահ ու սարսափով լի Ղաթնիքի պլաստիկան, իսկ այժմ զւարճութեամբ խորասուզւում եմ Դանտէի Դրախտի Լուսաւոր մշուշի մէջ, որ լիքն է աւելի ևս լուսաւոր ոգիներով: Երբեմն ինձ թւում է, որ այդ ճառագայթների մէջ տեսնում եմ ինձ ծանօթ սիրելի մի դէմք և այն ժամանակ վիշտս համարեա քաղցրանում է: Այժմ միայն հասկացայ Դրախտի բոլոր գեղեցկութիւնները: Երբեք մարդկային ոգին այնքան լայն չի պարզել իւր թւերը, չի ընդգրկել այնպիսի անհուն տարածութիւն, այնպէս առատ փոխառութիւն չի արել անվախճանութիւնից, ինչպէս այդ անմահ ու մեծ պօեմայում: Անցեալ օրը, երէկ և այսօր կարդում էինք նաւակում: Սովորաբար ավից շատ հեռու ենք գնում: Եթէ ծովը բոլորովին հանդարտ է լինում, առաքատը իջեցնում եմ և կարդում ենք տառնակով արիքի շարժումից, կամ ձիւնն ասած նա կարդում է, իսկ ես լսում եմ: Երէկ ամբողջ երկնակամարը արևի մայր մանկլուց ցետոց շառագունւեց. նա նստած էր դիմացս ու կարդում էր, կարծես ներշնչման ազդեցութեան տակ, երբեմն-երբեմն բարձրացնելով աչքերը, որոնց մէջ արտափայլում էր վերջալոյսը: Այդ շառագոյն փայլով լուսաւորւած, հեռու եզերքից, նաւակի մէջ նստած, տեսնելով դիմացս այդ հրաշագեղ կնոջը և լսելով Դանտէի բանաստեղծութիւնը, ես կատարեալ իլլիւզիայի մէջ էի գտնւում,—ինձ թւում էր թէ իրական կեանքով չեմ ապրում:

30 մարտի.

Երբեմն-երբեմն վիշտս, որ կարծես արդէն փարատւում էր, զարթնում է սրտումս նոր ոյժով: Այդ բուրբուններին ուզում եմ այստեղից փախչել:

31 մարտի ¹⁾.

Այսօր շատ եմ մտածել Անեկայի մասին: Այնպէս եմ զգում, կարծես մեզ իրարից ծովեր ու ցամաքներ բաժանելիս լինեն: Ինձ թւում է թէ Պլոշովը աշխարհիս ծայրումն է, ինչ որ հիպերբո-

¹⁾ Այս ամբողջ հոտածը (մինչև ապրիլի 2-ը) ուսերէն չի թարգմանւած: Ծանօթ. թարգմ.

րէցեան երկիրներում: Դա այն տեսակ իլլիւզիա է, որի մէջ գտնուելիս մարդ իւր անհատական տպաւորութիւնները ընդունում է իբրեւ առարկաների իրական դրութիւն: Խակապէս ոչ թէ Անեւկան է ինձնից հեռու գտնուում, այլ ես եմ հեռոգհեռէ աւելի ու աւելի հեռանում այն Պլուշովսկուց, որի սիրտն ու միտքը առաջ զբաղւած էին միմիայն Անեւկայով: Դրանից չի կարելի եզրակացնել, թէ իմ համակրութիւնս զէպի նա բոլորովին սառել է: Սակայն, քննելով այդ զգացմունքս, նկատում եմ որ նա կորցրել է իւր ներգործական բնաւորութիւնը: Մի քանի շաբաթ սրանից առաջ՝ սիրելով ես ցանկանում էի մի բան, այժմ սիրելով՝ ես ոչինչ չեմ ցանկանում: Հօրս մահը անօսրացրեց զգացմունքս: Այդպէս կը լինէր օրինակ եթէ մի գրականական երկասիրութեամբ զբաղւած լինէի և արտաքին դժբախտ զէպքեր ստիպէին թողնել զբաղմունքս: Սակայն այդ բաւական չէ: Հոգուս բոլոր կարողութիւնները մինչև վերջին ժամանակներս լարւած էին նետի աղեղի նման, իսկ այժմ սաստիկ վշտի և աշտուղի քաղցր կլիմայի, այդ կապուտակ մակերևոյթների, այդ կարծես, քնելու պատրաստուելով ծփող ծովի ազդեցութեան տակ թուլացել են: Ինչպէս ասացի վերևը, բուսական կեանքով եմ ապրում. հանգստանում եմ այնպէս, ինչպէս հանգստանում են բոլորովին ջարդւած ու յոգնած մարդիկ և այնպէս քաղցր նիւրհ է իջել վրաս, կարծես շարունակ ընկղմւած լինեմ տաք ջրով լիքը աւազանի մէջ: Երբէք այնքան անընդունակ չեմ զգացել ինձ որ և է գործ սկսելու, ինչպէս այժմ եմ զգում, և ինձ ահաճութիւն է պատճառում մինչև անգամ որ և է ձեռնարկութեան մասին մտածելը: Եթէ ուզենայի ինձ համար մի նշանաբան գտնել, այս կը լինէր իմ նշանաբանս — «Չը զարթեցնէք ինձ»:

Ինչ կը լինի երբ որ զարթնեմ — չը գիտեմ: Այժմ տրտում է սիրտս, բայց լաւ եմ զգում ինձ, չեմ ուզում զարթնել և պարտաւոր էլ չեմ զգում ինձ զարթնելու: Յիրաւի մինչև անգամ ես ինքս դժւար եմ կարողանում երևակայել թէ որքան հեռու եմ այժմ այն Պլուշովսկուց, որ իրան կապւած էր համարում Անեւկայի վերաբերմամբ: Կապւած, — ինչով, ինչու, ինչ է կառարել իմ ու նրա մէջ: Մի թռուցիկ, համարեա աննկատելի հպաւորութիւն իմ շրթունքներիս նրա ճակատին, — հպաւորութիւն, որ մեզ պէս մօտիկ ազգա-

կաններ ձեռն շատ հեշտ կարելի է արդարացնել բարեկամական յարաբերութեամբ... ծիծաղելի խղճահարութիւն է: Միթէ՞ այդպիսի հանգոյցներով եմ յաճախ յարաբերութիւններ կապել, որոնց կարելը յետոյ ինձ ամենեւին խղճահարութիւն չի պատճառել: Եթէ որ նրան ազդական չը գայի, — ուրիշ բան է: Ճիշտ է՝ նա այն ժամանակ ուրիշ կերպ էր նայում զրա վրայ, ես էլ, որ երբէք ինքս ինձ չեմ խաբում, խոստովանում եմ, նոյնպէս ուրիշ կերպ էի նայում, բաց... Ասեմք միւսնոյն է, թող այդպէս լինի, թող մի քիչ էլ մեղաւոր լինեմ: Աշխարհիս երեսին իւրաքանչիւր ժամ քիչ չարագործութիւններ են կատարում՝ ինչ է, որոնց առաջ իմ խաբէութիւնը Անելիացի վերաբերմամբ բոլորովին երեսայական մի բան է երևում: Մարդու խիղճը միայն այն զէպքում կարող է այդպիսի յանցանքներով զբաղւել, եթէ որ ոչինչ չունի անելու և աւելորդ բաների յետեւից է ընկնում: Այդ տեսակ չարագործութիւնները այնպէս են վերաբերում իսկականներին, ինչպէս մեր պատշգամբներում վարած դատարկ խօսակցութիւնները կեանքի դժւար ու ծանր իրականութեանը:

Սակայն չեմ նախատեսում թէ ինչ է լինելու, սիրտս այժմ նախ և առաջ ուզում է հանգստութիւն և ես աւելի լաւ եմ համարում ոչնչի մասին չը մտածել: «Մի զարթեցնէք ինձ»: Այսօր ճաշին խօսք եղաւ, որ ապրիլի կէսին, երբ որ շոքերը սկսեն, Պելիից կ'երթանք Զւիցերիա: Այդ էլ մինչև անգամ՝ ինձ սարսափեցնում է: Ինչպէս երևում է խեղճ Ղևիսի կինը ստիպւած է լինելու տեղաւորել մի որ է հիւանդանոց: Նա սկսում է խելագարւել: Ամբողջ օրով լուռ ու մոռնջ նայում է գետնին, երբեմն-երբեմն միայն աչքը քցելով իւր եղունգներին, որովհետեւ միշտ նրան թւում է թէ եղունգները թափւում են: Անզուսպ կեանքի ու մորթիի հետևանքն է այդ:

Վերջացնում եմ զրելս, որովհետեւ մօտենում է մեր ծովում գրօթնելու ժամը:

2 ապրիլի.

Երէկ փոթորիկ էր: Հարաւային քամին քշում էր ամպերը՝ ձիւրի ջուկի նման: Սկզբում հողմը ճեղքում ու ծլատում էր թուխպը, կիտում էր մի տեղ ու ցիրուցան էր անում երկնակամարի

տակ, յետոյ առաւ սակը և որքան ուժումը կար՝ խփեց ծովի երեսովը, որ բարկացած մարդու դէմքի նման մի ակնթարթում մթնոլեց ու սկսեց ի պատասխան փրփուր ցայտել դէպի վեր: Կատարեալ կռիւ երկու կատաղի ոյժերի, որոնք փոխադարձաբար հարւածելով միմեանց՝ որոտ ու կայծակ են յառաջացնում: Բայց այդ բոլորը կարճ ատեն: Մենք այնուամենայնիւ չը գնացինք մեր սովորական զբօսանքը կատարելու, — ծովը շատ սաստիկ էր ալէկոծւում: Դրա փոխարէն մենք նայում էինք փոթորկին ապակիապատ պատռվամբից և երբեմն — երբեմն նայում էինք իրար: Ել չենք կարող ինքներս մեզ խաբել: Մեր մէջ ինչ որ ծաղում է, ինչ որ նկատւում է կատարել: Մեզնից ոչ մէկը սովորական բարեկամական յարաբերութեան սահմանից դուրս եկող ոչ մի խօսք չի արտասանել, ոչ մէկս ոչինչ չենք խոստովանել իրար և ստկացն, երբ որ մենք խօսում ենք միմեանց հետ, զգում ենք, որ մեր խօսքերը միայն քողարկութիւն են մի ուրիշ բանի: Միևնոյնն է լինում, երբ որ գնում ենք ծովը զբօսներու, երբ որ միասին կարդում ենք, երբ որ նա ածում է և ես լսում եմ: Մեր բոլոր այդ արարմունքները երևում են իբրև պատրակ, իբրև կեղծ արտաքին ձևեր, որոնց տակ դարանամուտ եղած թաղնում է բանի խորհրդաւոր էութիւնը, որ առայժմ լուռ ու մունջ է և դէմքը ծածկած, բայց միշտ ներկայ է մեր արածներին և սուերի պէս հետևում է մեզ: Մեզնից ոչ մէկը դեռ չի ուզում նրա անունը տալ, բայց երկուսս էլ շարունակ զգում ենք նրա ներկայութիւնը: Այդ երևոյթը անշուշտ կրկնում է ամեն անգամ, երբ տղամարդը և կինարմատը սկսում են փոխադարձաբար ներգործել միմեանց վրայ: Երբ է այդ սկսել մեզ համար, ճիշտը չեմ կարող ասել, սակայն պէտք է խոստովանեմ, որ բոլորովին անակնկալ կերպով չի սկսել:

Դեիսենց հիւրասիրութիւնը ընդունեցի, որովհետև տիկին Դեիսը հօրս բարեկամունին էր և նրա մահից յետոյ ինձ այնքան կարեկցաբար էր վերաբերւում, որքան ոչ ոք Հռոմում: Սակայն ինքազիտակցութիւնս այնքան զօրեղ է և ես այն սաստիճան կարողանում եմ երկուսի բաժանել, որ այստեղ գալուս պէս, չը նայելով որ սիրտս դեռ մորմոքւում էր վշտից, իսկոյն զգացի որ իմ ու այդ կնոջ յարաբերութիւնների մէջ ինչ որ փոփոխութիւններ են կատար-

ւելու: Ձայրանում էի ինքս ինձ վրայ, որ հօրս մահւան գրեթէ հետեւեալ օրը մտքումս կարողանում է տեղ գտնել այդպիսի զիտակցութիւն, բայց այնուամենայնիւ այդ զիտակցութիւնը կար մէջս: Այժմ արդարանում են միայն իմ գուշակութիւններս: Իսկ եթէ ասացի, թէ մեր փոփոխած յարաբերութեան դէմքը քողարկած է, այդ նրա համար էր միայն, որ չը գիտեմ, թէ երբ կը կատարւի յեղաշրջումը և ինչ ձևով, բայց բովանդակութիւնը գուշակում եմ և այդ գուշակութիւնների թովիչ տպաւորութեան տակ եմ գըտնուում: Շատ միամիտ պէտք է լինէի, եթէ ենթադրէի, թէ նա այդ բանը այնքան լաւ չի զիտակցում որքան ես: Երևի ինձնից աւելի լաւ զգալիս կը լինի: Հաւանականօրէն նա է ղեկավարում այդ փոփոխութիւնները և ինչ որ լինում է՝ կատարւում է նրա կամքովը և նրա սառը դատողութեան համաձայն: Որսորդ Նիանան որոգայթ է լարում որսի համար: Սակայն ինձ ի՞նչ, ի՞նչ եմ կորցնելու որ: Ինչպէս գրեթէ իւրաքանչիւր տղամարդ՝ ես այն տեսակ վտանգաւոր երէններիցն եմ, որոնք թոյլ են տալիս իրանց հալածել միայն նրա համար, որ յարմար ըտպէին իրանք յարձակւեն որսորդի վրայ:

(Կը շարունակւի)

ԱԽԹԱՄԱՐ

(ԱԶԳԱՅԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ)

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Ծիծաղախիտ վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առաջնեայ
Ծովն է մանում զաղասգողի
Ամէն գիշեր մի տըղայ:

Ծովն է մանում առանց նաւակ,
Բազուկներով առնացի
Զուրը ճեղքում, լող է տալիս
Դէպի կղզին դիմացի:

Խաւար կղզուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչում է նրան,
Մի վառ փարոս նրա համար,
Զը մոլորի որ ճամբան:

Ծփում է ծովն ալիծածան—
Ծփում է սիրաւ տըղի,
Գոռում է ծովն անհրաձայն—
Նա կռւում է կատաղի:

Ոչ մի վտանգ նա չի հարցրել
 Ոչ մի գիշեր մթնազին,
 Միայն ճգնում է շուտով հասնել
 Երևացող կըրակին:

Սիրուն թամարն ամեն գիշեր
 Այնպես կրակ է անում,
 Եւ սպասում է անհամբեր
 Այնտեղ-մօտիկ դարանում:

Ծփում է ծովն ալեծածան -
 Ծփում է սիրտը տըղի,
 Գռում է ծովն ահեղաձայն -
 Նա կռւում է կատաղի:

Եւ թամարը սրտատրոփ
 Արդէն լսում է մօտիկ
 Զրի ճեղքին և ողջ մարմնով
 Խանդից այրւում է սաստիկ:

Լռեց յանկարծ... և ծովափին
 Երևեցաւ մի սուեր...
 Ահա և նա... իրար գտան...
 Կասկածաւոր լուռ գիշեր...:

Միայն ալիքը վանայ ծովի
 Մեղմիկ զիպչում ափերքին,
 Հրհրելով հեռանում են
 Շշուռներով անմեկին:

Նրանք կարծես փրսփրսում են...
 Եւ ասողերը կամարից
 Միաբերան բամբասում են
 Լիրբ, անամօթ թամարից...

Բա՛րբասում ե՛ն կուսի սրտում...
 Եւ դարձեալ մոլթ գիշերով
 Մէկը խաւար ծովն է մոնում,
 Միւսը ահից դողալով

Ծունկ է չոքում լուռ ծովեզրին
 Եւ, ականջը խոնարհած,
 Հեռւում է ջրի ձայնին,
 Որ հեռանում է կամաց...

Միւս գիշերը, նոյն ժամանակ,
 Էլ նոյն կրակն է վառւում,
 Եւ կըրակի շուրջը դատարկ
 Էլ նոյն անցքն է կատարւում:

Իսկ թամարի հօր հարեան
 Մի քանի մարդ չարասէր
 Նրանց գաղտնիքն իմացան
 Եւ ամպամած մի գիշեր

Լոյսը հանգցրին. լողորդն յոգնած
 Մոլորեցաւ սև ծովում,
 Երբոր նայեց, տեսաւ հանգած,
 Փարոսն էլ չի երևում:

Լոյսը հանգցրին չար գիւղացիք
 Եւ կանգնած են լուռ ու մունջ.
 Դէպի ափերն այն ուղղաձիգ
 Հեռից հողմը դառնաշունչ
 Բերում է ձայն կիսամար—
 «Ա՛խ թամար...»

Մօտ է ձայնը. խօլ խաւարում,
 Ժայռերի տակ սեպացած,

Ուր ամեհի ծովն է գոռում;
 Մերթ կորչում է խլացած
 Մերթ լսում է ուժասպառ --
 «Ա՛խ Թամար...»

Աւաւտեան ծովը ծփաց
 Ափը ձգեց մի զիակ.
 Նորա դէմքը այլանդակած
 Կարծես մեռած ժամանակ
 Մրմնջում էր անբարբառ --
 «Ա՛խ Թամար...»:

Այն օրանից զրա համար
 Կղզին կոչեց «Ախթամար»:

1891 թ., գեկտեմբերի 11:

ՀԻՄՆՈՒՂԽՆԵՐԸ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆԻ

Հրաբուլիւններէ տեսքը:—Վեղուիւր:—Ետնան:—Արարատը, Ալազկազը:—Մոլերի և
ովկիանոսների հրաբուլիւնները:—Հանգչած հրաբուլիւններ:—Իլիսուր փաստերը:—
Հիւսթէզ ու Թէօքիա:—Կանաւ-Լապլասի Թէօքիան:—Հրաբուլիւնային երեւոյթներ
ըստտրուութիւնը:

I

Հրաբուլիւնային երեւոյթը աշխարհիս ամենահսկայական երեւոյթներէց
մէկն է: Կարճ միջոցում հրաբուլիւնային ուժերը ընդունակ են կազմել լեռ-
ներ հազարաւոր ոտնաչափ րարծրութեամբ, աւերելով իրանց շուրջը ամ-
բողջ գիւղեր և քաղաքներ:

Ի՞նչ կարող է լինել աւելի տհաճ լինողը, որը գետնի տա-
կից դուրս ցատկեցրեց Արարատը, Ալազկազը և շատ ուրիշ նոյնանման
սարեր ¹⁾: Հրաբուլիւնային լեռները ըստ մեծի մասին հեշտ ջրկտամ են
ուրիշներէց իրանց կոնաձև տեսքով: Այդ լեռների զազաթը լինում է տա-
փարակ և ունենում է մի ծակ, որին անուանում են հրաբուլիւնի բերան,
բաժակ կամ խառնարան, կամ կրատէր:

Վեղուի հրաբուլիւն, որը գտնւում է խալիսպում Նեապոլ քաղաքից
2 վերստ հեռու, ամբողջ պատմական ժամանակը ցոյց էր տալիս գործու-
նէութեան նշաններ: 79 թիւն Ք. Յ. Վեղուի մօտ գիւղերի և քաղաքների
բնակիչները լսեցին մի սարսափելի բոտրերիբազ զարկ, որից գետինը
սկսեց սատիկ արորել: Վեղուի զազաթը ձեղքակց և գուրս թափեց
աճաղին բարձրութեան ջրի գոլորշիի սիւներ: Յետոյ սկսեց քարերի,
հրաբուլիւնային փոշիի և հրաբուլիւնային աւաղի արտալիւծումը: Քոսան
վերստ տարածութեան վերայ բոլոր երկինքը մթնեւ էր գուրս թափւող

¹⁾ Ար փոքր ուշ մենք կը տեսնենք, որ այդ լեռները իրաւ հրաբուլիւնային
ոյժերէ ազդեցութեան տակ են գոյացեր:

աւաղից և փոշիից, թէ ինչ քանակութեամբ վերջին նիւթերից դուրս թափուեց, կարելի է եղրակացնել նրանից, որ աչք նվաթերի տակ բոլորովին թաղւեցան երեկ քաղաք՝ Հերկուլանում, Ստաբիա և Պոմպէյա: Այդ քաղաքները աճողէս կորան աւաղի ու փոշիի տակ, որ մինչև անգամ նրանց անդը որոշել անկարելի էր: Հետոյ՝ Վիզուվի գործունէութիւնը դադարեց, մի շարք տարիներ Վիզուվի հանգստանում էր: Զետոյ նորից սկսեց արտաժիւթում և աչքից հետևարար չարունակում է մինչև մեր ժամանակները: Լնչպէս տեսնում ենք, հրաբխային գործունէութիւնը արտաշաղտում է պարբերաբար, արտաժիւթումից լետոյ սկսում է անգործութիւնը, լետոյ էլի արտաժիւթում և աչքի:

Հաստ սատիկ էր Վիզուվի վերջին արտաժիւթումը, որը սեղի ունեցաւ 1872 թվին: Վիխաւոր կրտսերից սկսեց դուրս թափուել ահագին քանակութեամբ գոլորշի, քարեր, հրաբուխային աւաղ և վերջում—լաւա, որը խառնուրդ է զանազան հանքերի հալւած գրութեան մէջ: Բալց որովհետև շատ հանքեր հալւում են ահագին ջերմութեան ներքոյ զարմանալի չի լինել աչք ժամանակ, ելձ, ասեմ որ լաւալի ջերմութիւնը հասնում է 1000 աստիճանի, նոյն տարին Վիզուվի գագաթը կրտսերի մօտ ձեղքուեց, ձեղքիցը դուրս թափուեցին ջրի գոլորշի, աւաղ և քարեր, որոնք ընկնելով ձեղքի չորս կողմը, կապնեցին նոր հրաբխային կոն. ուրեմն աչք վերջին կոնը կազմած էր զլիաւոր կոնի վերաւ: Աչքէս է պատահում, որ շատ ժամանակ արտաժիւթումից լետոյ զլիաւոր հրաբուխի գագաթին, կամ լեռան լանջի վերաւ գոյանում են երկրորդական հրաբուխային կոներ:

Ետան Նւրուպալի երկրորդ լաւանի հրաբուխն է, նա գտնւում է Անցիլիա կղզու վերաւ: Այդ կոնածն տարը որի բարձրութիւնը համարում է 1580 սաժէն կամ մօտաւորապէս 3 վերտո, շատ վաղուց է ցուց տալիս գործունէութեան նշաններ, ամենատատիկ արտաժիւթումը եղաւ 1669 թ., երբ լաւան դուրս գալով կրտսերից սկսեց հոսալ ցածր: Լաւալի հոսանքը անցաւ երկար տարածութիւն և ոչնչացրեց 14 քաղաք և դիւղ:

Վերև եւ ասեցի որ Արարատը, — Ալադիւզը Նոյնալիս հրաբուխային գործունէութեան արտադրութիւն են: Աչք մի փոքր ընդարձակօրէն խօսեմ նրանց մասին:

Հէնց սկզբից նրանք մեզ հետաքրքրում են իրանց ուղիղ կոնածն տեսքով: Երկու լեռների լանջերը ծածկւած են արդէն սառած լաւալին կեղևով, որը քաշանալով հասնում է մինչև Արաքսը Բացի դրանից լաւանի է որ 341 թ. Ք. շ. աչք լեռների մօտ պատահեց սատիկ երկրաշարժ, որից լետոյ լեռների գագաթից սկսեց դուրս գալ ծուխ և կրակ: Մորդովիցեւը, որը փորձեց վերջնական բարձրանալ Արարատի գագաթը, պատմում է որ լեռան լանջի վերաւ օդը լցւած էր ծծմբային գազով: Խախ ծծմբային գազի արտադրելը Նոյնալիս հրաբուխային կոնային շերտից մէկն է:

Արարատը և Արագածը միակ հրաբուխները չեն կոչւում, ամբողջ հայոց լեռնադաշտը ծածկւած է հրաբխային կոներով, բայց վերջինները գործունէութեան նշաններ չեն ցույց տալիս, բացի Տանդուրեձից, որից հիմա էլ գուրս է գալիս գոլորշի և գազեր:

Ջարմանալի է որ արտավիժումը լինում է ոչ միայն գետնի երեսից, այլ և ծովերի և ովկեանոսների լատակից: 1811 թվին Ատլանտիան ովկեանոսի լատակից սկսեց արտավիժում: Գուրս թափւած նիւթերից կազմւեց մի ամբողջի կղզի, որի կոնի բարձրութիւնը հասնում էր 300 ոտնաչափ: Բայց ծովի ալիքները շուտով ոչնչացրին նորակազմ կղզին:

Մի աղբակիս արտավիժում եղաւ 1831 թվին Միջերկրական ծովում. ծովի երեսից սկսեց բարձրանալ գոլորշի, ջուր և սլինդ հրաբխային նիւթեր, որոնցից կազմւեց կղզի 200 ոտնաչափ բարձրութեամբ: Այդ կղզին նոյնպէս շուտով ոչնչացաւ:

Անհնարին է մի առ մի նկարագրել բոլոր հրաբուխները, որովհետեւ նրանց թիւը հասնում է 321. Կան և աֆրիսի հրաբուխներ, որոնք բոլոր պատմական ժամանակներում գործունէութեան ոչ մի նշան չեն ցույց տալիս, թէ և ինչպէս կոնաձև տեսքը, աֆրիսի և ուրիշ լատակութիւնները պարզ ապացոյց են որ զրանք մի ժամանակ եղել են խոկական հրաբուխներ: Այժմ այդ հրաբուխները, ինչպէս ասում են, հանգել են: Ինչպէս օրինակ հանգած հրաբուխներ կարելի է համարել Ուկերնի հրաբուխները խումբը Ֆրանսիայում:

Այժմ աւելորդ չի լինիլ թեւէ հրաբուխներին վերաբերեալ գլխաւոր փաստերը: Արտավիժումը սկսւում է ստորերկրեալ զգրղիւնով և երկրաշարժով: Սառսիկ արտավիժման սկզբումը լինում է աֆրիսի զգրղիւն, որ լսելի է լինում մինչև անդամ 600 — 700 վերստ հրաբուխից հեռու: Անմիջապէս զգրղիւնից կամ երկրաշարժից վետոյ գուրս է թափւում ջրի գոլորշի գլխաւոր կրատէրից կամ նոր ճեղքւած տեղից: Գոլորշիի սլւները շատ անգամ ահագին բարձրութեան են հասնում. վեցուկի 1822 թ. արտավիժման ժամանակ գոլորշին բարձրանում էր 1400 սաժէն:

Ինչպէս չարտնի է, օդի բարձր շերտերը աւելի ցածր ջերմութիւն ունեն. ալդ պատճառով գոլորշին, հասնելով աւելի ցուրտ շերտերին, կորցնում է իւր գաղափն դուրսիւնը և ջրի փոխելով կաթիլները թափւում են ցածր: Այսպէս գոյանում են առատ անձրեւներ: Բացի գոլորշիից գուրս է թափւում քլոր-ջրածինային գազ (хлороводородный газъ), ամլաթթւաւ ծծմբային գազ, հասարակ աղ և ալլն: Արտավիժման գլխաւոր նիւթերից մէկն էլ լաւան է, որի ինչ լինիլը արդէն չափանցի մի փոքր վերստ լաւան կամ ցածրանում է հրաբուխի գաղափից կամայ կամայ, կամ հոսում է զարմանալի արագութեամբ և նրա առաջ ոչինչ չի զիմանում. աները, ծառերը, մինչև անգամ ամբողջ գիւղերը ոչնչանում են կրակոտ հոսանքի առաջ: Խալանդիպում մի արտավիժման ժամանակ լաւալի հոսանքները

տարածւեցին հազարաւոր քառակուսի վերտո, լցնելով ճանապարհի վերայ ամբողջ ձորեր:

Պատահում է, որ կրատերից դուրս ցատկով զոլորչին իւր հետ բարձրացնում է լաւալի կտորներ, որոնք պատելով բարձր օդի մէջ՝ ընդունում են գնդակի ձև և կրկին ընկնում են գետնի վերայ: Այդ գնդակաձև լաւալի կտորները անւանում են հրաբուխալին աւամբեր (бомбы): Նոյն զոլորչին բարձրացնում է նաև քարեր: Հրաբուխալին աւազը և հրաբուխալին փոշին լաւալի մանրացած կտորներն են: Այս վերջին ներթերը դուրս են թափւում ահագին քանակութեամբ: Օրինակ 1835 թ. Կոսեզին հրաբուխի (գտնւում է Նիկարագուայում) արտաթփած աւազով և փոշիով ծածկւեցին չրջակալ գիւղերը: Այդ գիւղերից մի քանիսները 40 վերտո հեռաւորութիւն ունէին հրաբուխից:

Շատ անգամ հրաբուխալին աւազը և թողը, բարձրանալով օդի մէջ և խառնուելով անձրևի հետ, կազմում են հրաբուխալին ցեխ: Յետը թափւում է հրաբուխի վերայ, գոլանում են ահագին ցեխի հոտանքներ, որոնք զարմանալի արագութեամբ վազում են ցածր: Այդպիսի հոտանքները սաստիկ վտանգաւոր են չրջակալ բնակիչների համար: Այդ ցեխի հոտանքներն են, որ 79 թ.ին կործանեց Հերքուլանում, Պոմպէյա և Ստաբիան:

Հրաբուխները գտնւում են բացի Ներտալից նաև աշխարհիս միւս մասերում: Բայց զլիւսւորապէս լինում են հրաբուխները կղզիների վերայ: Ջարմանալի է որ ցամաքալին հրաբուխները նոյնպէս գտնւում են ովկիանոսների և ծովերի մօտ: Ահպէս որ, ինչպէս երևում է, ջուրը նշանաւոր դեր է կատարում հրաբուխալին գործունէութեան մէջ:

Միւս գլխաւոր օրէնքը, որը նկատւում է հրաբուխների տարածման մէջ, ալն է, որ հրաբուխները տարածւում են ուրիշ կարգերով ալն ափերի մօտ, ուր կան մեծ լեռներ: Օրինակ հարաւալին Ամերիկայի հրաբուխները շարւած են արևմտեան ափի վերայ, ուր գտնւում է Անդի հսկայական լեռնաշղթան:

II

Աչքի առաջ ունենալով բոլոր վերոյիշեալ հրաբուխալին երևութները՝ մարդու գլխում ակամալ լարուցւում է հարցերի ամբողջ մի շարք. ինչտիցի է աւաջացել երկրագնդի կենտրոնում ալն ահագին ջերմութիւնը, որը ընդունակ է հալեցնել մինչև անդամ ամենածանր մետաղները և արտադրել լաւալի ահագին հոտանքները, ալն ինչ ոլմ է, որը դուրս է թափւում քարեր, լաւան և ուրիշ ներթերը: Ի՞նչ է պատճառը, որ հրաբուխները տարածւած են լեռների մօտ, ծովերի և ովկիանոսների ափերում: Մի խօսքով մարդ ցանկանում է իմանալ ալն պատճառը, որը արտադրում է հրաբուխալին երևութները:

Տարաբաղաբար պիտի ասեմ, որ աղ կրեովթներ չպատճառը մինչև այժմ դեռ չի գտնւած, չը նստած որ աղ հարցի վերայ աշխատել են շատ հանճարեղ գիտնականներ: Երբ մի երեովթի իսկական պատճառը չի լաւտնի, ալն ժամանակ գիտնականները աշխատում են բացատրել նոյն երեովթը հիմնելով մի որ և է ենթադրութեան վերայ: Ահա աղպիտի ենթադրութիւնները անւանում են հիպոթէզներ, որոնք մեծ ծառայութիւններ են մատուցանում գիտութեանը, տօնաբերով գիտնականներին նորանոր հետազոտութիւններ անել հիպոթէզի ճշտութիւնը, կամ անճշտութիւնը իմանալու համար: Աղպէս հիպոթէզները հարտացնում են գիտութիւնը նոր գիւտերով: Շատ անգամ հիպոթէզները կատարելով իրանց դերը, աւսինքն զեկալարելով գիտնականներին մի որոշ ժամանակ, կորցնում են իրանց ուժը, էլ չեն կարողանում զարկ տալ գիտութեան զարգացմանը: Աղ ժամանակ հիպոթէզը ընկնում է, տալով իւր տեղը աւելի նոր հիպոթէզին, որը աւելի համապատասխանում է փաստերին: Բայց պատահում է և զրա հակառակը, երբ հիպոթէզը քանի գնում է՝ աւելի ամրանում է: Գիտնականները հիմնելով աղ հիպոթէզի վերայ, սկսում են գուշակել մի շարք նոր փաստերի և երեովթների: Երբ աղ գուշակութիւնների մեծամասնութիւնը իրագործւում է հետազոտութիւններով, ալն ժամանակ հիպոթէզին աւելի մեծ հաւատ են ընծալում, հիպոթէզը փոխարկւում է թէօրիայի: Ուրեմն թէև հիպոթէզը և թէօրիան երկուսն էլ հիմնւած են ենթադրութիւնների վերայ, բայց թէօրիան աւելի մօտ է ճշմարտութեանը քան թէ հիպոթէզը:

Հրաբխալին երեովթները բացատրելու համար առաջարկւած են տասնեակ հիպոթէզներ, զորանցից շատերը լինելով թույլ արդէն ընկել են, նրանց տեղը ամենալին տարի առաջարկւում են նորերը: Թողնելով թույլ և միակողմանի հիպոթէզները ես կ'աշխատեմ ծանօթացնել միայն աղ հիպոթէզի հետ, որը աւելի շատ է ընդունւած և որը բաւականացուցիչ կերպով բացատրում է հրաբխալին երեովթները: Աղ հիպոթէզը լինելով հիմնւած երեւելի Կանտ-Լապլասի թէօրիայի վերայ, հարկաւոր է առաջ թէօրիայի հետ ծանօթանալ: Ուրեմն ինչո՞ւ է կաշանում ալն թէօրիան, որը մինչև նոյն ժամանակ զարմացնում է և հիացնում ողջ գիտնական աշխարհը:

III

Բերաւոր տարիներ մեզնից առաջ արեղակը և մոլորակները, Կանտի ու Լապլասի կարծիքով, բաժանւած չէին մէկը միւսից ինչպէս այժմ, այլ կազմում էին մի ահապին գաղափին մարմին, որը պտտւում է իւր առանցքի (օճե) շուրջը: Ազգրում աղ մարմնի ջերմութիւնը շատ մեծ էր, բայց հետեւեալ ժամանակներում քանի գնում պակասում էր: Աղպէս պտտուղ

մարմնից, ֆիզիքական օրէնքների հիման վերադ, էկւատորի մօտ բաժանւում է մի օղածն մաս, որը պտտւում է նոյն ուղղութեամբ, ինչպէս և դիւսաւոր մարմինը: Յետոյ ալդ օղակը բաժանւում է մի քանի կտարների, որոնք պտտւում են միեւնոյն ուղղութեամբ, ընդունելով դնտակի ձև: Ահա ալդ գնդակածն կտարներից գտացել են մոլորակները, իսկ գլխաւոր մասը, որը զտնւում էր կենտրոնում և որից բաժանւեցին մոլորակները, արտադրեց հետեւեալ ժամանակներում մեղ լալտնի արեգակը: Ալժմ հետեւենք մոլորակների փոխաւթութիւններին:

Մոլորակները, բաժանւելով գաղալին մարմնից, բնական է որ սկզբում ունէին գաղալին դրութիւն, բալց քնտոյ ալդ գրութիւնը չը պահպանւեցաւ: Իրտ պտտնաւոր ալն է որ մոլորակները չըջապատող տաւածութիւնը, ալսպէս տնւանեալ (միջմոլորակալին տարածութիւնը), սաստիկ ցածր ջերմութիւն ունի: Ալդպիտի ցածր ջերմութեան ներքոյ մոլորակները սկսեցին կորցնել իրանց ջերմութեան մի մասը և գրա հետ կորցնելով իրանց գաղալին դրութիւնը՝ փոխալրեցին հեղուկի: Ալնելով մոլորակներից մէկը — երկիրը նոյնպէս առաջ եղել է գաղալին, քնտոյ հեղուկալին դրութեան մէջ, մինչև որ հասել է ալժման դրութեանը: Արկրիս գնդածն տեսքը զեղեցիկ ապացոյց է, որ երկիրը առաջ ունեցել է հեղուկալին դրութիւն: Ահա Աստու-Ասպլասի թէօրիալի գլխաւոր կէտերը, որոնք ընդունւում են համարեա բոլոր ալժման գիտնականների կողմից: Իմ նպատակներից դուրս է աւելի մանրամասնօրէն խօսել ալդ թէօրիալի մասին, կ'աւելացնեմ միալն որ դիտութեան քնտաղալ դիտերը փալլուեն կերպով ապացուցեցին ալդ թէօրիալի նախադուշակութիւնների ճշգրութիւնը: Տեսնենք հիմալ, թէ ինչպէս է օգնում Աստու-Ասպլասի թէօրիան հրարդիսալին երևութների բացատրութեանը:

Նոյն թէօրիալից մենք իմացանք, որ երկիրը առաջ եղել է գաղալին մարմին և ունեցել է ահալին ջերմութիւն. նա սրտսելիս է եղել միջմոլորակալին տարածութեան մէջ: Ալս վերջինի ջերմութիւնը ալժման գիտնականների հաշւով՝ հասնում է— 60° կամ մինչև անդամ— 120° , ալսինքն միջմոլորակալին տարածութեան ջերմութիւնը 120° աստիճան ցածր է գրօից: Ալդ մի ալնպիտի ցուրտ է, որ մենք երևակալել անգամ չենք կալող: Յուրա չըջանի ալդեցութեան տակ երկիրը կազմող գաղերը սկսեցին փոքր առ փոքր թանձրանալ մինչև որ հասան հեղուկալին դրութեանը: Բալց դրանով չը վերջացաւ չըջապատող տարածութեան ալդեցութիւնը երկրի վրալ, որովհետև նրանց ջերմութիւնների մէջ դեռ մեծ զանաղանութիւն կալ: Արկիրը շարունակում էր կորցնել իւր ջերմութիւնը: Պէաք է նկատել, որ երկիրը չէր սառնում միակերպ բոլոր իւր մասերում. ալն մասերը, որոնք ալմիջալէս չփուտ էին չըջապատող ցուրտ տարածութեան հետ, ալսինքն երկրալնդիւս արտալին—կողմերը, բնականաբար աւելի շատ ջերմութիւն էին կորցնում, քան թէ կենտրոնը:

Այդ հանգամանքի հետևանքը այն եղաւ, որ երկրագնդիս արտաքին մասերը սառչելով կաղմեցին պինդ կեղեւ, իսկ ներքին մասերը մնացին հալած գրութեան մէջ: Բայց կենտրոնական հալած մասը, քանի պնդւած պակասում էր, որովհետեւ ցուրտը չարունակում էր ներպործել արտաքին կողմերից դէպի կենտրոնը, պնդացնելով հեղուկի նոր մասեր: Այդ պատճառով երկրագնդի արտաքին պինդ կեղեւը կամաց-կամաց հաստանում էր:

Ներկագունդը, ունենալով արտաքին կողմերումը պինդ կեղեւ, իսկ կենտրոնում լինելով հալած, չարունակում էր սառչել նույն միջնորակալին տարածութեան ազդեցութեան տակ: Իսկ լաւտնի է որ երբ մի մարմին սառչում է, նրա ծաւալը, ուրեմն և մակերեսովը փոքրանում է: Դժւար չէ խմանալ, թէ ինչ կը պատահէր, երբ երկրագնդի կեղեւի մակերեսովը փոքրանում էր: Ահա երբ պէտք է արտադրէր իւր մի քանի մասերումը կնձիռներ, ինչ ասել կուզի, որ այդ կնձիռները ահագին էին, որովհետեւ սառչող մարմինը—երկիրը, ահագին էր: Այսպիսով լեռնաշղթան, Ալպեան լեռները—միւս ամենաբարձր սարերը հէնց նույն հսկայական կնձիռներն են, որոնք գոյացել են կեղեւի մակերեսովի փոքրանալուցը: Այն շերտերը, որոնցից կաղմած է կեղեւը, սաստիկ ծռոււել են ալիտեղ, ուր գոյացել են լեռներ, մինչև անգամ աղպիտի տեղերումը շերտերը ձեղքւել են: Այստեղից հասկանալի է, որ երկրագնդի կենտրոնումը գտնուող հեղուկ մասերը լարող են հարաբերութիւն ունենալ երկրի մակերեսովի հետ աւելի հեշտ լեռնոտ տեղերումը. ինչպէս վերև տեսանք, երկրի կեղեւը ձեղքւածքներ է ստացել: Այժմ դժւար չէ երեւակայել, թէ ինչպէս է լինում հրաբուխային երևութիւնների մեքանիզմը: Ծովային ջուրը թափւում է վերուիշեալ ձեղքւածքներով և համեմատ հալած գրութեան մէջ գտնուող նիւթերին, որոնք ունեն անհամեմատ աւելի բարձր ջերմութիւն քան կեղեւի մակերեսովը, գոլորշիանում է և սկսում է ձնչել ցածր գտնուող հեղուկի վերայ: Ահա այդ ձնչման ազդեցութեան տակ հալած նիւթերը բարձրանում են կեղեւի ձեղքւածքներով դէպի երկրի մակերեսովը, կաղմելով լաւալի հոտանքները:

Նս աւարտեցի մեզ հետաքրքրող հիպոթէզի մեկնութիւնը: Ընթերցողը տեսնում է որ այդ հիպոթէզը բաւարար կերպով բացատրում է հրաբուխային վերաբերեալ գլխաւոր փաստերը: Այժմ մեզ համար պարզ է, որ ջուրը անհրաժեշտ է հրաբուխային գործունէութեան համար, հէնց այդ պատճառով էլ հրաբուխները գտնւում են ծովերի և ովկիանոսների ափերում: Նոյնպէս հասկանալի է, թէ ինչու հրաբուխները տարածւած են լեռների մօտ. չէ որ լեռների գոյանալու ժամանակ կեղեւը ձեղքւել էր լեռների մօտ: Ահա այդ ձեղքւածքները ամենապարմար համապարհներն են կենտրոնից դուրս թափուող հեղուկի համար:

ԳԵՈՐԳ ԲՐԱՆԴԵՍ

(Նրա գրականական գործունեութեան քսանհինգամեակի առիթով):

Տ. ՅՈՒՀԱՆՆԻՍԵԱՆԻ

«Պաշտեցէք կրիտիկական ողին: Մե-
նակ՝ նա չի կարող ծնել դադախարներ,
ստեղծել վեհ բաներ: Բայց առանց նրան՝
սմին բան անցաւոր է: Նրան է պատ-
կանում միշտ վերջին խօսքը»:

Պատմ. օր:

Անցեալ տարւոյ հոկտեմբեր ամսի 14-ին Ներուպայում տօնւեց
ժամանակակից ամենամեծ և ամենահամակրելի գրականական գոր-
ծիչներից մէկի՝ Գեորգ Բրանդէսի գործունեութեան քսանհինգա-
մեայ յորելեանը:

Բրանդէսը իրաւամբ համարւում է այժմ եթէ ոչ առաջին,
զոնէ առաջնակարգ ներկայացուցիչ եւրոպական կրիտիկական մտքի:
Նրա աշխատութիւնների մեծ մասը թարգմանւած է արդէն եւրո-
պական համարեա բոլոր լեզուներով: Նրա գրչի արտադրութիւն-
ների հետ հարկաւոր են համարում ծանօթանալ այնպիսի ազգեր,
որոնք իրանք ունեն հարուստ կրիտիկական գրականութիւն և կա-
րող են պարծենալ սեփական յայտնի կրիտիկոսներով:

Զարմանալի և զաւալի կը լինի, եթէ չը հետաքրքրենք Բրան-
դէսով՝ մենք հայերս, որ ոչ միայն չ'ունենք կրիտիկական գրակա-
նութիւն, այլ և չենք կարողացել մինչև այժմ առաջ բերել զոնէ
մի կրիտիկոս, այդ բառի եւրոպական նշանակութեամբ:

Բրանդէսը այն գրողներին է, որոնք կոչւած են անշարժ հասարակութիւնը մոտաւոր քնից զարթեցնելու: Այդ տեսակ գրողներին զանազան տիպեր կան: Կան այնպիսիները, որոնց որոտածայն քարոզը՝ հրաբուզի կարատեա երկրաշարժի նման անցնում է երկրից-երկիր, փշրելով մարդկային միտքը կաշկանդող նախապաշարմունքներին, սնապաշտութիւնների ու աւանդութիւնների շղթայանոցը. — այդպէս էր Վոլտերը: Կան այնպիսիները, որոնք «ճանձերի նման բզկում են քնած ժողովրդի ականջին ու խայթում են նրա երեսը, որ զարթնի», ինչպէս ասում է այդ տիպին պատկանողներից մէկը — Բեռնէն, որ այդպէս է որոշում իւր դերը գերմանացիների վերաբերմամբ: Կան վերջապէս և այնպիսիները, որոնց սթափեցնող ձայնը հնչում է աւաւօտեան ժամի՝ արշալոյս աւետող զանգերի նման, — այդպիսիներից է Բրանդէսը: Եթէ Վոլտերը իւր ամենագործադրով էլեքարականացնում էր աֆրոզ Սերոպայի մոտաւոր միջոցաւորը, եթէ Բեռնէն իւր ստաիրացի հրազէի զէնքով «շամփրում էր անշարժ սրտերը», — Բրանդէսը իւր մոգական գրչով զարթեցնում է մարդու սրտում գեղեցիկ, ճշմարտի և բարու քնած բնազդումները այնպէս, ինչպէս հէքեաթի մէջ արքայորդին իւր շնչով զարթեցնում է «քնած գեղեցիկահուն»:

Ինչո՞ւմ է Բրանդէսի այդպիսի ազդեցութեան գաղտնիքը: Բացառել այդ ազդեցութիւնը նրա մեծ տաղանդով՝ կը նշանակի համարեա ոչինչ չասել: Անկասկած — տաղանդն էլ այդ բանում դեր է խաղում, բայց համեմատաբար շատ աննշան, — քիչ տաղանդներ կան ինչ է, որ միայն օրօր ասելու ու փարօսներ հանգցնելու համար են ոտեղծւած: Բրանդէսը էէր կարող «սրտեր վառել», չը նաչելով իւր վերին աստիճանի բանաստեղծական ոճին, եթէ որ նրա գաղափարները լուսաւոր չը լինէին, և եթէ, որ ամենագլխաւորն է, այդ գաղափարները նրա համար լոկ հայեացքներ լինէին և ոչ թէ դաւանանք, Հաւատք, անդրդէլի հաւատք դաւանած գաղափարների ճշմարտութեան ու պաշտպանած դործի արդարութեան վերաբերմամբ, հաւատք, որ «ընդունալ է սրտի շարժել» — ահա ինչումն է գաղտնիքը: Բրանդէսը համոզւած է, որ լոյսը և արդարութիւնը լաւ բաներ են, բայց բաւականաւա՛ր մի անգամ ընդ միշտ կա՛մ տեղն եկած ժամանակ յայտնելով այդ համոզ-

մունքը, ինչպէս անում են իւր գաղափարակիցներին շատերը, նա չի կարող, որովհետեւ լոյսը և արդարութիւնը նրա համար ուսումնասիրութեան առարկաներ չեն, այլ այնպիսի անհրաժեշտ բաներ ինչպէս օդը, առանց որի նա կը խեղդուի: Նա նեղանում է, նա տանջւում է լոյսի ու արդարութեան սպակասութիւնից: Նա հաւատում է, որ լոյսը վերջապէս կը հալածի խաւարը և արդարութիւնը՝ յաղթանակ կը տանի ու կը բախտաւորացնի ամբողջ մարդկութիւնը: Ահա թէ ինչու է Բրանդէսը ամեն օր կրկնում ի լուր աշխարհի իւր հայեացքները և ինչու է այդ քարոզը արձագանք գտնում զգայուն սրտերում: Ահա թէ ի՞նչն է անսպառ եռանդը ներշնչում նրան անընդհատ կռիւ մղելու ամեն տեսակ յետադիմականների միացեալ բանակի հետ և ի՞նչն է նրա կռիւը յաղթանակներով պսակում:

Բրանդէսի մասին կատարեալ իրաւունքով կարելի է ասել այն, ինչ որ նա՝ իւր «Տասնիններորդ դարի գրականութեան գլխաւոր հոսանքներ» վերնագրով գրքում ասել է անգլիական մեծ բանասէղ՝ Շելլիի մասին:

Ահա նրա խօսքերը. «Ինչ-որ մի գրքոյկի համար նրան (Ռոբինզոն Կրուզօի հեղինակ Ռէյֆօն) ¹⁾ դատաւարտել էին նշաւակութեան սիւնին կապելու, որից առաջ պէտք է կարէին նրա ախանջները: Դատաւիժիւր ի կատար ածեցին: Այն ժամանակ յանցաւորին այնպէս էին կապում նշաւակութեան սիւնից, որ ծակի մէջով անցկացրած գլուխը անշարժ մնար. այդ անելուց յետոյ նրան մատնում էին ամբոխի անարգանքին, որ սովորաբար թափում էր նրա գլխին հոտած խնձորներ, կարտֆէշներ, նարինջներ և ուրիշ այդպիսի բաներ: Բայց երբ որ առաւօտը լուսացաւ և երբ Ռէյֆօն գունատ, ալյանդակաժ ու արիւնաթաթախ դէմքը սկսեց սիւնից ներքեւ նայել ամբոխի վրայ, յանկարծ—չը նայելով որ այդ շատ անհաւանական է թւում—տիրեց խորին լռութիւն: Ոչ ոք ոչ մի խնձոր չը գցեց, ոչ ոք մի վիրաւորական խօսք չ'արտասանեց: Բոլորը զիտէին, թէ ի՞նչ մարդ էր Ռէյֆօն ²⁾: Այն ժամանակ ամբոխի միջից մի մարդ խնդ-

¹⁾ Համեմատեցէք պ. Մանէլեանցի «Անարգ Սիւն» բանաստեղծութիւնը («Մուրճ» № 3. 1892 թ.):

²⁾ Ռէյֆօն միշտ պաշտպանում էր աղքատներին ու նեղեալներին:

րեց, որ իրան բարձրացնեն, և վեր ելնելով՝ պսակ զրեց Դէֆօի աշխնդակւած գլխին: --Այդ կարգալիս ես շատ ջանէլ էի, այնուամենայնիւ այդ պատկերը տպաւորւեց իմ հոգուս մէջ, և ես մտածեցի այն ժամանակ, որ իսկ և իսկ այդպիսի արտաքին տեսք պէտք է ունենայ ճշմարտութիւնը: Ես մտածում էի, —եթէ մարդ երբ և իցէ գտնի խեղճ, արհամարհւած ու ամենից անարգանք կրող ճշմարտութիւնը կապւած նշաւակութեան սիւնին, նրա կեանքում վեհ ընդէ կը լինի այն ընդէն, երբ նա կը կարողանայ մօտենալ ճշմարտութեանը ու պսակ զնել նրա գլխին: —Այդ արեց Շելլին»...

Այդ անում է միշտ Բրանդէսը —կարող ենք աւելցնել հայ ընթերցողներս, որոնց կարծես ճակատագրւած է՝ տեսնել բոլոր ճշմարտութիւնները նշաւակութեան սիւնին կապւած և ոյժ չ'ունենալ բարձրանալու ու պսակելու նրանց:

Նախ քան Բրանդէսի պաշտպանած դադափարների մասին խօսելը, կարճառօտ կերպով պատմենք նրա կենսագրութիւնը, օգտուելով գլխաւորապէս նրա ինքնակենսագրութիւնից, որ տպւած է նրա „Moderne Geister“ գրքի ռուսերէն թարգմանութեան („Новые Вѣянія“) յառաջաբանում:

Գեորգ Բրանդէսը Դանիացի է: Նա ծնւել է 1842 թւին Կոպենհագէն քաղաքում: 1859 թւին նա մտել է իւր ծննդավայրի համալսարանը, ուր և աւարտել է ուսումը 1864 թւին: Ուսանողութեան սկզբում նա սկսել է պարապել իրաւագիտութեամբ, բայց քիչ ժամանակից յետոյ թողել է այդ մասնագիտութիւնը և իրան նւիրել է բացառապէս փիլիսոփայութեան ու էսթետիկայի ուսումնասիրութեան:

Վեռ պատանի-ուսանող լինելով, ասում է Բրանդէսը իւր ինքնակենսագրութեան մէջ, ես ջերմ կերպով անձնատուր եղայ Սպինոզայի, Հէգելի և Լիւդւիգ Ֆէյէրբախի ուսումնասիրութեան: 1859 թւից մինչև 1864 թւը իմ մէջ կատարւում էր ներքին՝ կրօնական ու փիլիսոփայական կռիւ, որի նպատակն էր որոշ աշխարհայեացեացք մշակել. այդ՝ ծանր, տանջողական ժամանակաշրջան էր, որից ես զուրս եկայ 1865 թւին մօտաւորապէս նոյն հիմնական հայեացքներով, որ ես պաշտպանում էի յետագայ ժամանակներում: Սակայն իմ մտքիս ուղղութիւնը բոլորովին մետաֆիզիկա-

կան էր. ես կարողացայ իմ շուրջը տիրապետող հայեացքներից ազատւելու միայն առաջին քայլն անել: Այդ պատճառով հէնց որ վերջացաւ առաջին ներքին կրօնական կռիւը և նախ քան սկսեց իմ զարգացումը այդ նոր ուղղութեամբ, 1865—1870 թւերին, իմ մէջ կատարւեց մի նոր նշանաւոր փոփոխութիւն, որովհետեւ իմ մէջ սկիզբ առաւ հոգեբանական-պատմական ուղղութիւն, և ես սկսեցի ուսումնասիրել Ֆրանսիական կրօնիկոսներին ու անգլիական փիլիսոփաներին»:

Այդ ժամանակ Բրանդէսը աշխատակցում էր դանիական յայտնի ամսագիրներին ու օրագիրներին, որոնք զբաղւած էին բանակուով՝ գիտութեան ու հաւատի մասին, գրում է մի քանի աշխատութիւններ Ղանխայում այդ շրջանում տիրող փիլիսոփայական ուղղութեան դէմ և թարգմանում է Ջոն Սաիւյարտ Միլլի ամենակարող շարադրութիւններից մի քանիսը, ի միջի այլոց և «Կանանց ստորագրեալ գրութեան մասին»: Այդ ժամանակին են վերաբերում և նրա շարադրութիւնը «Ժամանակակից Ֆրանսիական էսթետիկայի մասին» ու հաւաքածուն «Կրօնիկական պատկերներ» վերնագրով:

1870 թւին Բրանդէսը փիլիսոփայութեան դոկտորի աստիճան է ստանում, որ Ղանխայում իրաւունք է տալիս հրատարակական դատաստութիւններ կարգաւ համաշարանում: Բայց Բրանդէսը իսկոյն չի օգտուում իւր իրաւունքից, այլ գնում է արտասահման ճանապարհորդելու:

«Մինչև այդ ժամանակ ես քիչ էի ճանապարհորդել, ասում է Բրանդէսը. ուսանող ժամանակս ոտով ման էի եկել աթոռջ Ղանխան, եղել էի Պարիզում ու Շւէյցարիայում, բայց երկար չէի մնացել արտասահմանում: 1870—1871 թ. ես աւելի երկարատեւ ճանապարհորդութիւն արեցի և աւելի երկար մնացի Պարիզում ու Հռոմում: Այդ ժամանակ ես այն եզրակացութեանն եկայ, որ ես, հակառակ եմ Ղանխայում տիրապետող աթոռջ ուղղութեանը, որի դէմ ես առաջ բաւականաչափ քաջութիւն չունէի կռուելու: Իմ խօսակցութիւնները Պարիզում Տէնի հետ վերջնական հարւած տւեցին այն հաւատին, որով ես վերաբերում էի սխաթեմատիկական էսթետիկային, իսկ Նոնդոնում Սաիւյարտ Միլլի հետ ունեցած խօսակցութիւններս վերջնականապէս հեռացրեցին ինձ մեռաֆիզիկա-

յից: Նոր եւրոպական բանաստեղծութեան հետ ձեռք բերած ծանօթութիւնս աւելի սաստկացրեց իմ հակակրօնութիւնը զէպի բոմանտիզմը, որ զեւ յարգ էր վայելում Դանիայում: Վերածնութեան դարերի գեղարւեստի և նոր ֆրանսիայի ու Սպանիայի հետ ծանօթանալու հետեանքն եղաւ այն համոզմունքը, թէ Դանիայում գեղարւեստը, բոլորովին անմատչելի լինելով կողմնակի ազդեցութիւնների համար, հիւանդ է շնչարգելութեամբ (одышка): Եւրոպայի քաղաքական դրութեան ուսումնասիրութիւնը և օտարազգիների հետ ունեցած մշտական յարաբերութիւններս ինձ վրայ այն ազդեցութիւնն ունեցան, որ ես սկսեցի՝ Դանիայում գեւ ևս շատ պաշտողներ ունեցող ֆրանսիական ցեղարիզմի վրայ բոլորովին ուրիշ, շատ վատ ¹⁾ աչքով նայել, և շուտով հակառակութիւն ծագեց իմ և իմ հայրենիքի ղեկավարող գործիչների ու ղեկավարող մամուլի մէջ՝ թէ հասարակական ու քաղաքական և թէ գրականական ու էսթետիկական հայեացքների կողմից»:

Ճանապարհորդութիւնից վերադառնալով Բրանդէսը սկսեց իւր դասախօսութիւնները համալսարանում՝ 1871 թւի նոյեմբերի 3-ին: Հէնց առաջին դասախօսութեան սկզբում նա անկեղծ ու համարձակ յայտնեց, որ ինքը մոքի ազատութեան կուսակից է և զէմ է Դանիայում աիրող ու ուղղադաւան (ортодоксальный) համարող աշխարհահայեացքին: Ձեռնոցը այլպիսով զցւեց: Ընդունւած հայեացքների անթիւ ներկայացուցիչները վերցրին ձեռնոցը և սկսեց կատաղի կռիւ: Ամբողջ դանիական հասարակութիւնը այնպէս իրար անցաւ, ինչպէս յանկարծակի պաշարւած քաղաքի բնակիչները կարող են իրար անցնել թշնամու անսպասելի ուժեղութեան թիւնից: Կուսենհագէնի համալսարանի պատերի մէջ երբէք չէր հնչել այդպիսի համարձակ ձայն և երբէք չէր հաւաքւել այդքան բազմաթիւ ու այդպիսի ոգևորւած լսողներից բաղկացած հասարակութիւն: Բայց

¹⁾ Ռուսերէն տալած է „въ самомъ благопріятномъ свѣтѣ“, այդ երևի տալգրական վրիպակ է (բայ է թողնւած „He“ բացատրութիւնը) կամ դուցի և թարգմանչի կողմից սխալ: Առհասարակ պէտք է նկատել, որ Բրանդէսի „Новыя Вѣянія“ գրքի թարգմանութիւնը չի կարող ամենին համեմատուել նրա «Տանիկներորդ դարի գրականութեան հոսանքներին» թարգմանութեան հետ, որ արել է լատինի թարգմանիչ Նիվեդոմսկի:

դասախօսութիւնների ունեցած արտակարգ յաջողութիւնը ոչ միայն չ'ազատեց Բրանդէսին հալածանքից, այլ, ընդհակառակը, զօրեղ թշնամիների կատաղութիւնը այն ատիճանին հասցրեց, որ նրան զրկեցին ամբիօնից: Այդ ժամանակամիջոցում Բրանդէսը գրել է իւր ամենատաղանդաւոր ու ամենանշանաւոր — «Տասնիններորդ դարի գրականութեան գլխաւոր հոսանքները» վերնագիր կրող գրքի (ռուսերէն կաջ թարգմանած) չորս հատորը, «Դանիայի բանաստեղծներ»-ը ու «Ջեօրէն Կիրկէհարզ»-ը և հրատարակել է իւր իբր քաղաքական գործիչ և զբաղմունքի յայտնի եղբօր հետ մի ահագիր՝ «Տասնիններորդ դար» անունով:

«Ահա տասնըվեց տարի է այն ժամանականից, - շարունակում է Բրանդէսը իւր ինքնակենսագրութեան մէջ, որ զբաղւած է սրանից մօտ հինգ տարի առաջ, — որ գրականութեան պատմութեան ամբիօնը թափուր է մնում, որովհետեւ կառավարութիւնը այդ ամբիօնը ինձ չի ուղղում յանձնել, իսկ ուրիշ որ և է մէկին տալ սիրտ չի անում, ինչպէս ունենալով, որ հասարակական կարծիքը ամենավրճուական կերպով իմ կողմն է բռնում: 1875 թւին մէկ նշանակեցին մրցումն այդ ամբիօնը ստանալու համար, բայց խնդրեց շուրջին փոխել այդ որոշումը, որովհետեւ իմացեաց որ ես ուղղում եմ մասնակցել այդ մրցմանը: Այդ բոլորը ինձ դրդեց թողնել հայրենիքս և գնալ Գերմանիա, որի հետ ես մօտիկ ծանօթացել էի արդէն 1872 թւին և որտեղ ես երբեմն կէս-տարով ապրել էի և դարձել էի «Deutsche Rundschau» ամսագրի աշխատակից (1874 թւից): Երկու մեծ ճանապարհորդութիւն անելուց յետոյ Շւեցիայում ու Նորվեգիայում և Իտալիայում մինչև Նէապոլ (1876 թ.), 1877 թւին ես հեռացայ Կոպենհագէնից և բնակութիւն հաստատեցի Բերլինում. այնտեղ մի քանի տարի գերմաներէնը իւրացնելու համար սաստիկ աշխատելուց յետոյ՝ ինձ յաջողեց ընդունել գերմանական դրողների դասը: Այնտեղ ես ապրում էի մինչև վերջին ժամանակներս: Իմ վեցամեայ բացակայութեան միջոցին հիւսիսում մեծ մուսուր յեղափոխութիւն կատարեց: Սկիզբն առաւ ամբողջ մի նոր դպրոց գանիական ու նորվեգիական դրողների, որոնք գնացին այն ճանապարհով, որ ես առաջ ցոյց էի տւել: Հին սերունդին պատկանող բանաստեղծները Նորվեգիայում չարեցին այդ նոր հոսանքին: Բեռլինում, որ առաջ իմ հակառակորդների թւին էր

պատկանում, արդէն 1877 թ. հրապարակաւ համակրութիւն էր յայտնել իմ ձգտումներին: Իբրեւի հետ ես միշտ բարեկամական յարաբերութիւն եմ ունեցել: Նոր դպրոցի ամենագլխաւոր զանխացի ներկայացուցիչներն են—Գոլբէր, Դրախման, Եակոբսոն, Շանդորպ, Էրիկ Սկրամ, Կարլ Գեյլերուպ, իսկ նորվեգիացի—Բ. Բեռնսոն, Հեն-րիխ Իբսէն, Ալեքսանդր Կիլլանդ, Պաուլսոն և Արնէ Հարբորգ: Երկարատեւ կռից յետոյ (մօտաւորապէս 1872—1882 թ.) նոր դպրոցը համարեա կատարեալ յաղթանակ տարաւ: Սակայն այն էլ պէտք է ասել, որ այն ժամանակներից՝ վերոյիշեալ բանաստեղծներից Դրախմանը, Գեյլերուպը ու Բ. Բեռնսոնը նորից դաւաճանել են իրանց դրոշակին ու անցել են թշնամիների բանակը...: Քաղաքական կողմից էլ շարժումը այն ուղղութիւնն է ստացել, որ ես ուզում էի և ցոյց էի տալիս: Մինչև 1870 թիւը զիւղացոց կուսակցութեան ու պահպանողականների մէջ սաստիկ հակառակութիւն կար, ինչպէս նաև քաղաքի ու զիւղի մէջ: Իւր տեսակի մէջ եզական երևոյթ է ամբողջ Եւրոպայում այն, որ Սկանդինավիան երեք պետութիւնների մայրաքաղաքները պահպանողական ուղղութեան կուսակիցներ են: Այն սերունդը, որին ես պատկանում եմ, կարծում էր, որ մայրաքաղաքից պէտք է ինտելիգենտ ազդեցութիւն զործւի գիւղացիների վրայ: Ոչ առանց իմ ազդեցութեան՝ քաղաքացի երիտասարդութեան, մանաւանդ մայրաքաղաքի ուսանողութեան նշանաւոր մասը յարեց գիւղացոց կուսակցութեանը...: Բերլինում ես հրատարակեցի գերմաներէն լեզուով իմ «Վլխաւոր հոսանքների» Ծրագր հատորը, նոյն շարադրութեան առաջին հատորը՝ աւելի մշակւած, մոնոգրաֆիաներ Բիկոնսֆիլդի ու Լասսալի մասին, մի հատոր „Moderne Geister“-ից, և բացի դրանից՝ մի շարք փոքրիկ յօդւածներ... Անցեալ տարի մասնաւոր անձինք (գլխաւորապէս գիւղացոց կուսակցութեան անդամներ) ինձ նորից հրաւիրեցին Դանիա: Ես ընդունեցի այդ հրաւերը, որովհետև ինչպէս միշտ՝ իմ գործունէութեան բուն ասպարէզը Դանիան ու Նարվեգիան էի համարում, թէև շատ ուրախ եմ, որ մնացած Եւրոպան էլ ինձ անուշադիր չի թողնում... 1886—1887 թ. ձմեռը ես սկսեցի Կոպենհագէնում դասախօսութիւններ կարդալ դանիական զրահանութեան մասին սկսած 1820 թւից մինչև 1848 թ.: Ես

այստեղ (Վոպէնհագէնում) զտայ բազմաթիւ հակառակորդներ և անթիւ համակրողներ: Իմ այստեղ գալուց քիչ յետոյ շատ համակրական ու հանդիսաւոր ընդունելութիւն սարքեցին ինձ համար այստեղի ամենանշանաւոր հիւրանոցներից մէկում: Ճառեր ասացին զանազան պատգամաւորներ զրոյնների կողմից, նկարիչների կողմից, բանւորների կողմից, — բանւորները՝ Լասսալի մասին իմ զրաժ շարադրութեան տպելուց յետոյ՝ ինձ իրանց անկեղծ բարեկամն են համարում: — Եւ ուսանողների կողմից, որոնք անցեալ տարի մի ընկերութիւն են կազմել, որ առաջ գոյութիւն ունեցող ուսանողական ընկերութեան հակառակ, աւելի յառաջադիմական տարրեր է պարունակում իւր մէջ: Վային այնտեղ և ուսանողուհիների կողմից պատգամաւորուհիներ, որովհետեւ ես Վանխայում առաջիններից մէկն եմ եղել, որ պաշտպան եմ դուրս եկել կանանց իրաւունքներին:

Ինքնակենսագրութիւնը զրեւուց յետոյ Բրանդէսը ի միջի աչլոց ճանապարհորդել է Ռուսաստանում ու Լեհաստանում (1887 թւի զարնան սկիզբը): Այդ ճանապարհորդութեան ժամանակ նա հրապարակական դասախօսութիւններ է կարդացել Պետերբուրգում ու Մոսկւայում, որոնցից մէկի («Իրականական կրիտիկացի մասին») թարգմանութիւնը կը տպւի «Մուրճ»-ի առաջիկայ համարներից մէկում: Այդ ժամանակամիջոցում Բրանդէսը հրատարակել է մի քանի գիրք, ի միջի աչլոց, «ճանապարհորդական տպաւորութիւններ Լեհաստանում 1887 թ.» և «ճանապարհորդական տպաւորութիւններ Ռուսաստանում 1887 թ.ին»:

Ահա այն մարդու կենսագրութիւնը, որին այժմ իրանց ազգի պարծանքն են համարում մինչև անդամ նրանք, որոնք մի քանի տարի առաջ կատաղի կերպով հալածում էին նրան: Մի ժամանակ «պատերազմի դաշտում միակ զինուորի» դրութեան մէջ եղողը այժմ բազմաթիւ կուսակցութեան առաջնորդ է հանդիսանում, և յարգանք է վայելում մինչև անգամ իւր հակառակորդներից: Այդ ցոյց տւեց հոկտեմբերի 14-ին տօնաւած յորելեանը:

Ահա ինչպէս են նկարագրում լրագիրները այդ տօնախմբութիւնը:

Բրանդէսի բարեկամներն ու յարգողները Վոպէնհագէնում ի պատիւ նրա ճաշկերոյթ սարքեցին, որին մասնակցում էին զրականու-

Թեան, զեղարեստի և քաղաքական զործունէութեան համարեա բոլոր աչքի ընկնող ներկայացուցիչները: Ճաշկերոյթի ժամանակ խօսւած ճառերից ամենից աւելի տպաւորութիւն գործեցին պրոֆէսոր Հէֆֆըլինգի խօսքերը, որովհետեւ Հէֆֆըլինգը յայտնի է իբրեւ Բրանդէսի հակառակորդներից մէկը զրականական ասպարէզում: Պրոֆէսորը իւր ճառը վերջացրեց հետեւեալ խօսքերով.— «Այն օրը երբ Բրանդէսը կը դադարի զանխական ինտելլիգենցիան ղեկավարելուց, մեր հայրենիքը կը կորցնի իւր այս դարում ծնած՝ ամենամեծ ու ամենատաղանդաւոր զաւակներից մէկին»: Բրանդէսը պատասխանեց Հէֆֆըլինգին թաւ առաջարկելով ազատութեան, գիտութեան ու զեղարեստի ծաղկման համար և վերջացրեց խօսքերը ասելով.— «Ես ոչ ժերս զործ գրեցի ձեզ մասնակից դարձնելու այն զգացմունքին, որ բոլոր զգացմունքներից ամենագորեղն էր 25 տարի սրանից առաջ և է այժմ՝ պատանու սրտում, այն է՝ սէր ազատութեան, սէր անձնաւորութեան զարգացման և ատելութիւն նախապաշարմունքներին: Այժմ, 25 տարի անցնելուց յետոյ, ես ասում եմ, — եթէ Նանիացում մեզ յաջողւի փոփոխել մեր ժողովրդի զարգացման նիւթական ու հոգեկան պայմանները, մեզ կը յաջողւի այն ժամանակ, չը նայելով որ մենք փոքր ազգ ենք, այնպիսի մտաւոր կեանք ստեղծել, որ օրինակ կը դառնայ մնացած Յւրոպայի համար»: Ճաշկերոյթի ժամանակ հեռագիր ստացւեց ժամանակակից ամենամեծ գրամատուրգ Իբսէնից՝ հետեւեալ բովանդակութեամբ, — «Ուղարկում եմ ձեզ, իբրեւ բարեկամ և երախտապարտ ընթերցող, իմ սրտագին շնորհաւորութիւնս՝ մտաւոր ազատութեան գործին ձեր 25-ամեայ հանձարեղ ծառայութեան համար»: Բ. Բեռնստը, որ, ինչպէս տեսանք վերեւում, անցել է Բրանդէսի հակառակորդների բանակը, չիշել է այդ օրը այն բարերար ազդեցութիւնը ¹⁾, որ ունեցել է իւր վրայ այդ մեծ կրիսիկոսը և շնորհաւորել է նրա յոբելեանը: Այդ հեռագրի մէջ Բեռնստը ակնարկելով այն բանի վրայ, որ մի-

¹⁾ Բեռնստը ասում է իւր գրածքներից մէկում, որ Բրանդէսն է նրան սովորեցրել «արդէն հակառակորդի կարծիքը». — «Իւր ամեն մի նոր գրքով, շարունակում է Բեռնստը, նա բնդլաճացնում է իմ մտաւոր հորիզոնը, զարթեցնում է իմ մտածողութիւնը»:

նիստը չէր համաձայնել ց՝մահ նիւթական օժանդակութիւն նշանակել Բրանդէսին, դրում է, — «Զի վայելիլ այդպէս վարձատրել արժանաւոր աշխատանքը, չի կարելի մեծ հանձարը անհետացնել քաղցի միջոցով»:

Երեկոյեան Կուլենհագէնի փողոցները անսովոր տեսարան էին ներկայացնում. հազարից աւելի ուսանողներ, արհեստաւորներ ու բիւրգերներ վառած ջահերը ձեռներին զիմում էին ճաշկերոյթի տեղը: Մի քանի հազար հոգուց բաղկացած ամբոխը կանգնած փողոցում այն տան առաջ, որտեղ ճաշկերոյթ էր սարքած, բարձրաձայն ու ոգևորւած աղաղակներով ողջունեց յոբելեարին, երբ որ նա մօտեցաւ բաց պատուհանին շնորհակալութիւն յայտնելու իրան համակրական ցոյցեր անող յարգողներին: «Բարձրացրէք ձեր ջահերը, սիրելի բարեկամներ, — ասաց նա, — մեզ շատ հարկաւոր է կրակ, կրակ մեր վարմունքների, մեր ձգտումների մէջ և մեր ամբողջ կեանքում: Չահի լոյսը՝ մաքի լոյս է: Այդ լոյսը չեն կարող հանդցնել ոչ փոթորիկը, ոչ էլ ամենազօրեղ բերանի շունչը: Առաւորեցէք այդ լոյսով բոլոր խորշ ու անկիւնները, տաքացրէք այդ բոցով ձեր սիրտը դէպի բարին ձգտելու համար և հաւատացէք ինձ — այն ոգին որ իւր հետ լոյս է բերել՝ չար ոգի չէ, այլ գիտակցութիւն ու արդարութիւն բերող բարի ոգի: Կրակը — կեանք է, նրա լոյսը երբէք չի հանգչիլ: Ի պատասխան այդ գեղեցիկ խօսքերի լսեց աղմկալի ծափահարութիւն, և հազարաւոր բերաններից հընչեցին ոգևորւած բացականչութիւններ ի պատիւ Բրանդէսի: Եւ դեռ երկար ժամանակ այդ բացականչութիւնները վրդովում էին գիշերային խաղաղութիւնը, և տօնախմբութեան մասնակցողները վերադառնում էին իրանց տները ոգևորւած ամենավսեմ զգացմունքներով ու տանելով իրանց հետ իրանց կեանքի ամենաքաղցր յիշողութիւններից մէկը:

Անցնենք այժմ այն հայեացքներին ու գաղափարներին, որոնց տաղանդաւոր քարոզիչ, անձնազոհ պաշտպան ու եռանդուն իրադործող հանդիսանալով, Բրանդէսը ձեռք է բերել իւր համաշխարհային հռչակը, իւր հայրենակիցների ջերմ համակրութիւնը և իւր հակառակորդների անկեղծ յարգանքը:

Մենք արդէն տեսանք թէ ինչ վեհ զգացմունքով է վերաբեր-

ւում Բրանդէսը դէպի ճշմարտութիւնը: Մենք տեսանք թէ ինչպէս նա քաջութիւն ունեցաւ բարձրանալ և Դանիացում հալածող, անարգող ճշմարտութիւնը պահել, հաստատ իմանալով որ իրան դրա համար կը կապեն նշաւակութեան սիւնին: Եւ իրաւ՝ նրան նշաւակութեան դատապարտեց կոյր հայրենիքը: Մտաւոր խաւարում խորխորտոյ ամբօխը փռած խնձորներ էր շարտում նրա գլխին ու հաչոյում էր նրան: Բայց երբ նրա պաշտպանած ճշմարտութեան լոյսը փարատեց խաւարը, և բացւեց մտաւոր արշալոյսը ու ամբօխը տեսաւ նրա լուսաճաճանչ դէմքը, զարմանալի փոփոխութիւն կատարւեց, — այն ձեռները, որոնք առաջ փռած խնձորներ էին շրջատում, այժմ դափնեալ պսակներ ու բոցավառ ջահեր բռնած էին մեկնւում դէպի նա. այն բերանները, որոնք հաչոյանքներ էին թափում նրա գլխին, այժմ շնորհակալութեան ու գովասանական բացականչութիւններով էին թնդացնում օդը:

Մենք տեսանք, որ Բրանդէսը Դանիացում կանանց ազատութեան առաջին պաշտպաններից մէկն է եղել, որ նրա ազդեցութեամբ երիտասարդութեան մի նշանաւոր մասը գիւղացոց կուսակցութեան կողմն է անցել, որ բանւորները նրան իրանց անկեղծ բարեկամն են համարում:

Ինչու՞մն է կաշնուում Բրանդէսի առանձնայատկութիւնները իբրեւ կրիտիկոսի և թէ ինչ նոր բան է մտցրել նա կրիտիկայի արւեստի մէջ — երկար կը լինի այստեղ բացատրել և մասամբ աւելորդ, որովհետեւ շուտով ինչպէս վերեն ասացի, կը տպւի «Մուրճ»-ում Բրանդէսի դասախօսութիւնը «Դրականական կրիտիկայի մասին»: Այսքանը միայն կ'ասեմ, որ Բրանդէսը Սէն-Բեօվի ու Տէնի շարունակողն է համարւում և նրանց հետ միասին ներկայացուցիչ կրիտիկայի մէջ նոր, հոգեբանական ուղղութեան: Նրա մեթոդը տարբերւում է իւր նախորդների մեթոդներից և շատ շատերի կարծիքով զերազանց է նրանցից: Ինչ բարձր կարծիք ունի Բրանդէսը կրիտիկայի մասին, երևում է նրա հետևեալ խօսքերից. «Նա (կրիտիկան) ճանապարհ է ցոյց տալիս մարդկային ոգուն և շարում է այդ ճանապարհի վրայ սիւներ ու ջահեր, նա անցնում է սարեր, — կոյր հաւատի, նախապաշարմունքների, անասնական ոյժի և հնացած աւանդութիւնների սարեր»:

Բրանդէսը ազգաւէր է այդ բառի ամենալաւ նշանակութեամբ: Նա սիրում է իւր հայրենիքը, բայց ատելով ատում է շովինիզմը և յարգում ու համակրում է այն ամենը, ինչ որ լաւ է օտարների մէջ: Նրա հայեացքը ազգասիրութեան վրայ այն հայեացքն է, որ ունեն բոլոր լայն սրտի ու խելքի տէր մարդիկ և որ հիմնալի կերպով ձևակերպել է Բեօռնէն հետևեալ խօսքերով, — «ցանկութիւն, մշտական և արի պատրաստականութիւն նւիրելու իւր զործունէութիւնը հայրենիքի բախտաւորութեանը, պատւին, փառքին, ազատութեանն ու ապահովութեանը, առանց վախճնալու ամենամեծ զոհերից, ամենաճանր աշխատանքներից ու վտանգներից, — ահա ինչ եմ ես անւանում հայրենասիրութիւն»: Բրանդէսը հայրենասէր է այդ մտքով: Իւր «Moderne Geister» գրքի յառաջաբանում նա ասում է, — «Այս գրքի հեղինակը, — որ ամենեւին քամելէօն չէ և բնաւ չի ուրացել իւր մայրենի լեզուն, այլ ընդհակառակը ամենաեռանդուն կերպով մասնակցում է Սկանդինավիան երկիրներում վերջերքս ծագած գրականական շարժմանը, — շատ լաւ գիտակցում է, որ ամեն մարդ կարող է շատ թէ քիչ նշանաւոր ազդեցութիւն ունենալ միայն այն երկրում, որտեղ ծնւել ու սնւել է և որին ծառայել ճակատագրել է նրան ինքը բնութիւնը»:

Բայց Բրանդէսը հակառակ է չինականութեան: Նա վնասակար է համարում թթու ազգասէրների կանգնեցրած չինական պատերը: «Մենք (զանիացիք), — ասում է նա իւր «Տասնիններորդ դարի դրականութեան գլխաւոր հոսանքների» յառաջաբանում, — երբէք չենք ունեցել ինքնուրոյն ստեղծագործութեան մեծ ընդունակութիւն. իսկ այժմ՝ դրա վրա աւելացել է և բացարձակ անընդունակութիւն՝ իւրացնելու օտարների մտաւոր շարժումը. խլութիւնը, համր--խուլերի խլութեան նման, յառաջացրել է համրութիւն»:

Բրանդէսը ատում է անշարժութիւնը և քարոզում է յառաջադիմութիւն: «Մենք վայր չենք ընկել, — ասում է նա, — միայն այն պատճառով, որ երբէք չենք բարձրացել այնքան վերեւ, որտեղից կարելի լինէր վայր ընկնելու վտանգին ենթարկւել... Ով որ նոր երկիր է գտնում՝ շատ հեշտ կարող է ծանծաղի կամ ստորաջրային ժայռերի հանդիպել, — դժւար չէ խուսափել այդ խոչընդոտներից և գիւտ չանել ու թողնել որ երկիրը մնայ անյարձ առաջւայ պէս»:

Բրանդէսը պահանջում է, որ գրականութիւնը ծառայի կեանքին: Նա դեմ է «գեղարւեստը գեղարւեստի համար» թէօրիալին: «Ձեզ նորից պատահում են,—հեղինում է նա մի տեղ,—վերջալոյսի ու զարնան զուրեկան նկարագրութիւններ. ցերեկը և գիշերը ճշտապահութեամբ յաջորդում են միմեանց. արեգակը, լուսինը ու աստղերը իրանց սովորութեամբ ծաղում են և թռչունները երգում են. այդ բոլորը շատ սիրուն է, բայց քստարկ է և մտքերի չնչին փոխանակութիւնը չնչին կերպով է պատկերացրած»: «Նորից և նորից, շարունակում է նա հեղինէլ,—աշխատում են համոզել, որ իսկական գեղարւեստի մէջ չը պէտք է լինի ոչ ուղեղ, ոչ արիւն»:

«Չուտ գեղարւեստի» պաշտպանների յարձակումների տենդենցիօղութեան վրայ՝ Բրանդէսը առարկում է, թէ—«ոչ ոք չի կարող ազատ լինել տենդենցիալից — այսինքն թէ որքան էլ մի բանաստեղծ, մի վիպագիր ոչ մի դադափար աչքի առաջ չ'ունենայ բանաստեղծելիս, այնուամենայնիւ նրա գրածքների վրայ կ'ազդեն հայեացքները: Ահա թէ ինչու: Ոչ ոք չը կայ, որի զլուխը բոլորովին ազատ լինի որ և է սխալ թէ ուղիղ, գիտակցաբար ձեռք բերած թէ աւանդաբար ժառանգած աշխարհայեացքից: Եթէ վայրենին չը դիտէ տիեզերքի իսկական կազմութիւնը, այդ չի նշանակում թէ նա ոչ մի հայեացք չունի դրա մասին,—ոչ, նա հաւատացած է թէ արեգակը ձմերուկի չափ է, թէ երկիրը լաւաշի նման է և յենում է վիշապների շարակին և այլն և այլն: Այդպէս էլ ամեն մի բանաստեղծ որոշ հայեացքներ ունի կեանքի երեւոյթների մասին՝ կամ սեփական ուսումնասիրութեամբ ձեռք բերած, կամ անգիտակցաբար փոխ առած,—հայեացքներ, որոնք չեն կարող չ'ազդել նրա երեւակացութեան մէջ ծնունդ առնող պատկերների վրայ, քանի որ, ինչպէս յայտնի է հոգեբանութիւնից, մարդու հոգեկան բոլոր ընդունակութիւնները սերտ կապ ունեն միմեանց հետ: Տենդենցիա չ'ընդունող բանաստեղծները, Բրանդէսի ասելով,—հրաժարելով դէպի բարձր և դէպի առաջ ձգտող տենդենցիալից, ընկնում են ծանր անհրաժեշտութեան տենդենցիալի ազդեցութեան տակ, որ նրանց քաշում է դէպի յետ»:

«Միայն մի պայման կայ, —ասում է Բրանդէսը մի ուրիշ տեղ,—որով դրականական աշխատութիւնների ու ձգտումների խմբեր, ինչպէս և առանձին բանաստեղծներ ու գրողներ ստանում են այն

յատկութիւնը, որ կոչւում է կենսունակութիւն, և մի ուրիշ, դրանից բխող յատկութիւն՝ արգասաւորութիւն, - այդ այն ժամանակն է լինում, երբ որ այդ աշխատութիւնները՝ միջնորդ և այդ տաղանդները օրգան են հանդիսանում, որոնց միջով հոսում է միակ միտքը, որ կեանք է զարթեցնում, այն է մարդկային ազատութեան ու յառաջադիմութեան մեծ գաղափարը: Ինչքան էլ տաղանդով զրւած լինեն այնպիսի աշխատութիւններ, որոնց մէջ չը կայ այդ հոսանքը, նրանք շուտով թառամում են այն բոյսերի նման, որոնց երակները այնպէս են կապկպւած, որ կենդանարար հիւթերը չեն կարողանում բարձրանալ վերև»:

Խօսելով համբերողութեան մասին՝ դէպի հակառակորդների կարծիքները, Բրանդէսն ասում է. «Քէօրիայում պէտք է տիրի անհամբերութեան սկզբունքը, իսկ պրակտիկայում՝ համբերողութեան սկզբունքը: Տեսական հարցերում չը պէտք է տեղի ունենայ ոչ կարեկցութիւն, ոչ ներողամտութիւն, ոչ գութ, որովհետև ստութիւնը պէտք է ջախջախել, յիմարութիւնը պէտք է յօդս պայթեցնել և յետադիմութիւնը պէտք է ջարդել, արիւնլւայ անել: Բայց ինչպէս պէտք է վերաբերւել ստախօսին, յիմարին և յետադիմականին: Պէտք է արդեօք նրանց ջախջախել, արիւնլւայ անել կամ յօդս պայթեցնել: Ոչ, նրանք կարող են հանգիստ շարունակել իրանց ճանապարհը: Գործնական կեանքը համբերողութեան ասպարէզ է»:

Այս բոլոր հատւածները ես բերեցի Բրանդէսի ամենանշանաւոր՝ այն է «Տասնիններորդ դարի գրականութեան գլխաւոր հոսանքներ» վերնագիր կրող գրքից: Հաւատացած եմ, որ ընթերցողները այդ հատ ու կտոր հատւածներից գուշակելով թէ մտքի և զգացմունքի ինչ հարուստ պաշար կայ Բրանդէսի chef d'oeuvre գրքում, կը համաձայնեն, որ աւելի քան ցանկալի է որ այդ հանճարեղ գրածքը լոյս տեսնի թարգմանւած հայերէն լեզուով:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՈՒԲԵԱՆ, ՀԱՅԵՐԵՆ-ՈՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ. Թիֆլիս,
ուպ. Յ. Մարտիրոսեանցի 1891 (թ. 1):

(Նարունակութիւն և վերջ ¹⁾)

Սորանով ես կը վերջացնէի իմ ասելիքը պ. Նաղուբեանի բառարանի մասին, եթէ հարկ չը համարէի մի քանի խօսք ասել այդ բառարանին կցած քերականութեան մասին: Ամեն մի բառարան կազմող հարկաւոր է համարում մի գոնեա կարճառօտ քերականութիւն կցել իւր բառարանին, և այդ հասկանալի է. քերականութիւնը, բացի իւր բուն ճշանակութիւնը, լեզվի ուսումնասիրութեան գործի մէջ հանդիսանում է իւրեւ բառարանի լրացուցիչ և օժանդակ մի մասը: Յաշտնի բան է որ բառարանը չէ կարող տալ մի որ և է բառի բոլոր փոփոխութիւնները, մինչդեռ այդ բոլոր փոփոխութիւնները, ընդհանուր կանոնների տակ գցած, տալիս է քերականութիւնը և գորանով թեթեւացնում է այն բեռը, որ հակառակ դէպքում պիտի կրէր բառարանը. օրինակ՝ գործեց, գործով, գործում այն չէ ինչ որ գործ. ուրեմն եթէ քերականութիւնը չ'օգնէր, այդ պիտի անէր բառարանը: Մի և նոյն ժամանակը քերականութիւնը, այդ թեթեւութիւնը տալով բառարանին և լեզուն ուսումնասիրողին, միջոց է տալիս հեշտութեամբ գտնել բառարանի մէջ բառի սկիզբը, որը միայն ընդունված է բառարանի մէջ, մնացեալ փոփոխութիւնները քերականութեանը լանձնելով: Հետաքրքրելի է ուրեմն իմանալ թէ ինչքան է լաջողւած պ. Նաղուբեանի բառարանի այդ օժանդակ մասը: Տարաբաղդաբար այս դէպքում էլ պիտի դուժեմ անջաջողութիւն և անբաւարարութիւն. սխալները, թիւրիմացութիւնները և թերութիւնները սկսվում են հէնց այդ ու բէնից: Հաւատարիմ մնալով Ախալցխայի բարբառին պ. Նաղուբեանը վե-

1) Տե՛ս «Մուրճ» № 2, 3.

բաղրում է հաշկական ալբերենարանի մի քանի տառերին աչն արտասանութիւնը, որ ունին ալդ տառերը միաչն արեմտեան բարբառներում.

ճ ասում է=13

ձ » ==ДП

ճ » ==ДЖ

ջ » ==ДЧ

մնում է միաչն դարմանալ թէ ինչու պ. Նաղուրեանը հետևողաբար չէ վարվում և չէ տալիս

բ=bh, ph, p.

գ=gh, kh, k.

դ=dh, th, t.

կ=g, kh (ք)

պ=b

ա=d

Նա նպատակ չ'ունիմ և տեղն էլ չէ ալտեղ երկար դատողութիւններ և հետազոտութիւններ անելու լիչեալ տառերի արտասանութեան մասին. բանը շատ պարզ է. առաջին չորս տառերին պ. Նաղուրեանը տվել է մեր արեմտեան բարբառներում տ'իւրոյ արտասանութիւնը, միւս վեց տառերին՝ աչն արտասանութիւնը, որը չատու է արեւելեան բարբառներին, գոնեա նոցա չորս զլխաւորներից երեքին ¹⁾ և որը ընդունված է արեւելեան գրական լեզվում: Թէ ինչ հիման վերադ է պ. Նաղուրեանը ալդպէս բաժին արել ալդ տառերը, ալդ մեզ չաւանի չէ, իսկ խոհմութիւնը թող չէ տալիս ինձ ենթադրութիւններ անելու. կ'աւան միաչն՝ եթէ դեռ լեզվի կամ բառարանի մէջ ներկելի է գաւառաբանութիւններ մտցնելը, ալդ աններկի է ալբերենարանի մէջ: Բառի արտասանութիւնը կարող է ժամանակով փոխվել, բայց ալդ չէ նշանակում թէ հնչյունն միանգամից տված անունն էլ (տառը) պիտի փոխվի. կարող է, օրինակ, լատինական mater գառնալ խաղանքէն madia, բայց ալդ չէ նշանակում թէ գորա հետ միասին և է-ի անունն էլ փոխվում է ձ. է տառը միանգամից ալդպէս անվանված լինելով, պահում է իւր անունը. բայց եթէ mater բառի մէջ նորա փոխաբէն լովում է արդէն ձ, ալդ հնչյունի համար էլ ալբերենարանը տալիս է ձ տառը. ալդպէս էլ հաշկէն. օրինակ՝ ծաղիկ բառը կարող է ալժամ մի քանի բարբառներում արտասանվել չաղիկ, բայց ալդ չէ նշանակում թէ ծ և չ տառերն էլ պիտի փոխեն իրանց սկսեմական բուն անունները ²⁾. կարող է ալ ևս ծաղիկ չար-

¹⁾ Բացառութիւն է կաղմում դարբաղինը:

²⁾ Ծ, ձ, դ տառերի եւրոպական տրանսկրիպցիոյի մասին տ. Աղուլ-բարբ. երես 56:

տասանվել, այլ ձաղիգ, բայց այդ պիտուքի համար՝ այդ արտասանութեան համար մեր Մետրոքական ալբրենարանը չէ վարանում և տալիս է այդ հնչիւնների համար սահմանված տառերը Յ, Գ: Առանց երկարացնելու ասենք՝ պ. Նաղուբեանը, բերելով ընդհանուր հալերէնի ալբրենարանը, չը պիտի մոռանար որ նորա տառերը ունին իրանց լորինդից միանգամ ընդ միշտ ստացած անունները: Մի տառի տեղ միւս տառը գնելը կարող ենք, գուցէ չաճախ ստիպված էլ ենք լինում, բայց տառի անունը (հնչիւնը) փոխելու ոչ իրաւունք և ոչ հարկաւորութիւն կալ, ալապէս վարվելով աֆիպիսի անհնթիթութիւններ կը չառաջանան, որոնց շնորհիւ Venedig բառը մեզանում դառել է Վենետիկ (=Venetik) և baron (բարոն) բառը՝ պարոն (paron): Տառերի ալոսիսի աղաւաղում չը պիտի թույլ տար իրան պ. Նաղուբեանը, մանաւանդ աչն պատճառով, որ իւր բառարանում՝ ընդհանուր հալերէնի ալբրենան է բերում և ոչ այս կամ աչն բարբառինը և նամանաւանդ որ իւր չառաջարկում հաւատացնում է թէ՛ «պահպանված է արարատեան բարբառի քերականութիւնը», ուրեմն պիտի պահպանվէր և տառերի աչն արտասանութիւնը, որ չատուկ է արարատեան հալերէնին և առաւել՝ նորա զրականական լեզվին: Ապա ուրեմն պ. Նաղուբեանի տված ծ=ՔՅ պիտի ուղղվի ծ=ՏՅ, ձ=ՁԱ պիտի ուղղվի=ՁՅ. ճ=ՃՔ պիտի ուղղվի ՏՔ: Այս իսկ հիման վերալ հարկաւոր է ուղղել պ. Նաղուբեանի բառարանի մէջ բերած բազմասխալ բոլոր է բառի ուղղագրութիւնը, նախ՝ եթէ այդ բառի եւրոպական գրութիւնն ու արտասանութիւնն է բիւդժէ (Փրանս. budget), ուրեմն և հալերէն պիտի հնչէր և գրվէր բիւդ ժէ և ոչ բիւդ ջէ, աւելի պակաս՝ բիւժժ է. երկրորդ՝ եթէ պ. Նաղուբեանը հիմնվում է աչն բանի վերալ թէ՛ ճ=ՁՔ, աչն ժամանակ պէտք չէր * (տճ), և երրորդ՝ պ. Նաղուբեանը մոռանում է որ իւր ալբրենարանում տ=Տ. իսկ ալտեղ աչս եւրոպական խօսքը տալիս է Ք հնչիւնը և տառը, որը նոյն ալբրենարանում իրաւացի=դ: Ուրեմն՝ բիւժժ է գրելը բոլորովին և կոպիտ սխալ է, բիւժժէ նոյնպէս սխալ է, մի քիչ պակաս սխալ է բիւժ ջէ և բիւժէ, ուղիղն է բիւժ ժէ: Չը նախելով որ պ. Նաղուբեանը իւր ալբրենարանում բերում է դ=Ձ, բայց նորա բերած բիւժ է բառի մէջ տեսնում ենք տ=Ձ և այդ պատահական չէ. ՏՅԱՄՅՁԵ բառը նա նոյնպէս գրում է աւամուք, ուսք փոխանակ ուսդ (ուսդ անել). նոյնը նկատում ենք Գ-ի վերաբերեալ. թէի ալբրենարանում բերում է գ=Գ (ուղիղ է), բայց գործադրելիս մենք տեսնում ենք հակառակը, օրինակ՝ архипелагъ նա գրում է արչիպելադոս, մինչդեռ զա չունարէն բարդ բառ է և բարդութեան երկրորդ մասը pelagos բառն է, իսկ ց=Գ=գ, Նկատելու արժան է և այդ բարդութեան առաջին մասի չունական * () հալերէնում փոխված շ-ի, ես կը գրէի արչիպելադոս: Ի դէպ է ասել՝ ածականների (ի) կ ա կ ա ն վերջաւորութիւնը պ. Նաղուբեանը չը գիտէ որը պահէ * ա կ ա ն թէ չ ա կ ա ն. նա գրում է՝ Փիզի * ա կ ա ն,

բալց՝ մաթ եմատիկան. + ես սխալ եմ համարում. պիտի լինի հալոնքն՝ իշական և ոչ իշական, որովհետև աղ վերջաւորութիւնը բաղկացած է երկու մասից՝ իկ+ական. առաջին մասը լուծական ik սուֆֆիքսն է (աղ հիման վերաջ սխալ է և ֆիզիկալ), երկրորդը հաշկական (ա)կան վերջաւորութիւնը. ուրեմն պիտի լինի ֆիզիկական և ոչ ֆիզիկական. աղպէս (ալոնքն՝ ն և ոչ +) պիտի գրվեն բոլոր միւս նոյն ծագումը ունեցող բառերը:

յ-ի արտասանութիւնը բառի սկսբում պ. Նաղուբեանը չէ նշանակել: Այդ տառը բառի սկսբում վաղուց արդէն թաւացել է հ-ի հնչիւն է ստացել (բացի զօկերէնից և Ալեքսանդրոպոլի բարբառից, որոնք պահել են աղ տառի սկսբական արտասանութիւնը): Իսկ շ-ի արտասանութիւնը բացատրելու համար բերած օրինակը թէ՛ ГОБОРНЪ բառը, օ բաց թողնելով արտասանինք, ալոնքն՝ Г'БОРНЪ, կը ստանանք Դ-ի և Վ-ի մէջ տեղում մի հնչիւն=հալերէն շ. ճիշդ չէ. ի հարկէ՝ եթէ ГЛАДОСТЬ էլ Մկրտիչի պէս արտասանենք, երկու շ կը լսենք. բալց թէ աղ խօսքերը արտասանողը եթէ հաջը լինի շ-եր չենք լսիլ: Այդ հնչիւնի համապատասխանը եթէ ուտերէնում որոնելու լինենք, կը գտնենք Б (բ) տառի հնչիւնում, բաց թողնելով նորա յ. Լեզվագէտներին լաւանի է որ մեր շ=սլավոնական շ-ին. իմ համեմատութեան ճշդութիւնը, ինչպէս տեսնում էք, ոչ միայն արտասանութեամբ է հաստատուում, այլ միևնույն ժամանակը գրաֆիկական է՝ 1. = 2. յ-երը գէն գցենք, կը ստանանք 2. = 3.

ա-ի մասին պ. Նաղուբեանը ասում է թէ՛ բառի վերջին աղ ձաշնաւորը չէ գրվում (ուղում է ասել՝ առանց յ-ի, որը չէ արտասանվում). բացառութիւնների մէջ չէ վիշված ապա բառը, որը նոյնպէս առանց չ-ի է գրվում: Բացառութիւնների մէջ թէն վիշված են իս վերջացած լատուկ ածուները, բալց պ. Նաղուբեանը առանց քաջվելու գրում է իւր բառարանում Ֆրանսիայ, Գաղղիայ:

Մանօթութիւն: Ոչ միայն իս, այլ և ուր վերջացած աղ բոլոր օտար բառերը ևս գրում եմ առանց յ-ի, ուղղակի ա, վերապահելով յ-ն ալն դէպքերի համար, երբ օտար բառը վերջանում է ալ, զորօրինակ Бахдай, Барклай, чап, Тарсачай և ալն, որ հալերէն Վալդայ, Բարկայ և ալն գրելով՝ որոշում ենք միևնույն ժամանակ և արտասանութիւնը ալ, որովհետեւ, եթէ ալ հնչիւնը չը լինէր կը գրէինք, ինչպէս ասացի, միայն ա:

ն, ասում է պ. Նաղուբեանը, արտասանվում է ինչպէս ուտերէն ն. աղ շատ խոր նրբութիւն է. մեր է հաւատար է ուտեր. Ե-ին, ինչպէս և պ. Նաղուբեանը լաւանում է մեզ իւր ալբուբենի ցանկում. իսկ ուտերէն ն մի աղապիսի հնչիւն է որ հաւատացած եմ՝ շատ դէպքերում 10 հալից ութը չեն կարողանում ուղիղ արտասանել:

է-ի արտասանութիւնը ճիշդ է համեմատված ուտ. Ե-ի հետ. բալց ինչ վերաբերում է պ. Նաղուբեանի կանոնին թէ՛ աղ տառը բառի մի-

ջին պատահում է միալն բարդ բառերում, ալդ նշանակում է թէ գէշ, զէզ, տէր, պէտ(ք) և ալն բառերը մինք պիտի ք գրենք:

Ի՜- բառի միջին, ասում է պ. Նաղուբեանը, տալիս է երկբարբառ Խ (բիւր, աղբիւր), իսկ բառի վերջին ԽВ (թիւ, պատիւ). բանից դուրս է գալիս որ մինչև հիմա հիւանդ բառը մենք ծռւ ենք արտասանելիս եղել (hivaud), պիտի արտասանենք ԽЮАВД, ինչպէս ուսուցանում է ալժմ պ. Նաղուբեանը:

« տառի մասին խօսելով, պ. Նաղուբեանը բերում է մի օրինակ Ուլ-րատիոս, որի կողքին փակագծում դնում է ուսերէն Овратіосъ, Овдїѣ. դուրս է գալիս որ Овратіосъ (որ է Гораціѣ) և Овдїѣ միևնոյն է: Բառի վերջին « առանձին չէ գրվում (отдѣльно не пишется) — ասում է պ. Նաղուբեանը. ալդ որ բառի վերջին տառն է առանձին գրվում. ուղում է ասել՝ բառի վերջին «-ն փակվում է -ով, որը չէ արտասանվում: Բացառութիւնների մէջ չէ վիշված ալս բառը (եթէ չը պահանջենք հին հայերէնի «-ով վերջացած հրամայականը՝ ուսո, ապրեցո, և ալն):

«-ը (ЮН) արտասանւում է եղած ինչպէս լոճական «, ասում է պ. Նաղուբեանը. ալժմեան լեզւում նա պատահում է միալն ուրիշ ձալնաւորների հետ բարդուած, կազմելով աւ (ав), եւ, և (ев), ու (у), իւ (ив, ю) և ալն): Եւ ինչ և ալն (etc), քանի որ մնաց միալն ք և օ ձալնաւորները, որոնք մինչև ալժմ իրանց կեանքումը «-ի երես չէին տեսիլ (ալսինքն՝ էւ, օւ), մինչև որ վերջին երկու տարիներս պ. Աղալեանց և պ. Արասխանեանց պատգամեցին մեզ թէ՛ ալսուհետեւ «-ը ЮН է (հիւն կամ իւն), ալ В (վ) է. նորա անունն է փոքր վ և պիտի գրենք « ինչտեղ որ В (վ) ենք լսում: Եւ գրեցին Սւետլօւ և անա ալդ օրից է, որ օ-ը «-ի երես տեսաւ: Այդ պատգամը շատ անմեղ ոգիներ շիրթեցրեց, որոնց թվում և պ. Նաղուբեանին, որը ալնքան անմեղ է (քերականութեան մէջ ի հարկէ) որ լատենելով թէ «-լոճարէն «, և ալժմ դործ է ածվում միալն ա, ե, ի, ո՛ ձալնաւորների հետ միասին, ինքը իւր լառաջարանում և բառարանում գրում է թ-ում, ալն-ութիւն, գերապառութիւն և ալն: Կանոնը ուղիղ է՝ «-լոճար. «, ալժմ նա դործ է ածվում միալն ա՜ւ (ав, ինչպէս և արդի լոճարէնում) ե՜ւ (ев, ինչպէս արդի լոճարէնում) ո՜ւ (у, հայերէն և լոճարէն) ի՜ւ (ив, ю¹) բաց ալդ կանոնի գործադրութիւնը (թ-ում, ալն-ութիւն,

¹) Յօդածի ալժմ հանգուցեալ հեղինակ Սարգիս Սարգսեանի կարծիքների հետ «-ի և վ-ի վերաբերմամբ ի հարկէ մենք տարակարծիք ենք: Ալն իրողութիւնից, որ գրաբառում ք և օ տառերից լատու « չէր գրւում, նա ուղեցել է եղբակացութիւններ դուրս բերել, առանց ի նկատի առնելու, որ եթէ գրաբառը մեղ կարողանար ուղեցուց լինել, ալդ նույն գրաբառում ոչ մի բառ կամ անուն չի եղել, որ բառի սկզբում ԵВ հնչիւնը ունենար.

և ալէն) ցոյց է տալիս որ պ. Նաղդուբեանը իւր տված կանոնը ինքը չը գիտէ, կամ իրան համար պարտաւորեալ չէ համարում ¹⁾:

«-ի մասին պ. Նաղդուբեանը ասում է թէ՛ արտասանում է ինչպէս երկար օ. օրինակ տօն, օր: Ի՞նչպէս է ըմբռնել պ. Նաղդուբեանը «-ի և -ի ալ տարբերութիւնը արդի հաշիւէնում (իւր թէ օ մինք արտասանում ենք երկար, իսկ «-կարճ), ալ անհասկանալի է, քանի որ իսկապէս լեզվի մէջ ալ տարբերութիւնը չը կա, և ես կասկածում եմ որ պ. Նաղդուբեանը ինքը ալ տարբերութեամբ արտասանում լինի. եթէ օ նա արտասանում էր երկար, իսկ «-կարճ, ահա ժամանակ անցիսի կոպիտ տառաւորաւոր չէր անիլ, ինչպէս համառօտ (սխալ, համառօտ), կօպէկ (սխալ, կօպէկ), ոչ. օ միայն ձեռք է որոշում «-ից: Բացի դորանից՝ օ մտել է հալոց ալբերնարանը ոչ թէ լուծարէնից XI դարում (էդ ինչու հալերը մինչև XI դարը լուծարէնից չ'առան), ալ եւրոպական ալբերնարանից՝ մեր «-ի օ արտասանութիւնը նշանակելու համար (ինչպէս որ Փրանս. au=օ): Ալ օ մտնելուց չետո՞ շատերը կամ ողորդելու վարմարութենից կամ լաւ չը հասկանալով, սկսեցին՝ առանց աջ ու ձախ նաշելու, ամեն մի պատահած «-ը օ-ով նշանակել (զոր. օ ար սխալ, աւար և ալէն: Ալ չ'իտիութեան ժամանակ զո՞ էր գնում և օտար բառերի «-ը որ մինչև

գրաբառում էւ վանկը չկար, և էւ չէին գրում ահա պարզ պատճառով, որ բուն հաշիւէն լաւերում և անուններում աղափսի հնչիւն, հետեապէս և վանկ չկար. իսկ բոլոր օտար բառերի և անունների էւ-ը հին հալերը դարձրել են է-ի. Եւրոպան դարձրել են Եւրոպա, Եւան դարձրել են Եւա և ալէն: Պարզ է որ հին հալերը չէին ասիլ էւոլուցիա, ալ կ'ասէին եւոլուցա բաց եթէ արտասանէին էւոլուցիա, հէնց աղապէս էլ կը գրէին: Ով որ զարմանում է ահա բանի վերայ, թէ հին հալերէնում չի գրել էւ, նա գտնէ պէտք է պատրաստ լինի օրինակներ բերելու թէ ալ նոյն հին հալերէնում գրում է կղել էվ: Եւ ի հարկէ երկար կը սպասէինք ալ օրինակներին: Նոյնքան անաջող է թւում ծաղըր օւ-ի նկատմամբ. օւ գրելը ոչ թէ սխալ է, ալ միայն աւելորդ, քանի որ «վ նոյն դերն է կատարում. և եթէ ծաղրելի է օւ գրելը միայն որովհետեւ գրաբառում աղափսի ուղղապրութեան չենք հանդիպում, նոյնքան ծաղրալի պէտք է լինի օվ գրելը, քանի որ գրաբառում օվ չէր գրւում: Նոյնպէս պնդելը թէ «-ը աւել միայն ա, ե, ի, ո տառերից վետո է դրժածում, նշանակում է ակնյալի կերպով ուրանալ ներկա ժամանակի գորղներից շատերի և մի քանի պարբերական հրատարակութիւնների ուղղագրութիւնը: Եւ նոյն իսկ գրաբառի համար ալ հաւեացքը սխալ է, քանի որ «-ը նաեւ գրաբառում դորժ էր ածւում ոչ միայն ձայնաւորներից վետո, ալ և բաղաձայններից վետո աղափսի դէպքերում՝ տեղւոյ, եկեղեցւոյ, վինտոյ և ալէն: Աղափսով հեղինակի ամբողջ արդումենտայիւն «-ը տառի նոր դրժածութեան դէմ՝ առնւազն անաջող է:

Ծանօթ. խմբ.

¹⁾ Իմ կարծիքը «-ի և է-ի մասին տես «Մուրճ» 1889 թ., № 5:

ալն ժամանակը ապա գրվելով ապա չփոխման ժամանակ վիճակակից եղաւ հալերէն աւ-ին, և Պաղտոս և զորա նման խօսքերը սկսեցին գրվել (լեռնոյ և արտասանվել) Պաղտոս և ալլն:

Մասնօթ. օ-ի մասին կարճ կանոն՝ օ գրում ենք ալն զէպքերում, ինչտեղ որ մեր նախնիքը գրում են եղած աւ:

Է-ի մասին պ. Նաղուբեանը ասում է՝ կիսաձայն և հնչիւնը (e muet) առհասարակ դնվում է բառի սկզբին և վերջին, իսկ եթէ բառի սկզբումը ղ, շ, * բաղաձայններից չետոյ պատահում է ք, փ, չ, * բաց է թողնում: Խօսքը և հնչիւնի մասին է (ЗВУКЪ է), բայց նպատակը Է-ի ուղղագրութիւնն է. պարզ կարելի է ասել՝ Է կարող է լսելի լինել բառի սկզբում, միջում և վերջում, բայց գրվում է միայն սկզբում և վերջում. իսկ բառի միջինը առհասարակ չէ գրվում: Ինչ վերաբերում է ղ, շ, * տառերի ղ, շ, ղ, * արտասանելու, երբ նրանց հետևում են ք, փ, չ, * բաղաձայնները, չէ կարելի աղպէս ընդհանրացնել. թէ ոչ՝ ալն օտարազգիները (նոյն և օտարացած հալերը), «որոնց համար զետեղած են լառաջարանում հայոց լեզուի մի քանի գլխաւոր քերականական կանոններ», պ. Նաղուբեանի տված ալս կանոնի հիման վերալ պիտի ս գ ա լ (սըգալ), տտել (սըտել), գտել (զըտել) և ալլն կարդան ը ս գ ա լ, ը ս չ ա լ, ը գ տ ե լ և ալլն:

Բաղաձայն տառերի մասին խօսելով, պ. Նաղուբեանը ասում է՝ «օտար բառերը, որոնց մէջ պատահում են երկու միատեսակ բաղաձայն տառեր ¹⁾, հալերէնում ²⁾ մէկն է գրվում (միլիոն, Թաղէոս և ալլն): Ոչ միայն օտարտի է ալլ օրէնքը տեսնել «մի քանի գլխաւոր քերականական կանոնների» շարքում, ալլ դա ամենեւին պարտաւորեալ օրէնք չէ, քանի որ մենք գրում ենք Յ ո լ Ն ա ն է ս, Ա ն ն ա և ոչ Յ ո լ Ն ա ն է ս, Ա ն ա, և պ. Նաղուբեանը ոչ իւր, ալլ իմ ասածն է հաստատում, գրելով Գ ա ղ ի ա ղ և ոչ Գ ա ղ ի ա ղ (ուղղիղն է՝ Գաղղիա):

Դիմենք ալլմ պ. Նաղուբեանի հոլովմունքներին և խոնարհմունքներին: Հոլովների թվում մենք՝ չենք տեսնում Կ ո չ ա կանը, ալլ անշուշտ ալն պաճառով, որ Կ ո չ ա կանը նման է Ուղղականին. կարճ լինելու համար գեռ կարելի է բաց թողնել, բայց թէ հոլովների ցանկում չը չիլել, ինչպէս ալլ անում է պ. Նաղուբեանը, նշանակում է՝ կարծել թէ հալերէնում ալլ հոլովը չը կալ: Եթէ Ուղղականի նման լինելն է պատճառը, որ պ. Նաղուբեանը դէն է գցել Կ ո չ ա կան հոլովը, ապա ինչու նա դէն չէ գցում և Հ ա լ յ ա կ ա ն հոլովը, որը՝ ըստ նորա քերականութեան, մի շտ նման է Ուղղականին: Պ. Նաղուբեանը, որը իւր լառա-

¹⁾ Աւերացրէք միասին, կամ մէկը անմիջապէս միւսի լետելից:

²⁾ Բնագրում տուած է «на армянской». դա съ Акномить ի չափ կուպիտ տպագրական սխալ է:

ջարանում վտտահարար ասում է «չալտնի բան է պահպանւած է արարատեան բարբառի քերականութիւնը», կարծես չը գիտէ թէ՛ ալի բարբառում Հաւցականը չալտնի դէպքերում նման է Տրականին:

Ներգոչական հոլովը, որ մեր աշխարհաբանում ¹⁾ սովոր ենք տեսնել ում վերջաւորութեամբ, պ. Նաղուրեանի քերականութեամբ ունի և մի ալ ձև՝ մէջ խօսքի օգնութեամբ շինված, օր. ամանի մէջ, գինու մէջ: Մի կամ մի քանի խօսքերի օգնութեամբ չէ կարելի մի բառի համար հոլով շինել. հոլով շինող բառը հարկաւոր է որ իւր ինքնուրոյն նշանակութիւնը (իբրև առանձին խօսքի) կորցրած և նախ դիր դարձած լինի. իսկ մէջ նախդիր չէ, ալ ինքնուրոյն խօսք է: Նթէ ամանի մէջ ներգոչական հոլով է, ապա ինչ հոլով է՝

ամանի մէջը (դարտակ է)

ամանի մէջի (ջուրը թափիր)

ամանի միջից (ձեռդ հանիր) և ալն

Յրրորդ հոլովադասութեան Ներգոչականը պ. Նաղուրեանի կարծիքով ում վերջաւորութիւնը չ'ունի. սխալվում է. ունի: Սխալ է նույնպէս Ներգոչական հոլովին ռուսերէն предложный անուն տալը: Հասկանալի է որ предложный հոլովին ալի անունը տրվել են, որովհետև նախդրով (предлогъ) է դործ ածվում, բայց նա առաւելի ներսը չէ նշանակում անպատճառ, նա նշանակում է ալն, ինչ որ նշանակել է տալիս նախդիրը. въ նախդրով նա նշանակում է մէջը, ներսը, բայց ուրիշ նախդիրներով ուրիշ նշանակութիւններ է ստանում (о, на, в, по). մինչդեռ հալոց ներգոչական հ. միայն առարկայի ներսը կամ մէջն է ցոյց տալիս և ալի պատճառով պիտի թարգմանվի Мѣстный կամ Локативный (Locativus): Բայց որ Предложный թարգմանելը ուղղակի սխալ է, մենք իրաւունք ենք ստանում պահանջելու պ. Նաղուրեանից, որ նա մեր Ներգոչականը Локативный կամ Мѣстный թարգմանէ և ալն պատճառով որ Գործիական հոլովի համար նա չէ բաւականացել ռուսերէն Творительный անունով, ալ առել է Инструментальный անունը. աղքատ ճշգրտութիւն, և կողքին կոպիտ սխալ:

¹⁾ Ի դէպ. աշխարհաբան, գրաբան-ով գրելը (աշխարհաբան, գրաբան, ինչպէս գրում է ի թիւս շատերի և պ. Նաղուրեանը) ես սխալ եմ համարում. ալի բառը բարդված է կամ բառ կամ (բառ)բառ (Նալբանդեանց) բառերի հետ (իբր՝ աշխարհախօս, գրախօս, աշխարհքի լեզու, գրքի լեզու), և արտասանելիս էլ աւելի լսելի է «բան բ. մինչդեռ աշխարհաբան մակբայ է, ինչպէս գաղանաբար, առիւծաբար և ալն, օրինակ՝ գաղանաբար վարվել, առիւծաբար չարձակվել, — բայց ոչ՝ գաղանաբար մարդ և ալն:

Ուղղական լուսնակին միավանկ բառերը կազմում են՝ եր վերջաւորութիւնը աւելացնելով եզակի ուղղականի վերայ, հաց, հացեր և ալն, ալը նկատում է պ. Նաղուբեանը, բայց ոչինչ չէ ասում թէ ինչպէս են կազմում լուսն. ուղղականը մէկ ու կէս վանկ ունեցող բառերը, օրինակ՝ մշակ, պսակ, կտոր (լուսն. մշակ-ներ, պսակ-ներ, կտոր-ներ), Երկրորդ հոլովադասութեան մէջ (եզ. ուղղ.-ի) եթէ պ. Նաղուբեանը ներ վերջաւորութեան հետ բերէր և * վերջաւորութիւնը, որ ալը հոլովադասութեամբ հոլովող անունները ունին, ալն ժամանակը նա ստիպված չէր լինիլ իւր բառարանում քարոզելու թէ՛ եւրոպացի - европеецъ, եւրոպացի---европейцы:

Ինքը դերանունի Սեռականը բացի իւր է և իրա (ն): Տրական և Հալցական միալն իրեն չէ, ալ և իրան: Պակասում է ուղղականը դէմքի համար՝ ինքս (я самъ), 2-դ դէմքի համար ինքդ (ты самъ):

Սա, դա, նա ցուցական դերանունները բերելով, պ. Նաղուբեանը պիտի աւելացնէր որ ալը դերանունները արեւելեան բարբառներում (և գրականականում) գործ են ածվում իբրև գոլականներ, ալսինքն՝ առանց գոլական անունի. սա դնաց, դա եկաւ, նա չը գիտէ, արեւմտեան հաւերէնում ընդհակառակը՝ ածականներ են (սա մարդը և ալն): Սա դերանունը հոլովելով լուսն. սորանք, սորանց, սորանց, սորանցից սորանցում ձևերը պ. Նաղուբեանը փակագծում է դնում իբրև սակաւ գործածական. իսկ ես բաղորովին կը ջնջէի և զոցա տեղը կը դնէի. սոքա, սոցա, սոցա, սոցանից, սոցանով, ալնպէս որ կը ստացվէր՝ սրանք—սոքա, սրանց—սոցա, սրանցով—սոցանով, սրանցում—սոցանում. մինը՝ ժողովրդական և աւելի լաճախ գործածվող մինչև անգամ գրականական լեզվում, միւրը՝ գրաբառաձև և նույնպէս գործածական. իսկ սորանից, սորանցից և ալն ոչ ալս է և ոչ ալն, և իմ կարծիքով աւելորդ ձևեր էլ են, քանի որ ոչ ժողովրդական են և ոչ գրաբառ. Պ. Նաղուբեանը պիտի աւելի քան ուրիշ մէկը համաձայնի ինձ հետ և մոցնէ իւր քերականութեան մէջ սոքա, սոցա, դոքա, դոցա և ալն, քանի որ ինքը իւր լառաջարանում գործ է ածում դոցա, նոցա ձևերը, թէն իւր քերականութեանում տեղ չէ տալիս:

Իմ, քո, իւր ¹⁾, մեր, ձեր, իրենց ²⁾ ստացական դերանունները, իբրև ածականներ գոլականների հետ դրված լինելով, չեն հոլովվում. առանց գոլականի մնալով (ուրեմն՝ բաց թողված գոլականը փոխարինելով) հոլովվում են: Ալը կանոնը բերել է պ. Նաղուբեանը, բայց մոռացել է աւելացնել, որ ալը դէպքում ալը դերանունները ստանում են ցուցական—դիմորոշ լուսն. (ը)ս (ը)դ, (ը)ն կամ ը(ս), ը(դ) ը(ն)—մի բան, որ լատուկ է

¹⁾ Աւելացրէք՝ իւր, իրա(ն). իւր և իւր առանց գոլականի գործադրութիւն չունի. ալը դէպքում գործ է ածվում միալն իրանը:

²⁾ Աւելացրէք՝ իրանց.

և հասարակ ածականներին ¹⁾ և եթէ այդ կանոնը դրված լինէր, հարկաւորութիւն չէր լինիլ միւս և ուրիշ բառերը ներքեւ միւսը և ուրիշը ձևերով փոխելու. լեզուն չ'իմացողը կը կարծէ թէ մինչ ատում ենք միւսը օրը, ուրիշը մարդը, քանի որ իբրեւ ածական ատում է միւս օրը, ուրիշ մարդ, իսկ իբրեւ գոյական (բաց թողած գոյականի փոխարէն չ ատանալով) միւսը, ուրիշը:

Մանօթ. 1. Յուցական—գիմորոշ լողը ալս դէպքում Ուղղականի համար պարտաւորեալ է. միւս հոլովները գործ են ածիւմ և լողով և աւանց լողի:

Մանօթ. 2. Զարմանալի է որ պ. Նաղուբեանը «օտարազգիներին» համար իւր լառաջաբանում դեռեղելով «հալոց լեզուի մի քանի գլխաւոր քերականական կանոնները», մոռացել է այդ կանոնների շարքում տեղ տալու հալոց լեզվի մի աջակիսի խոշոր առանձնապատկութեանը, որպիսիք են ցուցական—գիմորոշական լողերը (շ), (շ)դ, (շ)ն կամ շ(ս), շ(դ), շ(ն): Բացի որ այդ *, դ, ն կամ շ (չափնի վէպերում ն) ինքն ըստ ինքեան իրաւունք ունին քերականութեան մէջ տեղ ունենալու, չ'որ օտարազգիներ չը պիտի գտնէ բառարանում բոլոր լող տալիք բառերը, կամ եթէ գտնէ էլ՝ այն բառը չը պիտի լինի, որն որ հարկաւորէ, օր. բանդ (այսինքն՝ բանդդ, քո բանը, այդ բանը) սա պիտի գտնէ և թարգմանէ тюрма, темница, վարս ²⁾ (=վարըս, իմ վարը, այդ վարը) պիտի գտնէ և թարգմանէ кудри, грива, կամ վարդ (=վարդդ, քո վարը)—роза, бантъ. սանդ (=սանդդ, քո սանը)—сукна և այլն:

Ամենքը չէ նշանակում ВСЯКІЙ, ինչպէս կարծում է պ. Նաղուբեանը, դա լոգնակի է և նշանակում է ВСѢ, գորա եղակին է ամեն (ածական) և ահա այդ ամեն—ն է, որ նշանակում է ВСЯКІЙ և որը չէ փոխած:

Գիմենք աժմ խոնարհմունքներին: Գրանք աւելի քան թէ հոլովմունքները թերութիւններ ունեն: Պ. Նաղուբեանը բաժանում է բալերի խոնարհումը չորս ըծորդութիւնների, որոնք, ինչպէս նա ասում է, «զանազանվում են իրարից Աներևութ եղանակի (եւ, իւ, ալ, անալ) և Անց. Կատարեալի ու Հրամալական եղանակի վերջաւորութիւններով: Յետոյ, մի քիչ ներքեւ, նոյն հեղինակը մեզ լսանում է թէ «եւրկրորդ ըծորդութեան Աներևութ եղանակը վերջանում է նոյնպէս և եւր. իսկ Անց. Կատարեալի և Հրամալ. եղ. վերջաւորութիւնները մենք արդէն ինքներս ենք նոյն հեղինակի քերականութիւնից տեսնում որ միևնույն վերջաւորութիւններն են, ինչ որ

¹⁾ Օրինակ՝ ալս մարդը կարմիր, սպիտակ և սև գոյներից մէկը (այսինքն՝ մէկ գոյնը) պիտի ընտրէր. կարմիրը (այսինքն՝ կարմիր գոյնը) և սպիտակը (այսինքն՝ սպիտակ գոյնը) թողած, նա սեւ (այսինքն՝ սև գոյնը) ընտրեց:

²⁾ Ասենք իսկի վար (վար ու ցանքս) խօսքը բառարանում չը կա՞ էլ:

առաջին լծորդութեան համապատասխան ձևերում. ահա մի համեմատական աղիւսակ՝

I լծորդ.

Աներևոյթ եղան. սիրւել

Անց. կատար. սիրեցի

Հրամայակ. եղ. սիրիր, սիրէ, սիրեցէք. խօսիր, խօսէ, խօսեցէք.

Ուրեմն էլ ինչ մնաց երկրորդ լծորդութիւնը կազմելու կամ որոշելու համար. մարդ գրածը տպելուց առաջ՝ առաջ ինքը պիտի կարդայ:

II լծորդ.

խօսել (ինչպէս խոստով. ինքը պ. Նազ.)

խօսեցի

Չորրորդ լծորդութեանը պ. Նազուբեանը տալիս է ահն բա-
լիւրը, որոնք բալիւ արմատի և վերջաւորութեան մէջ տոանում են ահ (կամ՝
են) սուֆֆիքսը. օր. հեռ—ան—ալ, կամ—են—ալ. ուրեմն ահ ալ,
են ալ ամբողջապէս Աներևոյթ եղանակի վերջաւորութիւն համարելը սխալ
է, և եթէ այս սուֆֆիքսը ունեցող բառերը առանձին լծորդութիւն են կազ-
մել ¹⁾ ապա ինչու առանձին լծորդութիւններ չեն կազմել (ա)ն—էլ, չ—էլ
(ա)ցնէլ (կամ (ե)ցնէլ) կազմած բառերը. օր. (գա(ա)նէլ) գտնէլ
(տես (ա)նէլ) տեսնէլ, առնէլ, թուչնէլ, իմացնէլ, թուցնէլ և այլն. չէ՞ որ
գոքա էլ ահն աստիճան չեղլում են և լծորդութիւնից, ինչ աստիճան որ
անալ (ենալ)՝ ալ լծորդութիւնից. ձմարիս չարաբաստիկ վիճակ է
գտնէլ բառի վիճակը. այդ իսկո՞՞ք բառը, որ ամենից շատ իրատե՞ք
ունի բառարանում գտնվելու և ամենից քիչ շանսեր ունի մոռացված
լինելու, տեղ չէ գտնել պ. Նազուբեանի ոչ բառարանում և ոչ քերական-
ութեան մէջ. Թոմաս էֆենդին կ'ատէր՝ մեծ էջը աստուծոյն է մնացել:

Քանի որ խօսքը Աներևոյթ եղանակի մասին է, ի գէպ է ասել՝
կրաւորակա՞ն բառերը, ըստ քերականութեան պ. Նազուբեանի, վեր-
ջանում են ուլի ²⁾ բայց իսկապէս ոչ պակաս՝ եթէ ոչ աւելի լաճախ
տեսնում ենք ուլէլ. այս գէպքում էլ պ. Նազուբեանը, հակառակ իւր
կանոնին՝ իւր օրինակներովը գալիս է ինձ օգնելու. նորա բառարանում
մենք տեսնում ենք՝ բաժանել—բաժանուլէլ, դըրել—գըրուլէլ, ուղղել—
ուղղուլէլ և այլն. ձմարիս է՝ նա ալ գէպքերում ալ բառերը չէղք է
անվանել, բայց խօսքը նշանակութեան վերայ չէ ադատեղ. գոքա կարող
են լինել չէղք (ինչպէս և կրաւորական), բայց կազմութիւնը կրաւորա-
կան է (ու նշանը) և աղպիտի բառերը կոչվում են կրաւորակա՞ն ալ երա
չէղքակա՞ն: Այդ ձևը (վել) տաճում են ալժմ մեր լեզվի մէջ (բայց
կրաւորական բառերից) շատ չէղք բառեր, որ պ. Նազուբեանը աշխատում
է իւր վերջաւորութեամբ պահել, օր. բախտաւորիլ (վիտ. բախ-

¹⁾ Լաւ քերականութեան մէջ ալ չէր լինիլ. կարելի է լարմարցնել
ալ լծորդութեանը ահ սուֆֆիքսը:

²⁾ Տես պ. Նազուբեանի քերականութեան վերջումը ծանօթութիւն:

տաւորվել), բորբոքել փոխ, բորբոքվել) և այլն. իսկ միւս դէպքերում չէզոք բաղերը պ. նշուրեանը խառն է զործ ածում իւր և եւ, օր. բանիլ, բախտաւորիլ, սթափիլ և այլն, բայց՝ սահել, սառել, կարմրել, ծաղիկել և այլն:

Գիմենք ալում բալի եղանակներին և ժամանակներին: Փոխանակ բալի խոնարհումը պարզացնելու, պ. նաղուրեանը աւելի բարդացնում է մի քանի ժամանակներ և մի եղանակ աւելացնելով. աւելորդ եղանակն է Պալմանական եղանակը, իսկ ժամանակները՝ նորա *предварительное* առած *будущее* (*futurum exactum*) և Ստորադասական եղանակը և Կերակասարը:

Предварительное будущее (*fut. exactum*) օր. սիրված կը լինեմ. եթէ պարզ բայը (սիրել) ունի *futurum exactum* և ալն, սիրած կը լինեմ, ապա որ ժամանակն է և ինչու նոյն բալի տակ չը կան սիրած եմ լինում¹⁾, սիրած էի լինում: Սխալվում է պ. նաղուրեանը. ալ ձեռ սիրել բալի ոչ պարզ ալ բարդ խոնարհումն է (*описательное спряжение*), որի համար կարող էր նա առանձին բաժին բանալ, որ սիրած լինել խոնարհման ձևերը չը խառնէր սիրել բալի խոնարհման հետ: Նոյն ալ պատճառով սիրել բալի խոնարհումից դուրս գցելու է և Ստորադասական եղ. սիրած լինեմ, սիրած լինէի և Պալմանական եղ. սիրած կը լինէի²⁾: Պալմանական եղանակն էլ մի աւելորդութիւն է մեր խոնարհումների մէջ. բայը Պալմանական եղանակ կաղմկու համար նոր ձևեր կամ վերջաւորութիւններ չէ տալիս, ալ նոյն Ստորադասական եղանակի ձևերը՝ սիրեմ, սիրէի (և եթէ ուզում էք՝ սիրած լինէի) զործ ածելով կը մասնիկով մի նշանակութիւն ենք ստանում, թէ, և թէ, որ դնելով՝ մի ուրիշ նշանակութիւն. հիմա ով է մեղաւոր որ կը ալն նշանակութիւնը չունի, ինչ որ թէ, և թէ, որ:

Փոխանակ ալ տեսակ աւելորդութիւնների տեղ տալու, աւելի լաւ չէր լինիլ որ մի պարզ բալի խոնարհման մէջ հեղինակը չը մոռանար բերելու Բացառական Ապառնու խոնարհումը և Արդեւականի (*==* Բացասական) ձևերը:

¹⁾ Օրինակ՝ ամեն անգամ որ նա գալիս է ինձ մօտ, ևս ճաշս արդէն կերած եմ լինում, ամեն անգամ որ նա գալիս էր ինձ մօտ, ևս ճաշս արդէն կերած էի լինում. ի դէպ՝ լինել բալին չը վերադառնալու համար: Պ. նաղուրեանը բերում է ալ բայը իբրեւ էական բալ (*быть*) և բառարանումն էլ չէ տալիս նորա ձեռ *быбаТЬ*. Իբրեւ էական բալ բերելով նա խոնարհում է՝ եմ, էի և այլն, մինչդեռ ալ խոնարհման մէջ մասնակցում են երեք բաղեր (եւ, եղանիլ, լինիլ). իսկ լինել բալի իսկական խոնարհումը չէ վիշված՝ լինում եմ, լինում էի և այլն:

²⁾ Մեր առածը վերաբերում է ի հարկէ և միւս օրինակներին:

Ապառնի. կը սիրեմ բայց չը կալ Բացաս. Ապառ. չեմ սիրիլ ¹⁾

կը սիրես

չես սիրիլ

կը սիրէ

չի սիրիլ

և ալչն

և ալչն

հրամ. սիրէ կամ սիրիր չը կալ արդեւական մի սիրիլ (կամ սիրիր)
սիրեցէք մի սիրէք

Անցեալ կատարեալը պ. Եղորեանը թարգմանում է Perfectum: Աւելի ճիշդ և լարմար կը լինէր, եթէ թարգմանէր Aoristus. ալն ժամանակը նա միջոց կ'ունենար մեր Յարակատարը թարգմանելու Perfectum graecum կամ Perfectum logicum փոխանակ Предварительное прошедшее, որ ուստի համար անհասկանալի է ²⁾, և սխալ էլ է. մինչդեռ ուղ մեր Յարակատարը ամեն ճշդութեամբ համապատասխանում է լոնաց Perfectum-ին կամ ալն ժամանակին, որ լատիներէն ասովում է perfectum logicum:

Յետո՛ւ աշխատել զանազան մակբայներով (уже, тогда և ալչն) բացատրել ժամանակի միտքը և նրբութիւնը՝ զուր է. դա միննոյն է՝ նպատակին չէ հասցնում. իսկ խօսեցի թարգմանել заговорилъ, սիրեցի—любилъ, ալն էլ օրինակ բերված բալերում՝ նշանակում է գլխութեամբ թէ անգիտութեամբ տարակուսութիւնների տեղիք տալ:

Մի նկատողութիւն էլ և ալչ կը լինի վերջինը. Խնչքան էլ որ կարճ գրված լինի քերականութիւնը, ինչքան էլ որ նա՝ օժանդակ և ոչ գլխաւոր մաս համարված լինելով՝ միայն լեզվի գլխաւոր կանոնները պարունակէր, նրանից աճողամանաճիւ իրաւունք ունինք պահանջելու, որ տեղ տար՝ 1) գալ, տալ, լալ բալերի խոնարհմանը (գալիս եմ, տալիս եմ, լալիս եմ), 2) ունենալ, գիտենալ, արժենալ բալերի խոնարհման առանձնապատկութեանը, 3) գալ և ուտել ալլարմատ բալերի ձևերին. գալ—եկալ, ուտել—կերալ. Այս գործածական բալերի մասին ոչինչ չէ ասում ոչ իւր քերականութեան և ոչ իւր բառարանի մէջ պ. Եղորեանը, որը չէ մոռանում ամենազղուջ հեռատեսութեամբ թարգմանելու՝ նամակ գրել—писать письмо, տիկին—мадам!

Ես վերջացրի իմ ասելիքը պ. Եղորեանի հալերէն-ռուսերէն բառարանի մասին: Չը գիտեմ ինչ եզրակացութեան կը գալ ընթերցողը, իսկ ինձ համար պարզ է որ՝

¹⁾ Եւ անպատճառ՝ սիրիւ և ոչ՝ սիրի, և երրորդ դէմքը՝ չի և ոչ՝ չէ:

²⁾ Նրա համար ուղ համարեա միենոյնն է, ինչ որ преждепрошедшее կամ Давнопрошедшее.

Պր. Նաղուբեանի խոստովանութիւնը թէ իւր բառարանը ունի «բազմաթիւ պակասաւոր կողմեր» լոկ համեստութիւն չէ, այլ իրողութիւն է:

1. Արդարեւ բաց են թողլած «բազմաթիւ բառեր, որոնք պիտի լինէին այս բառարանում» և ընդհակառակը՝ բերված են արևմտեան (Ախալցխայի) գաւառաբանութիւններ, որ աւելորդ կարելի է համարել այս տեսակի բառարանի մէջ:

2. Իւր բառարանը կազմելու համար պ. Նաղուբեանը գրականութիւնը ոչ միայն ամբողջապէս, այլ բաւականաչափ չէ կարգացել. իսկ

3) Բարբառների գրականութիւն ունենալը և շատերի հետազոտված լինելը նա չը գիտէ անգամ («դեռ մշակուած, անգամ գրի անցրած չեն»):

4. Ոչ միայն շատ դժբաժակաւ բառեր պակասում են, այլ բերվածների նշանակութիւնը լաճախ ոչ ճիշդ և ոչ գլխաւորն է տրված, լաճախ անգամ բոլորովին սխալ նշանակութիւն է տրված բառին, և երբեմն գործածական նշանակութիւնները ոչ բոլորն են բերված:

5. Նոյնը կարելի է ասել և դարձվածների մասին. կարևոր, բնորոշ և առանձնադատութիւն ունեցող դարձվածները լաճախ պակասում են, և ընդհակառակը՝ շատ լաճախ հասարակ և բառացի թարգմանվող նախադասութիւններ և խօսքեր դարձվածներ են համարված և մէջ բերված ու թարգմանված:

6. Քերականութիւնը (այսինքն՝ տառերը, ուղղագրական և քերականա՛յան կանոնները) կիսատ-պոստ է, սխալներ է պարունակում, անհմուտ է կազմված և շատ կարևոր բաներ պակասում են. մանաւանդ թող են բացեր:

7. Ռուսերէն լեզվի սխալները, ինչպէս և հայերէնի ուղղագրական և լեզվի սխալները¹⁾, բառերի և դարձվածների լաճախ սխալ թարգմանելը ցոյց է տալիս որ հեղինակը բառարան կազմելու հարկաւոր պատրաստութիւնը չէ ունեցել և ոչ ժամանակ, ինչպէս խոստովանում է ինքը իւր բառարանում:

Բաց միթէ, կը հարցնեն ինձ, պ. Նաղուբեանի բառարանը ոչ ոքի և ոչինչ բանի պէտք չէ: Ինչու չէ. մեր ալն գիմնադիտները, որոնք սկսում են իրանց ուսումը չալտնի ի յ պէպի անչալտը գնալով և վերջացնում են նրանով որ չալտնին (մալրենի լեզուն) մոռանում են, մոռացածը կրկին սովորելու համար, չալտնի զգուշութիւն և մի քիչ էլ բնաղղուն ունենալով, առաջին ժամանակները կարող են օգտվել այդ բառարանից,

¹⁾ Որինակներ պ. Նաղուբեանի բառարանից. աշխարհաբար (առանց հ), համառատ, պիտի արժէր, կօպէկ, բախկացած (աղղպէս կարելի է գրել բախկալ, բախկալ լի աճալ բաց ոչ՝ բաղկանալ), կատարելութեան մօտիկ անգամ խօսք չէ կարող լինել, որ և է լրիւ թէգուղ ամենաթեթեւ բառարան կազմել, մաթեմատիկայի և այլն:

համբերութիւն ունենալով ի հարկէ՝ ոչ սակաւ անգամ ուրիշ բառարանների ղիմելու ²⁾։ Բացի դորանից պ. Նաղուբեանի բառարանը տալիս է բառերի պատրաստի ալբուբենական ցանկ, որի մէջ պակասները լրացնելով և աւելորդները դուրս գցելով, նույնպէս և բերած բառերի դործածական նշանակութիւնների կիսատը լրացնելով և սխալը ուղղելով՝ կարելի է կազմել մի աւելի կատարեալ բառարան։ Բայց քանի որ պ. Նաղուբեանի բառարանը այն է ինչ որ նա կալ ալժմ իւր «բաղմաթիւ պակասուոր կողմնում», իւր՝ այս ըստէիս վիշաժ և օթը մեղքերով, նա չէ կարող լուրջ գործ համարել և սպասած օգուտը տալ։ Մինչև հիմա թվալի կերպով պակասում էր մեզ մի հայերէն-ռուսերէն բառարան. լոյս տեսաւ պ. Նաղուբեանի բառարանը, բայց այդ պակասը չը լրացրեց. բանաստեղծի ³⁾ ասած՝

Три граціи считались въ древнемъ мірѣ;

Родились вы... все три, а не четыре.

Մոսկվա, լուսնի. 1, 1892 թ.:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՅ

²⁾ Պր. Նաղուբեանի հէնց բառաջարանը կարդալու համար, մի քանի անգամ՝ իւր բառարանը թողած, պիտի ղիմենք ուրիշ բառարանների և ընթերցանութիւններին։

³⁾ Լերմոնտով։

ԳԱՖՏԱՆ ՊԱԻՂՈՍ, ի Մխիթարեան ուխտէն:— «Նոր տարրաբանութիւն ի պէտս ազգային վարժարանաց» Երկու հատոր՝ անգործարանաւոր և գործարանաւոր (259+156 երես) Վենետիկ, 1891 թ., գինն է? ¹⁾:

«Հասկէ է արդէն ժամանակը, երբ «Ֆիզիկալի և քիմիալի գիտութիւնը «աշնպիսի մի կտակ է դառել լուսա- «ւորութեան, որպիսին էր 200 տարի «առաջ կլասիկների գիտութիւնը: «Այն ազգերը, որոնք այն ժամա- «նակները կլասիկների ուսումնասի- «րութեան մէջ չառաջադիմութիւն «տեսնեցան, չառաջացան իրանց ժա- «մանակակիցներից, աջնպէս և մեր «ժամանակակիցներից կը չառաջա- «նան նրանք, որոնք կը չառաջադի- «մեն բնագիտութեան մէջ, որովհետեւ «սա է մեր ժամանակի ուժը և նշանը»:-- «Մենք ելեալ:

Ուրախալի է, որ մենք էլ ռուս գիտնականի ասածի համեմատ ջանք ենք անում չետ չը մնալ ուրիշ ազ- գերից, սովորել և տարածել մեր ազգի մէջ այն գիտութիւնները, որոնք ժամանակիս չառաջադիմու- թեան ուժը և նշաններն են: Այս տեսակէտից քիմիալի ձեռնարկներ հարկաւոր են մեզանում ոչ միայն այն հարցասէր կիսախնտելի գեներ ե- րիտասարդներին և պատանիներին, որոնք կը ցանկանան լրացնել իրանց կրթութիւնը, այլ նոյն իսկ մեր միջ- նակարգ դպրոցներում, ուր, ²⁾ եթէ ալսօր ինչ-ինչ պատճառներով ³⁾ չէ դասաւանդուում քիմիան, վաղը միւս

օրը պէտք է ստիպած լինենք մտցնել, եթէ չ'ուզենանք բաւակա- նանալ տիրացուական կրթութիւն ստացած քահանաներով և ուսուցիչ- ներով: Այս պատճառով չենք կարող մեր շնորհակալութիւնը չը չալտնել Հ. Պաւլոսին, որ փորձ է արել իւր կարողութեան չափ ալդ պակասը լրացնելուն նպաստել և որ մեր կարծիքով բաւարար կարելի է հա- մարեւ ձիւտ է, ալդ գործը զերծ չէ մի քանի արտաքին՝ ձեական պա- կասութիւններից, որոնց մասին մենք մի քանի խօսք կ'ստենք ներքեւը, բալց աչնու ամենայնիւ նա հասկացող ու- սուցչի ձեռքի տակ կարող է օգտա- կար լինել իբրեւ առաջին ձեռնարկ: Հ. Պաւլոսը կարողացել է գտնել այն չափը, որ առարկայի հետ նոր ծանօթացողին չէ ձանձրացնում ֆակ- տերի բազմութեամբ (և չաճախ ան- կապութեամբ) և ոչ էլ հակառակ ծալրահեղութեան մէջն է ընկել, որ չէ տալիս նրան կարեւոր պաշար, թէօրիալի հիմունքները ընդունելու համար: Նա բերել և բացատրել է իւր ձեռնարկում միայն կարեւոր և չաճախ պատահող երևոյթները: Նիւ- թի դասաւորութիւնը նոյնպէս, ընդ- հանրապէս առած, չաջող է (չնչին բացառութիւններով): Ի դէպս մի

¹⁾ Կողմնակի կերպով իմացանք, որ 2 հատորը 3 ֆրանկ արժէ, ճանապարհ- չաճախքը (1 ֆր.) բերել ուղղի հաշւին: Պէտք է խոստովանել որ էժան է:

հարց Հ. Պաւլոսին. ինչո՞ւ նա տար-
րերի ուսումնասիրութիւնը դասաւո-
րելով Մենդելէեւի բնական դասերի
համեմատ, մի խօսք էլ չէ ասում ո՛չ
Մենդելէեւի և ո՛չ նորա հոչակաւոր
պարբերականութեան թէօրիալի մա-
սին: Մենդելէեւի թէօրիան, բացի
զուտ գիտնական արժէքից, մանկա-
վարժական նշանակութիւն էլ ունի,
որովհետեւ օգնում է սովորողին հեշ-
տութեամբ հասկանալ և մտքումը
պահել տարրերի շատ չատկութիւն-
ները, որ առանց ալդ թէօրիալի
անկապ են մնում և զժառուրեամբ
մտքում պահելի:

Մենք վերև ասացինք, որ նիւթի
դասաւորութիւնը ընդհանրապէս չա-
ջող է, բաց պատահում են և, ըստ
մեզ, անչաջող տեղեր. օր. իզուր է
աշխատել հեղինակը հէնց առաջին
գլխում առանց օրինակների և բա-
ցատրութիւնների իրար չտեղից շա-
րել մի շարք չոր ու ցամաք որոշում-
ներ (определение) ինչպէս պարզ և
բաղադրեալ մարմինների, տարրա-
բանական և բնաբանական (քիմիա-
կան և ֆիզիկական) երևոյթների,
բաղակցութեան և խառնուրդի և ալն
և ալն... Ալդ որոշումները առանց
օրինակների, ոչինչ չը բացատրելով
սովորողին, կարող են իրանց սքո-
լաստիականութեամբ միայն ձանձ-
րութիւն պատճառել նորան և նա-
խապաշարել քիմիալի դէմ—իբր մի
անհետաքրքիր գիտութեան դէմ:

Հ. Պաւլոսի աշխատութեան ա-
մենամեծ պակասութիւնը, մեր կար-
ծիքով, նորա ամեն ինչի հալկական
ձև տալու չափազանց յանկուրթինն
է. օրինակներ հարկւրներով կարելի

է բերել, բաց մենք բաւականանում
ենք մի քանիսով միաջն, որոնք բա-
ւական են մեր միտքը պարզելու հա-
մար. Molybdène խօսքը չը պահելու
համար, նա սորա փոխարէն գործ է
ածում արձիճ, Plomb'ի համար մի-
այն կապարը չատկացնելով: Ի՞նչպէս
է կարող արձիճը Molybdène նշա-
նակել, քանի որ մինչև այժմ թէ
ժողովրդական լեզուում և թէ գրա-
կանութեան մէջ նա մի որոշ նշա-
նակութիւն է ունեցել=Plomb'ի:
Հալկադեան բառարանը, որի հեղի-
նակութիւնը ալս հարցում անվիճելի
կարող է համարւել, ուղղակի տալիս
է՝ արձիճ տես կապար: Barium—
թարգմանած է կշռուն, Jode—մա-
նիշ, Bromme—ժահին, chloroforme—
քլորակերպ, և էլ հարիւ-
րաւոր դորանց նման բառեր:
Գուցէ ալդ խօսքերից մի քա-
նիսը մինչև անգամ ալնքան չա-
ջող լինեն կազմած, որ ապա-
գալում հաչ գիտնական գրականու-
թեան մէջ քաղաքացիութեան իրա-
ւունք ստանան, բաց պարզ է, որ
գրանց մեծ մասը (Мокроступъ)—ական
ուղղութեան ծնունդ են և «Мокро-
ступ»-ի վիճակն են ունենալու: Ալդ
տեսակ բառեր ամենաշատը՝ կարելի
էր փակագծում դնել եւրոպականի
կողքին—և ոչ աւելի:

«Տարրաբանութեան» հեղինակը
ալսքանով չը բաւականանալով աւելի
հեռու է գնացել. նա իբրև քիմիա-
կան նշանացոյցեր ընդունել է տար-
րերի նոր թխած անունների առա-
ջին տառերը. օրինակ անագ=Ան
«ժ» տառը ընդունել է Բումբի նշա-
նացոյց (ըստ նորա ժահին), «կշ»

Բարիւումի նշանացոյցն է (ըստ նորա կշռուն) և ալսպէս մնացածները: Ինքն ըստ ինքեան հասկանալի է ալիքան եւրոպայականութեան անտեղիութիւնը և անշարմարութիւնը: Եթէ վաղը մի ալ հեղինակ «բարիւումը» ոչ «կշռուն» թարգմանի՝ ալ, ասէնք, «ծանրութիւն», — բռն՝ ոչ ժահլն — ալ «գարշահոտ» և ալն և ալն, և կամ եթէ մի ուրիշը գուրս գալ, որ օրինական ցանկութիւն ունենալ ալի տեսակ խօսքերի համար եւրոպական անունները պահել և ոչ սորա ու նորա ըստ քմաց թխած բառերը — ալն ժամանակ մինք ամեն մի տարրի համար լազմաթիւ նշանացոյցներ կ'ունենանք, որ ինարկէ, ցանկալի բան չէ: Բոլոր վաքի շատէ լուսաւոր ազգերը մի անդամ ընդ միշտ ընդունել են իրեն տարրերի նշանացոյցեր նրանց լատիներէն անունների լատինական սկսբնատաւերը, որ մեծ լարմարութիւն են ներկայացնում. 1) նրանց անվտուխելութեան պատճառով և 2) ալն պատճառով, որ եթէ դուք մի քանի եւրոպական լեզուներ ալնքան զիտէք, որ ալ լեզուներով կարգադրածներդ հասկանում էք, հնչողութեամբ կարող էք ալ լեզուներով գրած քիմիական գրածքներ կարգալ, ուր ամենարարդ նշանացոյցերն ձեզ չեն զգարացնիլ, որովհետ նրանք նուցն են բոլոր լեզուներում, ուրեմն և ձեզ ծանօթ:

Մեզ թւում է, թէ ալ տեսակետից ուսաների ցոյց տաւ ճանապարհով մինք պէտք է ընթանանք: Վերջիններս մի տառնակ համալսարաններ ունեն, բաղմաթիւ բարձ-

րագոյն մասնադիտական դպրոցներ, հարկերներով միջնակարգ դպրոցներ, ուր քիմիա է դասախօսւում, վերջապէս նրանք Մենդելէեւի և Բուտլերովի նման հռչակաւոր քիմիկոսներ ունեն, և ալնու ամենագնիւ գործ են ածում լատինական նշանացոյցեր և ոչ սլաւոնական կամ ռուսական: Գիւար չէ երեակալել որքան կը զրգարանար օտար լեզուներով քիմիական գրածքներ կարգալ, եթէ բոլոր ազգերի քիմիկոսներն էլ հետեւէին Հ. Պաւլովի օրինակին, նամանաւնդ որ, ինչպէս վերը տեսանք, ամեն մի հեղինակ իւր սեպհական նշանացոյցերը կ'ունենար, ալսպէս կամ ալնպէս թարգմանելով ալ կամ ալն տարրի անունը: Եւ ինչ կարիք վերջապէս չինական պատիւներով չըմանաւորել եւրոպական ազգեցութիւնից գերծ միալու համար, ալն էլ դուա գիտութեան տալարիւում: Մենք միալն զարմանում ենք, որ Հ. Պաւլովը, ալիքան օտարալիս լինելով, գործ է ածում սորա բալան թանշաններ. թող «ամեն ալն ինչ կատարեալ» անելու համար, թեւեմ էլ հալկական տաւերով նշանակէր, ալն ժամանակ մի ալսպիտի չինական ճաշակի աղիւսակ կը ստանալինք, — կշռուն = կշ = ձէ (ալսինքն Բարիւում = Ba = 137) և ալսպէս երեակալեցէք մնացածները...

Վերջացնելով մեր ասելիքը, չենք կարող լուծեան տալ Հ. Պաւլովի ընդունած տարօրինակ տառադարձութիւնը. նա օտար խօսքերը հալեին գրելիս ալ ինչ կամ ալն ինչ տառի գործածութիւնը քէֆի բան է

համարում, երբեմն մեր արեւելեան տառադարձութիւնը ընդունելով և երբեմն արեւմտեան: Օրինակներ գրքի ամեն երեսում կարելի է գտնել. չաւաջ բերենք մի քանիսը. եւրոպական grame բառը նա մեզպէս գրում է «Գրամ», իսկ carat՝ գրում է գրադ: Անհասկանալի հակասութիւն. ըստ նորա դուրս է դալիս որ $g=q$ և $c=q$ ուրեմն $g=c$ (!): Նա գրում է Գալ (Gallium), Բիսմութ (Bismuth), Դիդիմ (Didyme), — բաց Կազ (gaz), Լըպլան (Leblanc), Տիւլոն և Բիթի (Dulong et Petit), Վենետիկ (Venedig):

Դիւրքը տպւած է գեղեցիկ տառերով և զարդարած սիրուն նկարներով, բաց զերծ չէ խոշոր սխալներից, որոնք վաղել չեն մի ձեռնարկի, օրինակ՝ առաջին մասում երես 41 ներքեից 5-երորդը տողում կարդում ենք. «և սառուցը 4° ջրէ սա սն (!)» անգամ աւելի տարածոց կը գրուէ):

Բազմաթիւ են և զուտ տպագրական սխալները, որ նույնպէս անտեղի են ձեռնարկում. եր. 50 վ. 11 տ. տպւած է. «1 տարածոցք ջրածնի և 3 տարածոցք բորականի՝ կուտան և ալն» 1 և 3 թւերի տեղը հարկաւոր է փոխել: Երես 58 Ն. 6 տողում կոտորակի համարիչի և չափաբարի տեղերն էլ փոխելու է: Մի ալ տեղ (եր. 95, 6-դ տ. ներքեից) «Թթւածնի» խօսքի տեղ «ջրածնի» է տպւած և ալն: Խնչպէս տեսնում էք, իբրեւ ձեռնարկ, շատ անխնամ է սրբագրւած և ալնու ամենալեւիւ հեղինակը աւելորդ է համարել կցել իւր գրքին վրիպակների ցանկը: Թող ների մեզ Հ. Պապուսը, որ համարձակւում ենք խորհուրդ տալ նորան գոնէ այժմ, քանի որ դեռ ուշ չէ, կազմել և կցել իւր «Տարբաբանութեան» մեր վերեւ չիշած ցանկը:

Մ. Տ.-Ա.

Նոր ստացւած գրքեր

1) «ԵՂԻՇԷԻ պատմութիւն վարդանանց ըստ Արձեացեաց օրինակի»: Ծանօթութիւններով և հաւուսերէն բառագրքով ի լոյս ընծայեց ուսուց. լազարեան ձեմարանի Արեւելեան լեզուաց Խ. Յովհաննիսեանց, Մոսկւա, տպար. Մկրտիչ Բարխուդարեանցի, 1892 թ., գինն է 1 ռ. 50 կոպէկ:

2) ՄԱԼՈՒՄԵԱՆ, Խ.—«ԽՐԻՄԵԱՆ»: Կենսագրական տեսութիւն (պատկերով): Թիֆլիս, Կովկասեան կառավարչապետի տպարան, 1892 թ. գինն է 40 կոպէկ:

ՇՁԵՐԴԻՆ.— 1) «Իդէալիստ ծածան»

2) «Իմաստուն ծանծաղուր»

3) «Խիղճը կորաւ»:

{ Թարգ. Մ. Ղազարեանց:
Հրատ. հայոց Հր. Բնիկ.
Թիֆ. տպ. Ռոտ. գ. 15 կ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Թեմական պատգամաւորի ընտրութիւն Թիֆլիսում:

Մարտի 8-ի պատգամաւորական ժողովը Թիֆլիսում, հետեւապէս և այդ ժողովում կատարւած ընտրութիւնները Ս. Էջմիածնի Սինոդի կողմից ճանաչւեցին անվաւեր: Այն բոլորից յետոյ ինչ գրել ենք այս իսկ տեղում «Մուրճ»-ի անցեալ երկու համարներում, մեր ընթերցողներին միանգամայն հասկանալի կը լինի թէ ինչու ջերմ կերպով մենք պէտք է շնորհաւորենք Ս. Էջմիածնի Սինոդը իւր արած որոշման համար: Սինոդը այժմ ցոյց տւեց որ նա իրօք իւր կոչման բարձրութեան վերայ է. օրինաւորութիւնը վերականգնել, զորանով վերականգնել թեմական առաջնորդի կողմից ոսնակոխ արած մի քանի համայնքների իրաւունքները, — ահա ինչ արաւ սինոդը: Սինոդի կայացրած վճիռը և, իբր հետեւանք, ապրիլի 22-ին կատարւած Թիֆլիսի թեմական պատգամաւորի վերընտրութիւնը ապագայի համար նշանաւոր պրեցեդենտ է ծառայելու: Մեծ է և շատ մեծ այդ իրողութեան բարոյական նշանակութիւնը, այնքան մեծ, որ միանգամայն հասկանալի է այն ուշադրութիւնը, որով հասարակութիւնը վերաբերեց չէսլի Էջմիածնից եկող լուրերը: Ապրիլի 22-ի նիստը ոչ մի հետաքրքրութիւն չը ներկայացրեց վիճաբանութիւնների կողմից. այդտեղ չեղան այնպիսի վիճաբանութիւններ, որ արժեքնար առանձին արձանագրած ներկա-

յացնել «Մուրճ»-ի ընթերցողներին: Սինոդի անդամ Գրիգորիս եպ. Աղւանեանց ժամ 10¹/₂ մտաւ Վանքի մայր-եկեղեցու գաւիթը և ապա իսկոյն մտաւ եկեղեցու ներսը, որտեղ պիտի կայանար ժողովը: Նիստին, դեռ քւէարկութիւնները չը սկսած, արդէն ներկայ էին բոլոր 103 պատգամաւորները թէ իրանք անձամբ և թէ հաւատարմատարներ ի միջոցով: Մամուլի ներկայացուցիչներին յատկացրած էր առանձին սեղան (որ չը կար մարտի 8-ի նիստում): Ընտրւեցին երկու քարտուղարներ (որ աւելորդ բան էր համարւած մարտի 8-ի նիստում, ուր և ոչ մի քարտուղար չէր ընտրւած): Ապրիլի 22-ը հանդուցեալ Մակար Կաթողիկոսի թաղման տարելիցը լինելով՝ նախագահը, նիստը բացելուց առաջ, հոգեհանգիստ կատարեց ի Տէր հանդուցեալ կաթողիկոսի համար. ներկայ եղողների ձայները ստուգելուց և մի վիճելի խնդիր ¹⁾, վճռելուց յետոյ, սրբազան նախագահը բացեց նիստը, ներկայացնելով Սինոդի այն վճռի պատճէնը, որով բեկուում է մարտի 8-ի ընտրութիւնը: Նախագահի յատուկ առաջարկութեամբ և ժողովի գրեթէ միաձայն համաձայնութեամբ՝ այդ երկար գրութիւնից կարդացւեց միմիայն բուն վճիռը (այսպէս անւանւած՝ «Հրամայեցին» յօդւածը): Դորա մէջ ի միջի այլոց ասւած է թէ Սինոդը գտաւ թեմ. առաջ-

¹⁾ Ախալցխայի մի պատգամաւոր իւր ձայնը նոտարիական կերպով հաւատացել էր մի պարոնի, որին կ'անւանենք Ալբ. իսկ այս վերջինը, ինքն էլ բացակայ լինելով Թիֆլիսից, նոյնպէս նոտարիական թղթով հաւատացել էր մի երրորդ անձի, որ կ'անւանենք Բեն. և Ալբ.ը այդ արեւ էր այն հիման վերաջ որ իւր ունեցած հաւատարմութիւնը նրան իրաւունք էր տալիս մի երրորդին իւր ձայնը հաւատալու: Նիստի ժամանակ, սակայն, մի չորրորդ անձ՝ որին կ'անւանենք Գիմ, Ախալցխայի այն պատգամաւորից ստորագրութիւնը վաւերացրած հեռագիր էր ստացել, որով նա, Ախալցխայի այն պատգամաւորը, իւր ձայնը հաւատում է այդ պ. Գիմին, «եթէ, ասւած էր հեռագրած պ. Ալբ.ը բացակայ լինի»: Արդ, Ալբ.ը իրօք բացակայ էր, բայց ներկայ էր Բենը, որը իրաւունք ունէր Ալբին, ուրեմն և իսկական պատգամաւորին ներկայացնելու: Վճռւեց Բենին ճանաչել պատգամաւորի ներկայացուցիչ և ոչ Գիմին: Եւ այդ էր օրինաւորը, մանաւանդ որ իսկական պատգամաւորը երեւի միայն այն պատճառով էր հեռագրով հաւատացել իւր ձայնը Գիմին, որ տեղեկութիւն չունէր Բ-ի մասին: Թէ չէ նա իւր հեռագրում վշատակութիւն կ'անէր վերջինիս մասին:

Նորդ սրբազան Մամբրէ եպիսկոպոսին մարտի 8-ի ընտրութեան գործում ոչ իւր կոչման բարձրութեան վերայ կանգնած և որ սինոդը այդ պատճառով սրբ. Աղանեանցին է յանձնում նախագահել ապրիլի 22-ին կատարուելիք ընտրութիւններին: Սինոդը օրինաւոր էր գտել Թիֆլիսի Եջմիածնեցւոց ս. Գէորգ և Լուսաւորիչ եկեղեցիներին և Կումիսի գործակալութեան ծխական առաջին ընտրութիւնները (փետրւարի 2-ին կատարած): Մեր ընթերցողներին արդէն յայտնի է որ հէնց այդ երեք համայնքների ներկայացուցիչների մասին էր միակ վէճը մարտի 8-ի պատգամաւորական ընտրութիւնների (յետոյ բեկւած) ժողովում և որ այդ առաջին անգամ փետրւարի 2-ին ընտրւածներին թեմական առաջնորդից չընդունելու պատճառով էր որ մարտի 8-ի ժողովականների մի մասը չը մասնակցեց ընտրութիւններին և դորա դէմ բողոքեց ս. Եջմիածնի Սինոդին: Եւ այդ բողոքն է որ յարգւեց բարձր հոգեւոր իշխանութեան կողմից:

Ապրիլի 22-ին ժողովի մէջ յարուցւած խնդիրներից միակ պրինցիպիական նշանակութիւն ունեցողը և յիշատակելու արժանին է այն՝ թէ ընտրւած ում համարել՝ կէսից աւելի ձայն ստացածները (բացարձակ մեծամասնութիւն) թէ համեմատական մեծամասնութիւն ստացածները: Պարոն Գ. Եւանգուլեանցը մատնանիշ արաւ նախկին փոխարքայի 1865 թւականին տւած հրահանգի վերայ, որի մէջ ասւած է թէ ընտրւածներ համարոււմ են ամենից շատ ձայն ստացածները (հետեւապէս չի պահանջոււմ որ անպայման կերպով պատգամաւորը և նորա անձնափոխանորդը կէսից աւելի ձայն ստանան):

Այդ միակ խնդիրն էր որ պարզեց ժողովում: Բայց ես վերադառնում եմ իմ անցեալ անգամ պնդածին, օրինականով մարդիկ բաւականանում են միայն այն ժամանակ, երբ աւելի լաւի համար ուրիշ ելք չկայ: Օրէնքը ամենեւին չի արգելում որ ժողովում համաձայնութիւն կայացնեն ընտրւած համարել միմիայն կէսից աւելի ձայն ստացածներին, եթէ միայն կէսից պակաս բայց ամենից շատ ձայն ստացածները իրանք և քւէարկութիւնից առաջ կամովին հրաժարեն օրէնքից տրւած արտօնութիւնից: Եւ ընտրողական էտիկան, տեսւմ եմ ես, այդ է պահանջում, այդ էտիկան պահանջում է որ ընտրւածները մեծամասնութեան ձայները ներկայացնեն. դորա համար, երբ օրէնքը հակա-

ուսին էլ է թոյլ տալիս, պէտք է որ ժողովներում միաձայնութիւն տիրէ այդ նկատմամբ: Եւ ես կարծում եմ որ, եթէ էտիկական գաղափարները աւելի խոր արմատներ գցած լինեն մեր հասարակութեան մէջ, այդ պահանջը այնքան տարրական կը թւայ, որ ամօթանք կը համարւի դորա դէմ խօսելը: Եւ որպէս զի այդ կէտի մասին ասելիքս ամբողջացրած լինեմ, հարկ եմ համարում աւելացնել, որ մեծամասնութեամբ ընտրւելու պահանջը միտք ունի մանաւանդ առանձին կարեօրութիւն ունեցող ընտրութիւնների ժամանակ, որպիսին է օրինակ՝ թեմական պատգամաւորի կամ նոյն իսկ նորա փոխանորդի ընտրութիւնը: Միմիայն առաջին անաջող փորձը կարող է բարոյական տեսակետից իրաւունք տալ որ երկրորդ քւէարկութեան ժամանակ բաւականանան համեմատական մեծամասնութեամբ: Սրբ. Նախագահը հէնց այդպէս էլ ուզում էր ընտրութիւնը կատարել. եթէ ժողովը միաձայն ընդունէր այդ առաջարկը — հրահանգի ոգու դէմ ոչինչ չէր լինել գործած:

Ապրիլի 22-ին ժողովականների ցանկութեամբ քւէարկւեցին միմիայն երկու հոգի՝ պպ. Աբգար Յովհաննիսեան և Գրիգոր Արծրունի, որոնցից վերջինս 103 ներկայ և քւէարկող ձայներից ստացաւ 58 ապիտակ և 44 սև, իսկ առաջինը ստացաւ 51 ապիտակ և 51 սև (իրանք իրանց համար ձեռնպահ): Այսպիսով պ. Գ. Արծրունին ստացաւ կէսից աւելի, իսկ պ. Ա. Յովհաննիսեան ձայների ուղիղ կէսը:

Այսպիսով միևնոյն ժողովը գրեթէ ձայների հաւասարութեամբ մէկին ընտրեց պատգամաւոր, իսկ միւսին, որը նորա հակառակորդն է ճանաչւած, ընտրեց նորա փոխանորդ. որ նշանակում է թէ Թիֆլիսի թեմը իւր ձայնը Խրիմեանին և Արիստակէս Սեդրակեանին կը տայ, եթէ պատգամաւորը ընտրութեան օրը առողջ լինի, և նոյն թեմը իւր ձայնը կը տայ յօգուտ ուրիշ կաթողիկոսացուների, ի միջի այլոց նաև Աշըղեանին, եթէ ընտրութեան օրը դիպուածով Արծրունին հիւանդ լինի և չը կարողանայ տանից դուրս գալ...

Այդ է բարոյականը ապրիլի 22-ի ընտրութիւնների: Ինչով է մեկնւում այդ անհեթեթութիւնը: Նորանով որ անձնական հակառակութիւնը գերազոյն իշխանութիւն էր ձեռք բերել ողիների վերայ. Արծրունականներին ինչ էլ որ լինի՝ հարկաւոր էր որ Արծրու-

նին և յատկապէս Արծրունին ամենից շատ ձայն ստանար. իսկ հակառակորդներին, ինչ գնով էլ որ լինի՝ հարկաւոր էր որ ով լինում է լինի՝ բայց Արծրունին չը լինի ամենից շատ ձայն ստացողը: Եւ ահա, որպէս զի հակառակորդները առիթ չունենան իրանց սրտի իղձը ի կատար ածելու, որպէս զի (Արծրունուն անձնական վիրաւորանք հասցնելու համար) հակառակորդները չը միանան արծրունականների հետ և սպիտակ քարեր չը տան մի ուրիշին, թէկուզ դա լինի ջերմ արծրունական մէկը, արծրունականները վճռում են փոխանորդի համար ամենաին կանգիդատ չ'առաջարկել: Եւ ահա այժմ, այդ զուտ անձնական հաճոյքի համար, արծրունականները համաձայնեցին որ Վրաստանի և Իմերեթիայի ահագին նշանակութիւն ունեցող թեմի ձայնը կաթողիկոսական խնդրում կախած լինի մի անձի առողջական դրութիւնից: Եթէ մինչև անգամ ենթադրենք որ հակառակորդների ֆորաէլներով արծրունական կուսակցութեան երկրորդ կանգիդատը կարող էր Արծրունուց աւելի ձայներ ստանալ, նա կարող էր վերջում հրաժարւել յօգուտ Արծրունու, եթէ միայն կուսակցութիւնը այդ հարկաւոր է գատում: Համաձայնեցէք որ զործը (որ ամենագլխաւորն է) դորանից ոչ մի կորուստ չէր ունենալ:

ԼՈՒՍԻՆԻ

ԱՐՏԱՍԱՋՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Պարիզի գրաքննութիւնը լատորոնական գրաւածքների: Անիշխանականները և Ռաւաշորը: Պիեռ Լոտի՝ ակադեմիկոս: Իտալական համալսարանականները: Սմիչիսի ճառը: Իտալական նոր գրքեր: Մոնտեզագցայի ցուցահանդէսը: Գերմանական դպրոցական նոր օրինազօնի հետեւանքները: Բողոքական մի նոր տաճար Բերլինում: Ռնկերվարական հասարակութիւնը գալ XX դարում ըստ Իօթեն Ռիլսերի: Լոնդոնի խորհրդաւանի նոր անդամները: Լոնդոնի ընական մառախուղը և արւեստականը: Ածխահան բանի որների գործադույնները: Մ. Չերադ՝ 13 ապրիլի Folklore՝ի ժողովին: Մ. Չերադի դասախօսութիւնը 1891 թ. մայիսի 6-ին: Սուաջին պրիւատ դոցենտ տիկին Կեմպլին:

Ֆրանսիական պատգամաւորների ժողովը նորերս մերժեց աչն օրինադիծը որ առաջարկում էր 3 տարով վերացնել թատրոնական գրաւածքների ցենզուրան որը՝ ի դէպ ասած Պարիզում Անաստագիէ ¹⁾ կնոջ անունով է կոչւում: Յատկապէս այս խնդիրը ուսումնասիրելու համար կազմած լանձնաժողովի ղեկուցումից — ի թիւս այլ հետաքրքիր տեղեկութիւններ — երկաց որ Ֆրանսիայում թատրոնական ցենզուրան ծնունդ է է առել 789 թ. Կարլոս Մեծի (Charlemagne) օրով և որ աշնուհետե «տիկին» ցենզուրան առաջ դնալով — խտացել է մինչև ծալարկողութեան և ծիծաղաշարժ չափազանցութեան: Նոյն ղեկուցման մէջ առաջ է բերւած Մեկակի ²⁾ «Կեղեցիկ Հեղինէի հեղինակի» կարծիքը — մի հեղինակի, որին չի կարելի մեղադրել ամօթխածութեան (prudeur) չափազանցութեան մէջ: «Թատրոնական գրաքննութիւնը պէտք է անպատճառ պահպանել, ասում է Մեկակը: Հասարակութիւնը, ամբողջ սիրում է զարճախօսութիւններ (gauloiseries) և երկտասարդ հեղինակները՝ ճանաչելով այս թուլ երակը — դալթակղւած կը լինին օգուել այս հանդամանքից և մէջ բերել իրանց գրաւածքներում թէ կասկածելի խօսքեր և թէ գրութիւններ՝ եթէ չը զգան գրաքննութեան սանձը»:

Անիշխանականների ձեռքով Պարիզում գործող պալթոմները միանգամայն գրաւել են բոլոր աշխարհի ուշադրութիւնը: Պարիզի բնակիչները

¹⁾ Madame Anastasie.

²⁾ Meilhac.

և հաղարարութիւնը սարսափահար են եղել. այս վերջինները շտապում են թողնել Ֆրանսիայի անհիւրնկալ և ահաւոր դարձած մայրաքաղաքը: Անիշխանականների այս սարսափ գրող միջոցների առաջն առնելու համար հանրապետական կառավարութիւնը մտածում է չանցաւորներին մահաւն պատժի ենթարկել: Մարտ 15/27 Ալիշի փողոցի պալթոմի հեղինակը արդէն ղատաստանի ձեռքին է: Նրա անունն է Ռաւաշու: Այս իսկ րոպէին հեռագիրները չափում են թէ Ռաւաշուը խոտտովանւել է թէ ինքն է պալթոմներ գործել թէ Ան-ժերմեն բուլւարում և թէ Վիշեալ Ալիշի փողոցում: Նրան ենթարկել են մշտնջենաւոր աքսորի:

«Տան» լրագիրը հաղորդում է, որ Պարիզի բոլոր 20 թաղերում (բացի IX-ից) անիշխանականների մի-մի կամ երկու-երկու խմբակներ կան 50—60 մարդուց բաղկացած: Բացի այդ կան նաև երկու միջադպին խմբեր ամեն մէկը 200—300 հոգուց: Պարիզում բոլոր անիշխանականների թիւը ըստ ոմանց 3000 է, ըստ այլոց 10,000: Վերջին րոպէին չափունեց որ աչն հիւրանոցը, ուր ձեռքակալւել էր Ռաւաշուը, օդն է ցնդել: Անկասկած է, որ սա անիշխանականների վրէժն է:

Սարսափը աչն աստիճան ընդհանուր է, որ բոլոր կառավարութիւնները՝ խաղանիւղում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում հրամաններ են արձակել չափունի անիշխանականներին կալանաւորելու: Նոյն իսկ Անգլիան, որ մինչև այժմ անպաշտան ապաստանարան էր տալիս անիշխանականներին—մտատանջութեան և տատանմունքի մէջ է:

—Ֆրանսիական ակադեմիկոսները սակայն ակադեմիական սառնասրտութեամբ և անտարբերութեամբ դէպի քաղաքական այս վերջին անցքերը՝ ապրիլի 7-ին մի սօն ունեցաւ:

Այդ սօնը մի նոր անմահի՝ արդէն անմահ հռչակածների շրջանի մէջ ընդունւելն էր, և այդ նոր անմահը Պիեռ Լոտի'ն է:

Ակադեմիական ակադիսի սօնը կատարւում է միշտ շատ փառաւոր կերպով: Ըստ սովորութեան նորընծա ակադեմիկոսը մի գովասանական ճառ ասաց ի պատիւ իւր նախորդի, աչն է Օկտաւ Ֆեյլէ'ի ¹⁾:

Նորընծայի այս ճառը շատ հետաքրքրական է իբրև բնորոշ Լոտի'ի բնավորութեան: Պիեռ Լոտի'ն իւր այս ճառի մէջ գործածեց՝ ես բառը 175 անգամ և նոյն բառը հոլովեց 137 անգամ ²⁾: Ակադեմիկոս Մեզլիուը, որին վիճակւած էր պատասխանել Լոտի'ի ճառին—պարզ կերպով ասաց թէ՛ իւր վրա եղած պարտաւորութիւնների մի մասը ինքը ճառախօսը չանձն

¹⁾ Octave Feuillet. տես «Մուրճ» № 2. 1891 թ.:

²⁾ Ուղիղ հաշիւը սա է՝ je (ես)— 175 անգամ moi (նոյնպէս՝ ես) mon, mes (իմ՝ հոգակի և հոգնակի)—137:

առաւ ինքն իւր մասին խօսելով: Լրագիրները շտապեցին արձանագրել թէ «Լոտի'ն գովասանական մի ճառ արտասանեց ի պատիւ Լոտի'ի»:

Խօսելով Սկոտա Ֆեօլէի մասին—Լոտին ասաց որ ինքը գրեթէ երբէք չի կարգում գրքեր, որովհետեւ գրքում լսւած որ և է միտքը նրան զգուշ է: Նա արհամարհանք արտայայտեց դէպի եղած գրականական բոլոր ուղղութիւնները, չիտաները և մասնաւորապէս դէպի Զոլաինը: Նա իրան կուսակից անւանեց Ֆեօլէի «վղէական ուղղութեանը» մի հեղինակի, որի գրածքներին Լոտին գուշակեց մշտական լաջողութիւն:

Լոտիի իտական անունն է Ժիւլէն Վիօ: Նա ալմ 42 տարեկան է: 1867 թւից գրել է Նաւատի և մինչև 1890 թիւը ծովալին ճանապարհորդութիւններ է արել՝ Հիւսիսային և Ատլանտեան ծովերում, եղել է Սենեգալում, Պոլսում, Տոնկինում, Նագոնիպում:

Իւր առաջին սիրահարութիւնը Տախտի կղզիներից մինի վրա մի թուխ դեղներեւ դեղեցիուհու հետ—Նա նկարագրել է մի ումանում, որի հերոսին և անւանել էր Լոտի: Ահուհետեւ Վիօ'ն պահպանել է իւր ալը ծածկանունը: Իբրեւ ծովադէպ և վիպասան Նա լաջողութիւն ունի Պարիզի բարձր շրջաններում, բաց գրականագէտների և ծովադէպների համակրութիւնները նրա կողմը չեն: Նրա բնաւորութեան բնորոշ լատիւթիւնն է՝ իրան ցոյց տալը և մտախառնութիւնը, որը անսահման է:

Նրա միւս նշանաւոր գրածներն են Սպագի ումանը, Խալանդիալի ձկնորսները (Pêcheur d'Islande) և Նոպէլ Ռեվիւլ ամսագրում տպող Fantôme D'Orient:

Ի դէպ՝ Պիեռ Լոտին տեղ է դրել Արշակ Զորանեանի վերջերս լոյս բնծալած «Արշալույսի ձագեր» գրքի մէջ, մի հանգամանք որ բնորոշում է Նաե հաջ հեղինակին:

—Գրեթէ ամեն բարեկենդանին՝ ուրախ և զարճալի կարնաւալի օրերին—իտալական համալսարանների ուսանողները անկարգութիւններ են անում, անկարգութիւններ, որոնք ունին մի սատառ և որ մեղանից շատ շատերին անլաւտ է: Իտալական համալսարանների հնացած և վատ կազմակերպութեան մասին առաջին վեցամեակի սկզբում լուսաւորութեան մինիստր Վիլլարի'ն (Villari) ասել էր զիմնելով ուսանողներին իւր մի նամակով. «Շատ ցանկալի և շատ զգալի է դառել համալսարանական մի վերանորոգութիւն. ես չեմ ունեւ չուտով դրա վերաբերեալ մի օրինագիծ ներկայացնել պարլամենտին»: Աւ լիրաւի՝ իտալական շատ համալսարաններում բնդունակ և պաշտած պրոֆեսորների կողքին կան շատ երիտասարդ և անխորձ տնախառներ: Միւս կողմից համալսարանի կանոնները շատ բծախնդիր են (tracassier). ուսանողը պարտաւոր է սովորել Նաե շատ անկարեւոր բաներ: Գիմնազիական նորուարող համալսարան մտնելով շտապում է ստանալ ազատութիւն, մեծ գին գնելով իւր քաղաքացիական արժանաւորութեան և իւր մարդկային իրաւանց չան-

կարծ ռախալած է լինում չաճախել բ ու լ ու ղ դ ա ս ե ռ ը և տարեկան քննութիւններին ենթարկելու համար—ստիպւած է ներկայացնել վկայաթուղթ լիշեալի մասին: Այսպիսի վարմունքից վրդովւում ապստամբւում է ուսանողի հպարտութիւնը և ապա ինքը ուսանողը: Ահա այս ուսանողներին դիմելով դը Ամիչիսը ¹⁾, մի ճառ ասաց ընկերվարութեան մասին: Մեր նոր վերմկրտւած մէկը նա խօսում է իւր բնաբանի վրա շատ ողորւած կերպով՝ ապագան պատկանեցնելով այս նոր վարդապետութեան:

—Խտալական նոր գրքերից ուշադրութեան արժանի են նոյն Ամիչիսի մի հատորը որ հայերէն կարելի է թարգմանել՝ Ուսումնարանից Տուն և Տանից—Ուսումնարան ²⁾ Այս հատորի մէջ հեղինակը իրան չառուկ չնորձքով նկարագրում է մեզանից ամեն մէկին լիշողութիւններով թանգ՝ անփոխարինելի և անվերադարձնելի մանկութեան օրերը՝ մանկական խաղերով, հանաքներով և զարճութիւններով, որոնք տեղի են ունեցել՝ թէ տանը թէ ուսումնարանում և թէ սրանց իրար հետ կապող ճանապարհի վրա: Նոյն հեղինակը ալժմ պատրաստում է մի այլ գիրք «Մալիսի մէկը» ³⁾ վերնագրով որ անհամբեր սպասւում է և որ անշուշտ մեծ աղմուկ կը հանի թէ Խտալիայում և թէ Խտալիայից դուրս: Ինքը հեղինակը զարմանք է չալտնել թէ այդ ինչպէս՝ ինքը մինչև հիմա ուրիշ բաների վրա է գրել: Մի ուրիշ՝ շատ պողարեր և հռչակւած Խտալացի գրող որ սակաւն գրեթէ անլստ է մնացել հաշ հասարակութեանը՝ Պաոլօ Մոնտեգազան մի գիրք է հրատարակել «Գեղեցիկ բաների բառարան» ⁴⁾ վերնագրով: Այս գիրքը հետաքրքիր է նրանով որ ամենաւն գլուխ ալբուբենական կարգով բառեր է պարունակում, որոնք հեղինակի կարծիքով գեղեցիկ են, —այնպէս որ ըստ հեղինակի կան գեղեցիկ և ոչ գեղեցիկ բառեր: Մէջ են բերւած միմիայն «գեղեցիկ բառերը» իսկ չը վիշաճները գեղեցիկները չեն: Գեղեցիկ բառերը դրւած են ալբուբենական կարգով, ազաթ, ախացիս և ալն: Ամենաւն մի պրակի վերջում կան կտորներ, ցիտատներ զանազան բանաստեղծներից:

Նոյն հեղինակը ամուսնացել է նորերս և մի գիրք է խոստացել թէ «Ինչպէս պէտք է կին առնել»:

Նորերս Ֆլորենցիայում մի հոգեբանական ցուցահանդէս է բացւել, ուր ամենաւն մի զգացմունքի բաժնի դէմ ի ցոյց էին դրւած համապա-

1) M. de Amicis-ը ծանօթ է հաշ ընթերցողին պ. Փ. Վարդանանի թարգմանութիւններով: Ամիչիսը «Սիրտը» լոյս է տեսել նորերս 136 տալարութեամբ:

2) Fra Scuola e Casa (Между школой и домом).

3) Բաներների տոն օրը:

4) Dizionario delle cose belle, da Paolo Montegazza. Milano, 1892.

տասխան իրեր: Այսպէս օրինակի համար—ոչնաղնութեան հանդէպ զրւած էին կանանց կրօնաւորները և այլ զրանց նման բաներ:

Եւ այս ցուցահանդէսի հեղինակը, գլուխ բերող—սարքողը էլի վիշեալ անխոնջ զիտնական Մոնտեզագցյան ¹⁾ է:

Գերմանական դպրոցական նոր օրինագիծ յօրինողները որոնք ուզում էին կռւել լողալով հոտանքի դէմ—կոմս Յեդլիցը (Zedlitz) և գեներալ Կապրիւլին—տւին իրանց հրաժարականները: Սակայն թագաւորը ընդունեց միայն առաջինին, իսկ գեներալը դեռ չարունակում է պահպանել Բիւմարկի տեղը: Այս վերցնելով առաջարկւած օրինագիծը և ալտպիսով պարտութիւն կրելով գերմանական պարլամենտում՝ գերմանական կալստը չաթթութիւն է տարել պրուսական լանդսադում, ուր նորերս ընդունեց տասը միլիօն մարկի կրեդիտը աչն բողոքական տաճարի համար որի կառուցանելու փափազը չափոնեւ էր հանգուցեալ Վիլհելմ I 1867 թ. իւր մի դեկրետով: Հանգուցեալ Ֆրիդրիխ Կալստը իւր կարճատև թագաւորութեան միջոցին նմանապէս չը չաջողեց զլուխ բերել իւր հօր ցանկութիւնը: Տաճարի կառուցանելը ալտպիսով իրագործում է Վիլհելմի թուռը: Հէնց որ չափոնի եղաւ կրեդիտի ընդունւելը, իսկոյն տեղացիին ընկերվարականների և հրէաների չարձակումները, խնչպէս, աղաղակում են սրանք, —աստը միլիօն մի եկեղեցու համար:

Այս երկու կուսակցութիւնները համերաշխ են երբ խօսքը անցեալի և ներկայի վերաբերեալ է, —բայց ոչ ապագայի: Այս երկու ցան ընդունւելութիւնից, որ արին հուշակաւոր առաջադիմական պատգամաւոր Էօփին Րիխտերի նոր լուս ընծալած երգիծաբանական մի գրածքին, որի վերնագիրն է «Ապագայի ընկերվարական պատկերներ» ²⁾:

Այս սատիրայի մէջ Րիխտերը իրագործւած է ներկայացնում XX-րդ դարում աչն սկզբունքները, որոնք ընդունւեցան Էրֆուրտի ժողովում և որոնք տենչանք կարող են համարւել Բերելի, Լիբկնեխտի և այլ ընկերվարականների:

Ամենից առաջ բանելը (работа) պարտաւորեցուցիչ է ամենքին—աչն է արական և իգական սեռի՝ 21 մինչև 65 տարեկան ունեցողներին: Երեխայքը և պատանիները ուսում են առնում հասարակաց ուսումնարաններում պետական ծախքով. ծերերը և պառւանները ապաստանւում են պետական ապաստանարաններում: Բոլոր շարժական և

¹⁾ Մոնտեզագցյանի հետեւալ աշխատութիւնները թարգմանւած են ռուսերէնի՝ Первѣй вѣкъ Экстазы чедовѣка, Счастье и трудъ, Большая любовь, Лицемерный вѣкъ և այլն:

²⁾ Sozialdemokratische Zukunftsbilder.

անշարժ գույքը և դրամագլուխը դառնում են համահավան (collectivité), Բոլոր տոկոսարերը թղթերը, արժեւորումները և ալլն և ալլն ոչնչացնում են, թափած դրամ՝ ոսկի թէ արծաթ և թէ թղթադրամ չը պիտի լինի։ Ի վարձատրութիւն իրանց աշխատանքի քաղաքացիները կը ստանան միայն մի ամսով (ալս կէտը նախատեսուած է՝ ալսպէս թէ ալսպէս հարստութիւն զիղելու առաջքն առնելու համար)։

Տները և հողերը տէրութեան սեփականութիւն կը լինին։ Բնակարանները բաժանում են վիճակով։

Բերլին քաղաքը տնօրինւում է ալսպէս. հաշի է առնւում թէ ինչքան տուն և սենեակ է հարկաւոր վարչութեան, ապատարանների, արհեստանոցների, ընդհանուր ճաշարանների և ալլ հաստատութիւնների համար։ Դիցուք տակին մնում է 1 միլիօն սենեակ։ Ապա բոլոր բանողները՝ ալն է 21—65 տարեկանները կստանան մի-մի սենեակ։ Մնացեալները կ'ապրեն համայնքով։ Ամուսինները կարող են ունենալ իրար կից սենեակներ։ Քաղաքում կը լինեն հազար ճաշարաններ և ամեն մէկում հազար զրացիներ ճաշ կը ստանան։ Հաշւում են կէսօրից մինչև ժամը վեցը ամենամօս ճաշարանում։ Հաշատուն մանեկիս զուք ստանում էք մի թւակիր տոմսակ և սպասում ձեր հերթին։ Որովհետև սպասողների թիւը մեծ է, ուստի պէտք է շտապ ուտել, ապա թէ ոչ վերակացուն կը խնդրի որ զուք վերջ դնէք ձեր որոճման։ Հաշի խորթիկների ցուցակը կազմւած է «ուտելի գէղնի» ցատուկ մինիւտրութիւնից, որը գիտնականապէս որոշում է ազոտալին և ալբումինալին նիւթերի անհրաժեշտ քանակութիւնը երջանիկ բերլինցիների հանապազօրեալ ճաշի մէջ և ալսպիսով կատարեալ հաւասարութիւն՝ կերակուրի նոյն քանակութիւնը և որակութիւնը, միևնոյն ճաշարաններում և միևնոյն ժամին։ Ալս բոլորից չետոյ դալիս է ալս միջնորդի միջից մէկի պատմութիւնը, ալն է մի նախկին կաղմարարապետի։ Սա ընդգրկել էր ընկերվարութիւնը մեծ սղեորութեամբ և խսկոյն հիւսթափել տեսնելով իւր լուսախաբութիւնը։

Նրան հեռացրին իւր հօրից և իւր զաւակներից։ Նա ալլ ևս չի կարող ձեռք բերել իւր դեքանչի ձեռքով կոպէկ-կոպէկ հաւաքած մի քանի հարիւր բուբուռ օժիտը։ Առաջ ինքը տէր էր—ալժմ մշակ է դառել։ Իւր բոլոր ունեցածից նրան թողել են միայն մի անկողին, 6 հատ աթոռ, մի սեղան և մի պահարան։ Նրան նշանակել են վերակացու արհեստանոցում ուր մշակները գալիս են միայն ժամանակ սպանելու համար։ Քանի որ զինը մէկ է՝ ոչ ոք մշակներից չի աշխատում խնամքով և շնորհքով բան չինել։ Վատնում են միմիայն ժամանակը, իջացնում և գողանում նիւթերը և գործիքները։ Ալս խեղճ կաղմարարի վոքրիկ աղջկան ալնպէս լաւ են խնամել ապատոմարանում որ նա ալնտեղ մեռնում է, խսկ միծ սողան լաջողում է փախչել Ամերիկա, ուր ընկերվարութիւնը չարմար հող չէր գտել իւր համար։ Քանի որ գիւղացիներին զօռով են ստիպել նոր կար-

գերը՝ երկրի մէջ եղած դժգոհութիւնը գնալով ընդհանրանում է: Երկրին կորուստ և մահնկութիւն է սպառնում: Դրսից ոչ մի ապրանք չի պահանջւում՝ մինչև ահն աստիճան վատ են պատրաստւում ալժամ երկրի արդիւնաբերութիւնները:

Դրութիւնը գնալով դառնում է անտանելի. արտահանութեան պահասը լրացնելու համար ստիպում են բանել 14 տարեկանից 75 տարեկաններին: Այդ ևս չի օգնում: Ծուլութիւնը վարակում է ամենքին: Առաջ են գալիս զանազան կուսակցութիւններ, ոմանք պահանջում են վերադարձ դէպի հինը, ոմանք աւելին են պահանջում քան ինչ որ է: Ներսը տեղի է ունենում մի ապստամբութիւն: Դրսից չարձակւում են թշնամիները: Բայց ալստեղ կտրւում է պատմութիւնը, որովհետև պատմող կազմարարը գնդակահար եղած մեռնում է Ռիխտերի ցանկութիւնից...

Անկասկած դորանով Ռիխտերը մեծ բան չ'ապացուցեց:

—Ամենքը և մանաւանդ իրանք ընդդոյնելիք չատ զարմացան, երբ քաղաքալին խորհրդարանի նոր անդամների $\frac{3}{4}$ ընտրւեցան անլաւտ առաջադիմականներից. իսկ մնացեալ $\frac{1}{4}$ ՝ դարձեալ անծանօթ չափաւորականներից: Մինչդեռ Լոնդոնը թէ պարլամենտի համար և թէ վիչեալ իւր խորհրդարանի համար ընտրում էր միշտ դէրք ունեցող և չափնի պահպանողականներին:

Այս ընտրութիւնները, որ գլխաւորապէս չաջողցրել են քաղաքական կլուքները—տու է տալիս Գլադստոնի կուսակցութեան թէ նոյն ուղղութեան մարդիկ կընտրւեն նաև 1893 թ. պարլամենտի համար:

—Ամենաւն ընթերցող Լոնդոնի մասին խօսելիս անպատճառ պէտք է մտաբերի Լոնդոնի տիեզերահռչակ մառախուղը, ահն բնական մառախուղը, որի դէմը առնելու միջոցներ չեն գտնւած և որը, բացի մարդկալին զոհերի պատճառ լինելուց, նաև ծախքի մէջ է գցում՝ քաղաքը օրը ցերեկով լուսաւորելու համար:

Բանից դուրս է գալիս, որ, բացի ալդ բնական մառախուղից, մի ուրիշ արեւստական մառախուղ ևս կա՝ Լոնդոնում, որը առաջինից ոչ պակաս վնասակար է և զօրեղ:

Այդ արեւստական մառախուղը Լոնդոնում սպառւող քարածուխից առաջացած ծուխ ու մուխն է: Լոնդոնը սպառում է թէ իւր գործարաններում և թէ տան օջաղներում և վառարաններում տարեկան մօտ 420 միլիոն փութ քարածուխ. օրեկան ասել է մօտ 1 $\frac{1}{8}$ միլիոն փութ: Որպէս զի ալս թւերը չափազանցրած չը թւան, շտապենք ասելու որ մօտ 4 $\frac{1}{2}$ միլիոն բնակիչ ունեցող քաղաքը իւր մէջ ունի 800.000 տուն: Օրեկան միլիոն փութ ալրւող ածուխի ծուխը բնական մառախուղից պակաս չէ: Հաշւած է, որ ալդ ծուխը պարունակում է իւր մէջ 12.000 փութ փոշիա-

ցած ածուխ: Եւ ապա ալս ամենը, թէ ծծմբալին ծուխը և թէ փոշիացած ածուխը նստում է տանիքների վրա, պատուհանների վրա, տարածւում ամենալն տեղ և լցնում մարդկանց թոքերը: Լոնդոնի չնչեղ ոգը ապականւում է քարածուխի ալրակուց և առաջացնում տարեկան մօտ 4 միլիոն փութ ածխաթթու: Յեթև և գրակացնողները կը բացականչեն թէ մարդիկ ուրեմն պէտք է կոտորեն Լոնդոնում — մինչդեռ իրողութիւն է, որ Լոնդոնը ամենաքիչ մահացութիւն ունեցող քաղաքներիցն է: Ընթերցողը տեսաւ թէ ինչ ահագին քանակութեամբ է սպառւում քարածուխը Լոնդոնում և չի զարմանալ որ անգլիացիք ամենալն անդամ չառ վատ և անեղանելի դրութեան մէջ են լինում, երբ, ինչպէս նորերա, ածխահանքերում՝ ալլ և ալլ պատճառներից զրգւած — զործագողներ են պատահում: Վերջին անգամ զործագող արածների թիւը հասնում էր 400,000-ի. ինչ ասել կուզի որ ամենից չառ, ինչպէս միշտ և ամենալն դէպքում, վնասւում են չքաւորները զործագողի պատճառով՝ քարածուխի թանգանալովը:

Լոնդոնում հաստատւած անխոնջ Մ. Չերալդ՝ ներկալ գտնւելով ն. տ. 13 Ապրիլի Folklore-ի ժողովին խօսել է հանգուցեալ Մկրտիչ Էմինի, ալթմ հանգուցեալ Սարգիս Սարգսեանցի և Գարեգին Վ. Սրանձրեանցի աշխատութիւնների մասին: Ընդամին նա առաջարկել է ընկերութեան նւէր թէ Ս. Սարգսեանցի («Չօկերի բառբառ») աշխատութիւնը և թէ վիչեալ 3 հալերի լուսանկարները, որոնք և ընդունւել են շնորհակալութեամբ: Ալն դասախօսութիւնը որ Մ. Չերալդ 1891 թ. մալիս 6 արել էր Մանչեստրի Աշխարհագրական ընկերութեան անդամների առաջ՝ նոյն ալդ դասախօսութեան մի մասը վիչեալ ընկերութեան հրատարակութեամբ նորերս լոյս է տեսել հանդերձ Հալաստանի մի քարտէզով:

Մինչ ալս մինչ ալն՝ փոքրիկ Զւիցերիան առաջ է ընթանում առաջադիմական շաւղով: Յիւրիխի համալսարանը որը, քսանեօթ տարի սրանից առաջ (1864 թ.) առաջինը բաց արաւ իւր դռները գեղեցիկ սեռի համար — ընդունել է իւր դասախօսների շարքում իբր պրիւատ դոցենտ (պրոֆեսորութեան առաջին աստիճանը) տիկին Կեմպին'ին (Kempin), որի առաջին դասախօսութիւնը տեղի է ունեցել ն. տ. մարտի 5:

ՕՐԷՅՕՐ

(ԵՍԵՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

1892 թ. Ապրիլ 25.

—«Ի՞նչ «Օրէցօրի» ժամանակ է, ասում էր ինձ «Մուրճ»-ի խմբագիրը ճոճնւար ամսին: Ջրօրհնեաց տղը տիրում է չորս կողմ. երկու մեռելոց ունեցանք մէկի փոխարէն՝ իսկ դուք ուզում էք որ ես «Օրէցօր» տպեմ»: Փետրւար ամսին ես նրանից լսեցի հետեւեալը.

«Շատ զարճալի էք դուք, պ. Եսեմեան. հրապարակի վրա կան լուրջ խնդիրներ, մեր խմբագիրները դրել են իրանց քւէտովները, հասել է զրանց բոպէն—ու բի ու նոտ տու բի ¹⁾ Թիֆլիսի թեմական պատգամաւոր՝ իսկ դուք ժամանակ էք գտնում Օրէցօր գրելու»:

Մարտ ամսին ես ինքս չը կամեցայ Օրէցօրս տպած տեսնել նոյն №-ի մէջ ուր հաղորդւում էր «Մուրճ»-ի աշխատակիցներից մինի—այն է Սարգիս Սարգսեանցի մահը:

Այսօր եռամսեալ բազմաթերթ օրէցօրիցս քաղածք անելով ձեզ ներկայացնում եմ միայն այն կտորները, որոնք դեռ չեն կորցրել իրանց թարմութիւնը:

Յոճնւար 3: «Ձը գիտեմ ի՞նչ մարդասիրական զգացմունքից թեկադրւած Ս. Սինոդը արգելք է դնում սուաջս խանդարած առողջութիւնս վերականգնելու, կարծես պատւիրելով ինձ անձնասպան լինելու, որ երբէք չանձն առնուլ չեմ կարող, համարելով այն ընդդէմ ամենայն մարդկային և աստուածային օրինաց, որանք իւրաքանչիւր մարդու վրա պարտք են դնում խնայել կենաց իբրեւ աստուածային պարգևի» ²⁾:

Այս տողերը պատկանում են մեր հինաւորց Ami ³⁾ Պետրոսին:

Իրաւ է՝ «Արարատ»-ի այն տետրակը մեզ հաւատացնում է որ վիշեալ

¹⁾ To be or not to be—Համլէտի խօսքերը՝—լինել թէ չը լինիլ:

²⁾ «Արարատ»—1891 թ. դեկտեմբեր:

³⁾ Ամի՛ ֆրանսերէն — ընկեր:

գրութիւնը Ս. Սինոդին ուղղելով—Պետրոս ամին «ինքնագլուխ» է հեռանում էջմիածնից առանց արձակուրդ տոնալու, բայց և աչնպէս մենք իմանում ենք շնորհիւ «Արարատ»-ի խմբագրութեան, թէ Պետրոս ամին «Ներուաղէմ ուխտ չէր գնացել (ինչպէս որ ալդ հաստատում էին շատ լեզուները), ալ Պօլիս էր գնացել հեքիմբաշիների հետ խորհրդակցելու իւր «խանդարւած առողջութեան առաջն առնելու համար»...

Փետրւարի 5: Այսօր ես պատահեցի Խ. Մալումանցին և մեր մէջ տեղի ունեցաւ հետեւեալ խօսակցութիւնը.

—Առացէք, խնդրեմ, պ. Մալուման, ինչով վերջացաւ ձեռք գէձ եղած դատը:

—Դատարանը ինձ արդարացրեց:

—Ի՞նչպէս:

—Պր. Նախագահի հարցին թէ արդեօք ես աչքի առաջ ունէի ուր Սպանդարեանցին «Մշակ»-ի մէջ «Արագուրի ետեից»—իմ լօղւածները գրելիս—եւ պատասխանեցի—ոչ:

—Բայց մի՞թէ ձեր «Արագուրի ետեից» լօղւածում վշատակւած «Արշակաւանեաններ» խօսքը Սպանդարեանցի խմբին չէր վերաբերում և Զէլթունցիների օգտին փողեր հաւաքող և հաշիւ չը տուող ակնարկւածը—չէ որ Սպանդարեանն է:

Այո—դէ ալդ ամենքը դիտեն. բայց թէ պ. Նախագահը ինձ հարցրեց թէ արդեօք ալդ լօղւածները գրելիս ես աչքի առաջ ունէի Սպանդարեանցին թէ ոչ—և սրովհետեւ պ. Սպանդարեանցը աչքիս առջև չէր իմ լօղւածները գրելիս—չէ որ ես ամենամաքուր խղճով իրաւունք ունէի պատասխանելու թէ «եւ իմ լօղւածները գրելիս պ. Սպանդարեանցին աչքիս առաջ չ'ունէի»:

—Բայց...

—Էլ ի՞նչ բայց... ես արդարացաւ և էլ «բայց»-ի տեղ չը մնաց:

—Ղոչաղ, պատասխանեցի ես:

Փետրւար 15: Վերջապէս այսօր ¹⁾ աչն է ապրիլ 2 ընտրութիւններից 13 օր տնց—պ. Սպանդարեանցը 5 սիւնանոց ահագին առաջնորդով փորձ է փորձում «կարճ կտրելով» ապացուցանել որ իւր՝ մի ձայնով ընտրւելը պէտք է «միաձայն ընտրութիւն» համարել:

Յօղւածը վերջանում է աչպէս՝ «Հասկացողը՝ կը հասկանալ»:

Եթէ հասկացողներին հասկացնելու համար—հարկաւոր եղաւ 5 ահագին սիւնեակներ գրել—ապա քանի հարիւր սիւնեակներ պէտք է չարիւ՝ չը հասկացողներին հասկացնելու համար:

Մարտի 8: Մարը ոտքին չի դիպչիլ—մարդս մարդուն չի դիպչիլ. այս հին առածը էլի հաստատուեց:

¹⁾ «Նոր-Դար» № 27:

Բայց թէ ազդ որքան ժամանակ կը տեւի:

Մարտ 20: Գուք կարծում էք, ընթերցող, թէ եւրոպական լուսաւորւած ազգերը գրականութիւնն ունին: Սխալւում էք:

Նոքա չուենի գրականութիւն, որովհետեւ... որովհետեւ նրանց երգիծական գրողները ջնջել են իդէալական գրողներին, թատրոնականները ոչ թատրոնականներին, ոտանաւորով գրողները արձակ գրողներին և այսպէս իրար ջնջելով մէջ աեղ գրականութիւնն չեն թողել:

Եթէ վերջապէս ինձ չէք հաւատում, ընթերցող, գիմեցէք մեր «Ձուր Զոյսերի» հեղինակ Երվանդադէին, որը ձեզ կը կրկնի իւր այսօրւայ ասածը Հրատարակչական ընկերութեան ընդհանուր ժողովի նստին թէ՝ «Տառասկոնցի Տառասուէնը ջնջում է» «Օրլէանի կոյսին» և «Օրլէանի կոյսը» ջնջում է «Տառասկոնցի Տառասուէնին»:

Այսպիսով ընթերցող—եթէ դու կարդացել ես վերալիշեալ երկու գրքուկները և եթէ, գրանցից մէկը քեզ ծիծաղեցրել է իսկ միւսը ողետել է—չը հաւատաս քո ստացած տպաւորութիւններին. դու ոչ կարող ես կարդալ ազդ գրքուկները և ոչ էլ որ և է բան զգալ, որովհետեւ նրանք իրար ջնջել են. իսկ եթէ իրաւ դու ուզում ես ազդւած լինել մի գլուխ համորնաթիւական թերթեր կարդալ, թէ գիշեր թէ առաւօտ, թէ ձմեռ թէ ամառ և ստացած տպաւորութիւնդ չի ջնջւել:

Մարտ 22: Ննթադրեցէք որ դուք ներկայ էք մի ժողովի (գիցուք թատրոնականի) ուր խօսւում է աչն ամենի մասին թէ ինչ միջոցներով ոտի կանգնեցնել և ոտքի վրա պահպանել մի դործ (գիցուք թատրոնը) և քանկարծ հանդիսականներէից մէկը վեր կենալ ու ասի.

«Պարոններ—Գուք ով էք:

«Գուք ուզում էք այս գործին փող նւիրել՝ հարկաւոր չէ. մենք ունինք 700 ու՝ մին, մենք ունինք 100 ուրլի, որ հիմա՞ գտնուեցա՞ւ երկու, պ. Փիթօեովը մեզ խոստացել է 300 ուրլի՝ աչս երեք, դերասանները մեր օգտին ձրի մի ներկաւացում կը տան՝ աչս չորս. և աչս բոլորը մեզ հերիք է և դուք ձեր փողերով մեզ հարկաւոր չէք:

— Ի՞նչ ալանդակ մտքեր, կը բացականչի ընթերցողը:

Իսկութիւնը սա է որ աղպլիսի մտքեր չաւտնող կար—Թաւարէ-գեան անունով մէկը:

Մարտ 25: Թիֆլիսի փողոցները վիշեցնում են Սահարալի աւազոտ անապատները: Մալրաքաղաքի աստղաբաշխները իզուր էին գուշակել Նովկասի համար մթնոլորդալին պեռտոււրացիւաներ. գիծ մարտը միշտ գիծ կը մնալ և պէտք է տեսնել թէ ինչպէս ալժմ նրա գիծ քամիները փոշու սարեր են բարձրանում—փոշու՝ որ խծկւում է մարդու բերանը, ականջը, քիթը, մազերը և ալն:

— Բայց միթէ ձեր փողոցները չեն ջրում, կը հարցնի ընթերցողը:

— Ոչ, ընթերցող—ջուրը պահում են չուլիս, օգոստոս ամիսների համար:

Ապրիլ 1: Ես հանդիպեցաւ ալսօր Անդրոնական դրաւաճառանոցում
պ. Գր. Արծրունուն:

— Ասացէք խնդրեմ, պ. Արծրունի, ալդ Բնչպէս է որ զուք գնում
էք ձեր քւէտուիքը և եթէ թեմական պատգամաւոր ընտրւէք՝ Էջմիածին
պիտի գնաք— մինչդեռ տարիներ շարունակ զուք ասում էիք թէ՝ «Ես Էջ-
միածին գնացողներիցը չեմ»:

— «Բիւմարկը իւր իշխանութեան գաղաթնակէտին եղած ժամանակ
գերմանական ընդհատագում ասել էր իւր մասին՝ «Մենք Կանոտա գնա-
ցողներիցը չենք»: Բայց երբ քիչ չետոյ հանգամանքները փոխւեցին, նա
համակերպեց ալդ նոր դրութեան հետ և հաշտութիւն կապեց Հռոմի պապի
հետ: Ես ինքս թէն շատ եմ քննադատել Բիւմարկի ուղղութիւնը, բայց
ալս խնդրում ես հետեւում եմ նրա օրինակին:

Ձարմանք բան՝ բաժանւելով Արծրունուց ես սլատահեցի պ. Արզարին:

— Ինչպէս հաւանեցիք իմ կազմած կաթողիկոսական ցուցակը:

— Հիանալի է կազմած. վարպետը իսկոյն ճանաչւում է: Բաղմաճա-
շակի գոյն և համ ունի ձեր ցուցակը:

C'est ça, vous y êtes ¹⁾ բացականչեց պ. Արզարը. ուրեմն զուք իմ
կողմն էք, շարունակեց նա:

— Ոչ:

— Իսէր Աստուծոյ. ալս անգամ իմ կողմն եղէք, պաշտպանեցէք ինձ.
Երգում եմ ձեզ իմ «Փորձ»-ով, իմ «Արձագանք»-ով, իմ «Արմենիչէ Բիւ-
լիօտեկով» ²⁾, որ ալս անգամ ամենավերջին անգամն է, որ ես պատգա-
մաւոր եմ ուզում ընտրւել— ալն էլ Արծրունու ջիգրու, որ սա իմ ամենա-
վերջին ֆորտելն է և ես ալսուհետե վերջ կը տամ իմ գալաճտերեհական
ձևերին à la чортъ подобъ որ ես բանեցրել եմ սկսած ձախաւոր Զուբա-
լովից մինչև բաղաձախ Սպանդարեանը:

Մի քանի քալը հազիւ էի արել, երբ զիմացս կանգնած տեսաւ Սպան-
դար Սպանդարեանցին նահանգական դատարանի մօտ:

— Այդ ինչ դաշնակցութիւն էք կապել Արզարի հետ:

— Բաղաքական կամ, աւելի ճիշտ ասած, կաթողիկոսական:

— Բայց միթէ չէք իմացել Արզարի ասածը ձեր մասին և միթէ
չը գիտէք որ նա ձեզ դէն կը չալուտի կաթ. ընտրութեան լաջուր օրը:

— Նա զօռով ուզում էր պատգամաւոր ընտրւի, իսկ ես մտածում
էի դրա համար բաւական է որ ես ընտրւէի Արզարի փոխանորդ:

Ապրիլ 2: Խեղճ Սարգիս Սարգսեանց: 12—13 տարի սովորել գիմ-
նազիպում և համալսարանում, ապա 13 տարի ուսուցչութիւն անել Ռու-

¹⁾ Այո, լաւ էք իմացել:

²⁾ Armeniche Bibliotek.

սաստանի մի աննշան քաղաքում և մեռնել մի շարթւայ հիւանդութիւնից ցնտու:

Ես նրան միշտ չարգում էի նրա անկեղծութեան և շխտակութեան համար:

Հանդուցեալը մոլեռանդ վազան էր և նրա լուրածները «Մուրճ»-ի խմբագիրը տպում էր նրա ուղղագրութեամբ, բայց «ոչ ի խրախուս ալոց»:

Ս. Սարգսեանցի՝ իւր մասնագիտութեան սիրահար և մոլեռանդ վազան լինելը երևում է նաև հետեւեալից. չնորհաւորելով «Մուրճ»-ի նոր հրատարակչի ամսագրական ձեռնարկութիւնը, նա հարցրել էր՝ արդեօք ձեր կապած պաշտանում խմբագրի հետ կա՞յ մի կէտ որ պահանջում լինի վի- և ոչ լ-ի գործածութիւնը:

Ապրիլ 20: Վերջապէս... վերջապէս Ս. Սինոզը վճռեց որ 1) 51 թիւը չի կազմում 103-ի երկու երրորդականը,

2) 46 թիւը 96 թիւի կիսից աւելի չէ ¹⁾,

և ալ մի քանի նոյնքան պարզ խնդիրներ, որոնք սակաւն շատերի համար մոռն էին, որովհետեւ զրանց մանրամասն բացատրութիւնները չէին գտնում տէրութեան օրէնքների մէջ: Օրինակի համար ալն, որ ծխական պատգամատուր ընտրւած են միաւն նրանք, որոնք ընտրւած են և ոչ թէ նրանք, որոնք չեն ընտրւած...

Ապրիլ 22: Թեմական խորհրդատուր ընտրութիւններին՝ խորհրդատուր եօթ թիւը մեծախորհուրդ դեր է կատարել. եօթը անգոյն հողիներ սպիտակ քէշներ են տւել Աթորունուն (որի կաթողիկոսացուներն են Խրիմեան և Արիստակէս) և Աբգարին (որի կաթ. ցուցակի մէջ չը կալ Արիստակէս, բայց կալ Աշըղեան):

Ընտրութեան խորհրդատուութիւնը բազմակողմանի է, եթէ ի նկատի աւնեւելու լինենք, որ ալք օրւայ ընտրութիւններին ներկայ էին մամուլի եօթ ներկայացուցիչներ և Տաճկահայ պատգամատուրներից եօթ հոգի հիւրեր:

Ապրիլ 25: Որ և է դադափար կրնաք ինձի տալ ձեր թերթերու մասին, հարցրեց ինձ տաճկահայ պատգամատուրներից մէկը:

—Ամենաստուգ դադափարը—պատասխանեցի ես նրան, ցուց տալով մեր քաղաքային լտբորատորիայի կառավարիչ Ալիբեկեանի անալիզը: Ասիկաջ մեր նորահաստատ լապոռաթորայի դիրեկթիօն Տիար Ալիբեկեան էֆէնդիին արած վերլուծումն է, աշխատեցի ես պարզաբանել աչն թուղթը, որ ես ներկայացրի իմ տաճկահայ եղբոր և որի վրա գրւած էր.

Թիֆլիսի հալ թերթերի անալիզը

Իրողութիւնների ածխաթթւային ազաւաղումն 50%

Մկնդեղալին կեղծութիւն. 49%

¹⁾ «Մուրճ» № 2, Երես 330—331:

Սուրբ և արդար գործին ծառայութիւն . . .	0,01
Ազնւութիւն	0,01
Շիտակութիւն	0,01
Չանազան խառնուրդներ	0,07
— Իսկ և իսկ մերիններուն նման, բոլորդաց տաճկահալ եղբայրս, առանց փոտ ահանալու ինձ ուղղակի ասել:	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ծննդեան 72-երրորդ տարեդարձին Թիֆլիսի հասարակութիւնից 23 հոգի շնորհաւորական հեռագիր ուղարկեցին Երուսաղէմ մեծ հային, ապրիլի 4-ին: Հետեւալ օրը «Մուրճ»-ի խմբագրի անունով ստացւեց սրբազան Խրիմեանից հետեւալ պատասխանը՝

«Շնորհակալ եմ, օրհնում եմ իմ բոլոր զաւակներին: Խրիմեան»:

Երուսաղէմ ուղարկած հեռագրի բովանդակութիւնը հետեւալն էր՝

«Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեանին: Մեր թանկագին Հայրիկի ծննդեան օրը ջերմ աղօթքներ ենք ուղղում Նախախնամութեանը, որ Նա երկար տարիներ պահպանէ Ձեր թանկագին կեանքը հայոց ազգի և եկեղեցու համար»:

ՄԵՐԱՏ ՇԱՀԱԶԻՉԵԱՆԻ լօբելեանի օրը, ապրիլի 8-ին, մենք ուղարկեցինք Մոսկւա լօբելեանաւոր կոմիտեան հասցեով հետեւալ հեռագիրը.

«Մուրճ»-ի խմբագրութիւնը և խմբագրական խորհուրդը շնորհաւորում են Ձեզ Ձեր լօբելեանով սրբէս բանաստեղծի, հրապարակախօսի և դատաւարակի, ցանկանում ենք Ձեզ երկար տարիների կեանք մեր նոր գրականութեան և նոր սերնդի համար Կեցցէ Շահազիզ»:

Մեծարգոյ լօբելեարից նոյն օրը ստացանք հետեւալ հեռագրական նամակը՝

Մոսկւա, 9 ապրիլի, 6 ժամ 50 րոպէ երեկոյեան:

«Ապրիլի իննին, իմ գրական և մանկավարժական գործունէութեան ձրեանամեակին՝ շատ հիմնարկութիւններ, բնկերութիւններ, մամուլի օրդաններ, որպէս նաև առանձին անձեր բարեհաճեցին արժանացնել ինձ ամենաջերմ և զգացած ողջօղջներին: Մանաւանդ թանկ է ինձ այն, որ իմ համեատ անունի հետ կապեցին նաև բարի սկզբնաւորութիւն բարեգործական նպատակով: Կարելիութիւն չունենալով խորա-

քանչիւրին առանձնապէս արտապատել շնորհակալութեանս զգացմունքները, որոնք լքցնում են իմ սիրտը, խնդրում եմ Զեղ, մեծապատիւ Տէր, լալանել ամենքին, որոնք ինձ այս օրը լիչեցին, իմ սրտանց ողջոյն: Սմբատ Շահ-Աղիզ»:

Պր. ՌԱՖԱԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ օգտին ստացանք պ. Աւետիս Զարգարեանցից 5 ռուբլի: Ընդամենը այդ նպատակի համար ունենք մեզ մօտ 10 ռուբլի:

ՎՐԻՊԱԿՆԵՐ: «Մուրճ» № 3 ի երեսի գոյնաւոր թղթի վերաջ տպւած է՝ № 3, 1892 թ., ապրիլ. ուղղելու է՝ մարտ: Այդ սխալը հնար չեղաւ ուղղելու, որովհետեւ № 3 լոյս տեսաւ Զատիկի Նախորդ օրը, երբ տպարանում այլ եւ չէին բանում: Սպիտակ երեսի վերաջ ուղիղն է տպւած:

Ամուսնացողներին մէջ երես 485, սող 14 տպւած է «Ես աչտանդ»..., պէտք է կարդալ՝ «Եւ աչտանդ»...: Նոյն երես սող 20 տպւած է՝ «որոնելով», պէտք է կարդալ «որոյնելով» և նոյն երեսում տպւած дезинфицировать պէտք է կարդալ дезинфицировать.

Արտասահմանեան քրոնիկում երես 499 սող 3 ներքեից (ծանօթութեան մէջ) տպւած է՝ «Լատիներէն—կենդանի», պէտք է լինի՝ «Լատիներէն—հողի»:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

Բ. Կ.

1. «ՄՈՒՐՃ» տաճարի, 1889 թ., երկու հատորով . . . 12 —
 Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . . 7 —
2. «ՄՈՒՐՃ» տաճարի 1890 թ. Լաիանի, երկու հատորով . 12 —
 Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . . 7 —
3. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ՅԵՅԵՐ» (վէպ) 1 —
4. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Ղ. Ղարցի)՝ «Մանուկների
 մարտողութ. գործարանների հիւանդութիւնները» . . — 05
5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս.—«ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկե-
 ների կեանքից 1 —
6. ԼԷՑ.—«ԿՈՐԱՄՆԵՐ» (վէպ) — 50
7. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս.—«ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ»
 (կեանքից պատկեր) — 40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՅ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» . — 60
9. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ԲՂԴԵ», վէպ 1 20
10. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.—«ԽԱԹ-ՍԱԲԱ» (հայ բոշան. կեանքից — 15
11. ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԼԻՆ Մ.—«ՀԵՂԻՆԵ» (մեծ վէպ), ա. մասը — 50
12. » » » » բ. մասը — 75
12. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, Յ.—«ՍԵՒ-ԼԵՈՆՅԻՔ» (տոհմագ. պատկ.) — 15
13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ» — 03
14. » » «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» — 03
15. » » «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ» — 05
16. » » «ԾԱՆՐ ՔԱՐԸ» — 03
17. » » «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ» — 03
18. » » «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ» — 03
19. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ.—«ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ» — 15
20. ԲԱԼԱԴԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.—«ՄԻԿՐՈՐՆԵՐԸ» — 10
21. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ» — 10
22. ՏՈՒԼԵՆ, ՄԱՐԿ.—«ԶԱՐԺԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ» — 15
23. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ» — 20

Դիմել՝ ВЪ Редакцію журнала „МУРՃ“. Վճարել կարելի է նաև
 պոստի մարկաներով:

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒԵՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՅԱԾ

աշխարհի մէջ կարեմեքեաների բոլոր ցուցանանքներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆՆԵՐԻ

կարևոր ընկերներ առան տիկիճների և աղնիւ օգնականներ
բոլոր արհեստավարների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում, Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գո-
լովիսկի պրօսպեկտի վերայ, Մերլմանովի տան և նրա բաժանմունք-
ների մէջ:

Բազում, Մերայէլեան փողոցում,
Մերզա Աւագեանի տ.
Քուծայիսում, Բուլվարի գէտ
Չերեկովի տ.
Բաժանում, Լոբի-Մերլեան փո-

ղոցում, Կուզարի տ.
Աստաբաղում, Գոսպինի գետը №
2, Տ. Աֆանասի:
Նրեանում, իմ ճամբարը, զարժա-
կաների մօտ:


և նրանց ճանապարհորդող Գործակալներ Տօր

Միջին, եւ ՀԻՍՏՈՒՅԻՆ, ԵԻՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ
ԳԼԽԱՌ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ


Գ. ՆԻՅԳԻԼԻՆԳԵՐ

Գնողները կարող են, եթէ կամենում են, զրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, ապա է՛ չարաթով կամ
ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրուականով զրամը վճարելու համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս նա
առեղներ, թել, մետաքս և ալ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաշտախարհ գնելով:







„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Բ Ա Յ Ի Ա Մ Է

Հարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար գիմն է՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ } Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ. — Կենտրոնական գրալաճառանոց:

» պ. Յովհաննէս Թումանյան, Սիօնի փողոց № 27:

ԲԱԲՈՒ. — պ. Աւետիս Դաւթեանց (Մարդաս. ընկ. ընթերցարան):

» պ. Ստեփան Սուլիանեանց („Надежда“ ընկ., Набережная:
ՌՈՍՏՈՎ. — ՆՈՐ-ՆԱԽՋԵՒԱՆ. — Եղբ. Պ. Լ. Դ. Ունանեաններ:

ԲԱԹՈՒՄ. — պ. Սարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Մովեաններ):

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. — պ. Ստեփան Արասխանեանց:

ՄՈՍԿՒԱ. — պ. Վարդան Թումանեանց (Чистые Пруды, д. Тупицына

» պ. Ստեփան Վարդապետեանց, (В. Харитоньевскій, № 6):

ՕՂԵՍԱ. — պ. Միքայէլ Մուրադեանց (գրասեն. եղբ. Մովեաններ):

ԹԱԻՐԻՋ. — պ. Ասատուր-բէկ Միքայէլեանց:

ՉՄԻՐՆԻԱ. — պ. Յ. Տէր-Միրաքեանց (Մեսրոպ. վարժարան):

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. — պ. Յակոբ Յ. Տէր-Պօղոսեանին:

ՄԱՐՍԷՅԻ. — պ. Սիմէօն Միրզաբեանց: Rue St Jacques № 86:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտանւում է Թիֆլիս, Վեկամիւնեան փողոց, տուն № 8: